Էջմիածին



1966

ՌՆԺԵ
ԻԳ ՏԱՐԻ

Մայիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս ԷՋՄԻԱԾՆԻ

Ե

1966

ՈՒ-1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Ամպ և ճար 3

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Իրանի հայոց լեմի նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանին 6

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ Եպիսկոպոս Մաճուկյանին 8

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆոռնիայի լեմի նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյանին 10

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Վարդանանց ասպետներին՝ կաղամակերպության հիսնամյակի առթիվ 12

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ այցելությունը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների սովետի նախագահ Բաղալ Մուրադյանին 14

ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՔԱՐՅԱՆ— Ուխտագնացություն դեպի Սանահինի և Հաղբատի պատմական վանքերը 15

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 1965 թվականի դեկտեմբեր 14 թվակիր նամակին պատասխանում է Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսը . . 20

Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը Մայր Աթոռում 23

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 25

ԵՂԻՎԱՐԴ— Լեռը 26

Հ. Ա. ՍԻՐՈՒՆԻ— Կոմիտասին հետ 28

Համաստեղի հոբելյանը 33

Ա. ԱԼԻՔՅԱՆ—Հայ գյուղի անենամ սենգանարը 36

Ռ. Ս. ՂԱՋԱՐՅԱՆ—Նորայր Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայերէնի» աշխատության մասին 40

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ—Ներսես Աշտարակեցին և Թիֆլիսի հայոց ուսումնարանի հիմնադրումը 44

Ս. ՔՈՂԱՆՋՅԱՆ—Ցրանսիլվանիայի հայերի պայքարը ազգային ինքնուրույնության պահպանման համար 54

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ 61

Խմբագրության հասցեն՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1966 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱՋԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՄՊ ԵՎ ՀՈՒՐ

(Համբարձման և Հոգեգալստյան տոների առթիվ)

Հինգշաբթի կամ Զատկի վեցերորդ շաբաթվա հինգշաբթի օրը նվիրված է Փրկչի համբարձման հիշատակին:

Համբարձման տոնը փակում է Քրիստոսի երկրավոր տնօրինությունների և ավետարանական պատմության շրջանը:

Սուրբ հարության մեծ ու պատմական դեպքից անցել էին քառասուն օրեր, որոնց ընթացքում հաճախ հարուցյալ Տերը, խորհրդավոր, բայց միշտ մարդկային կերպարանքի տակ, բազմիցս երևաց վշտից հուսահատված Իր աշակերտներին, «որոց յանդիման կացոյց զԻնքն կենդանի, յետ չարչարանացն իւրոց ի բազում արուեստս, յաւուրս քառասուն երևել նոցա», խոսեց նրանց հետ «վասն արքայութեան երկնից», նրանց վերահաստատեց իրենց առաքելական կոչման և հավատի մեջ: Փրկչի քառասնօրյա երևումները, Նրա անկասկածելի ներկայությունը հաստատեցին առաքյալների մտքում ու գիտակցության մեջ, թե անհավատալին իրականացել է հրաշքի ստուգությամբ («արդարև յարեաւ Տէր»), և խաչի ու մահվան մթության հաջորդել է գալիք պայծառ օրերի հավերժական լույսը, իրենց կյանքի բոլոր օրերի վրա:

Փրկիչն Իր երկրավոր կյանքի գեղեցկագույն օրերն անցկացրեց լեռների բարձունքների վրա: Նա սիրում էր առանձնանալ լեռների լռության մեջ, լինել երկնքի դրացնությանը մեջ:

Ավետարանը որպես նոր կյանքի պատգամ քարոզվեց Երանության լեռան բարձունքից: Փրկիչն Իր աստվածային վեհությունը ցույց տվեց Թաբոր լեռան վրա՝ «ի սուրբ լերինն»: Նա Իր արյունը թափեց Գողգոթայի բարձունքում և հարությունից հետո դարձյալ աշակերտներին «ժամադիր եղև ի Գալիլիա, ի լեառնն»:

Համբարձման ավետարանական դեպքը ևս կատարվեց լեռան բարձունքին:

Մայիսի պայծառ առավոտներից մեկն էր, օրը հինգշաբթի: Հիսուս Իր առաքյալների հետ մտերիմ արահետներով բարձրանում էր Ձիթենյաց լեռը, անցնելով Գեթսեմանիի ձորից, ուր անցկացրել էր իր երկրավոր կյանքի վերջին տագնապալից գիշերը:

Քայլում էին լուռ, խոհուն: Առաքյալները շրջապատել էին Վարդապետին, իսկ Նա խոսում էր նրանց, մինչ պայծառանում էին աշակերտների դեմքերն ու սրտերը և իրենց առաջ բացված էին տեսնում մեծ գործի

դաշտը: Հասան լեռան բարձունքին: Երուսաղեմը փռվել էր նրանց նայվածքի տակ. ահա Սողոմոնյան Տաճարը, աշտարակներն ու գմբեթները, ահա հայրենի քաղաքներն ու գյուղերը, Հորդանանն ու Մեռյալ ծովը: Հիսուս, վերջին անգամ լինելով, Իր աշակերտների մեջ էր գտնվում: Լեռան բարձունքին, Փրկչի հրաժեշտի խոսքերը խորապես հուզիչ էին, ուղղված առաքյալներին, որոնք այդ խոսքերի լույսը պետք է տանեին աշխարհին, նահատակության, արյան և կրակի միջով:

Տխուր էին և՛ Վարդապետը և՛ առաքյալները: Մոտեցել էին բաժանման վայրկյանները: Ամեն բաժանում իր մեջ ունի իր տխրությունը և վիշտը:

Բայց նրանք զգում էին միաժամանակ, որ ավելի մոտ են Հիսուսին քան երբևէ և ոչ մի ուժ պիտի չկարենար իրենց բաժանել Փրկչից:

Նա շրջապատված յուրայիններով, խոսում էր հուսով, հավատով, սիրով, ու պատվիրում «յԵրուսաղեմէ մի մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր»:

Առաքյալները լուռ էին երանական տխրությամբ: Ծանր էր պահը, բայց տարորեն գրավիչ ու սրտառուչ: Այնուհետև Հիսուս տարածեց լույսերով թաթավուն Իր ձեռքերը և օրհնեց բոլորին ու ասաց. «Կբաժանվեմ ձեզանից, հավիտենապես ձեզ հետ միանալու համար. ճշմարտությունը կթողնեմ ձեզ որպես առաջնորդ»:

Ու հազիվ Իր հրաժեշտի տաք խոսքերն ասած, աներևութանում է հուշիկ «փառօք յերկինս»: Լուսավոր մի ամպ Նրան առնում է իր ճերմակ թևերի վրա, ինչպես Թաբոր լեռան վրա պայծառակերպության առավոտը. «ամպն կալաւ զՆա յաչաց նոցա»:

Երկինքն այնքան մոտ ու շոշափելի չէր եղել առաքյալների սրտին, ինչպես Համբարձման այդ առավոտուն: Նրանց սրտում, հոգում, ամբողջ էության մեջ հնչում էր լուսավոր ուրախությամբ Փրկչի վերջին և անսուտ խոստումներից մեկը. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի»: Փրկիչը «հաւատարիմ եղև աշխարհի և համբարձաւ փառօք», բայց **Նա միշտ ներկա է առաքյալների սրտում և հոգում, ներկա է նրանց գործի ու խոսքերի մեջ, ներկա է աշխարհում և մարդկության մեջ, ներկա է մանավանդ Իր հիմնած Եկեղեցու մեջ:**

Փրկչի համբարձումից հետո սկսվում է Եկեղեցու առաքելական գործունեության շրջանը:

Քրիստոս ղեկավարում է Եկեղեցուն Իր պատգամներով և Ս. Հոգու զորությամբ, որ իջավ առաքյալների վրա Պենտեկոստեի տոնի օրը, Համբարձումից 10 օր հետ:

Առաքյալները, մտքով ու սրտով լուսավորված, սպասեցին Երուսաղեմում «աւետեացն Հօր», ստանալու «Զօրութիւն ի հասանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր» և լինելու «վկայք յԵրուսաղէմ և յամենայն Հրէաստանի... մինչև ի ծագս երկրի»:

Անցան աղոթքի, ներանձնության, անձկագին սպասման տասը օրերը, որոնց ընթացքում «ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս...»:

Քրիստոնեական Պենտեկոստեն տոնն է առաքյալների վրա Ս. Հոգու հեղման, այսինքն քրիստոնեական օրենքի տվչության, Նոր Ուխտի հաստատման և Եկեղեցու հիմնարկության:

Սինա լեռան վրա, դարեր առաջ, նույն օրը Եհովան օրենքը տվեց, իսկ Վերնատան մեջ Աստված Իր **Ս. Հոգին**, շնորհքը տվեց, «զՀոգին ճշմարտութեան որ Ի Հօրէ ելանէ»:

Վերնատան մեջ Ս. Հոգին իջավ առաքյալների վրա, որպես մարդկային մտքի ու սրտի վրա ներգործող աստվածային **էություն**, որ պայծառացնում է մարդու միտքը, սիրտը, ընկալելու գերագույն ճշմարտությունները, մաքրող, սրբող հուր, սրբազան կրակ, որ ջերմացնում, պողպատում է մարդու կամքը, մաքրազարդում զգացմունքները, բեղմնավորում սիրտը՝ կյանքը դարձնելով պատարագ, նվիրում Աստուծո և իր նմանեցին, «լցեալք պտղովք արդարութեան ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, ի փառս և ի գովեստ Աստուծոյ»:

Պողոս առաքյալը խրատում էր նորադարձ թեսաղոնիկեցիներին՝ չհանգցնել Ս. Հոգու լույսը, «զՀոգին մի՛ շիջուցանէք»,

այսինքն մարդու մեջ չմարել աստվածատուր հոգու նվիրական հուրը, որովհետև Ս. Հոգու լույսի շիջումը հոգեկան ու բարոյական մահ, խավար է մարդու համար: Առանց Ս. Հոգու լույսի, մարդը կխարխափեր խավարի, անորոշության և տարակուսանքի մռայլ ճանապարհների վրա:

Ներսես Լամբրոնացին, իր «Ներբողեան ասացեալ ի հրաշափառ գալուստ Հոգւոյն Սրբոյ» հոյակապ ճառում, Հիսուսի բերնով դիմում է Ս. Հոգուն. «... Է՛ջ այժմիկ սիրոյ աղբիւր սիրով առ նուա, և մխիթարեա զորս ի պանդխտութեան վայրն՝ նժդեհ և անցաւոր կենօք տառապին: ... Բաշխեա նոցա իմաստութիւն առատ, զի մի՛ եղեռնագործն մոլորեցուսցէ զնոսա... անմեկնելի լեր ի նոցանէ և զօրացո՛ զնոսա ընդդէմ ամենայն փորձանաց»:

Այդ նույն աստվածային ճշմարտության և արդարության Ս. Հոգին է առաջնորդել նաև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն, իր երկհազարամյա պատմության ընթացքում:

Մեր Եկեղեցու մի ուրիշ մեծ վարդապետ՝ Հովհան Երզնկացին, գրում է, որ Ս. Հոգու առաջնորդությամբ, «ուղղափառ հաւատոյ քո լոյս, ով Եկեղեցի Հայոց, ոչ նուազեցաւ, ի բարի սերմանս ցորենոյդ՝ որոմն ոչ խառնեցաւ, զաղբիւր յստակ առանդութեանց քոց՝ աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց... յոսկի անբիծ հաւատոյն և արծաթ լուսատեսիլ Բանին՝ պղինձ ժանգաճոտ և կապար սնաթոյր ոչ գտան»:

Այսօր էլ, ինչպես երկու հազար տարիներ առաջ, աշխարհն ու մարդկությունը ավելի քան երբևէ կարիքն ունեն աստվածային «զօրացուցիչ, միշտ ընդունող, միշտ սրբող» Ս. Հոգու զորության և ներգործության:

Աշխարհն առանց այդ ճշմարտության Հոգու անմխիթար է, անհանգիստ, բաժանբաժան ինքն իր մեջ:

«Է՛ջ այժմիկ սիրոյ աղբիւր, սիրով առ մեզ և մխիթարեա զմեզ» մեր տկարությունների մեջ, մեղքի, չարիքի ու կեղծիքի դեմ մեր ամենօրյա պայքարի մեջ, օգնական եղիր մեզ մեր հոգեկան, բարոյական կարիքների մեջ, ամոքիչ՝ մեր ցավերին, հույս՝ մեր վհատության ժամերին և սայթաքումների մեջ, լույս՝ մեր երերուն, երկրավոր կյանքի ճանապարհների վրա:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՂԱԶԱՐԵԱՆ,
ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ,
ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Աստուծոյ ողորմութեամբ, մեր Ս. Եկեղեցին իր դարաւոր առաքելութիւնը կը շարունակէ այսօր ամէն հորիզոններու տակ, ուր հայ հաւատացեալներ համախումբ կ'ապրին, քրիստոնէական սիրով և հայկական հոգիով միաբան, հաստատ կերպով հաւատարիմ իրենց նախնեաց լոյս հաւատքին և ամենայն հայոց Արքեպիսկոպոս Սրբոց աստուածակառոյց Ս. Էջմիածնին:

Հնագոյն ժամանակներէ ի վեր, այդ նուիրական ոգիով կ'ապրին ու կ'աճին նաև Մեր հոգևոր զաւակները, Իրաքի արևոտ ու բարի երկնքին տակ, արաբ մարդասէր ժողովուրդի ծոցին մէջ։

Փա՛ռք Տիրոջ ամենակալին՝ այս բոլոր շնորհներուն համար։

Սոյն Մեր կոնդակը Մենք ուրախ սրտով գրի կ'առնենք, ողջունելու և հաստատելու Ձեր ընտրութիւնը իբրև թեմական առաջնորդ թեմին հայոց Իրաքի, ընտրութիւն մը, որ օրինաւոր կերպով կատարուած է, Ձեր երկրի և Ձեր թեմական կանոնադրութեան տրամադրութիւններուն համաձայն։

Շատ ուրախ ենք, որ Ձեր թեմական իշխանութիւնները, քահանայից դասը և համայն հաւատացեալ ժողովուրդը, միաձայն խանդավառութեամբ, ընտրած են Ձերդ Սրբազնութիւնը՝ առաջնորդելու և մխիթարելու համար զանոնք, Աստուծոյ խօսքով ու շունչով։

Դուք, սիրելի՛ Սրբազան, Ձեր անբասիր հոգևորականի վաստակով, Ձեր հեզահամբոյր բնաւորութեամբ և ժողովրդասէր ոգիով, վստահ ենք, թէ Ձեր ուսերուն վրայ դրուած լուծը պիտի կրէք բարձր կոչման գիտակցութեամբ, իրաւ նուիրումով և բարի ու առատ արդիւնքներով։

Թող Տէրը զՁեզ զօրացնէ և լուսաւորէ Ս. Հոգիով և մնայ Ձեզի միշտ օգնական և մարտակից։

Թող Տէրը Իր շնորհները առատապէս բաշխէ Ձեր թեմական և եկեղեցական վարչութեանց յարգարժան անդամներուն, Ձեր մաքրակրօն քահանայից դասուն և համայն Մեր հաւատացեալ զաւակներուն, պահելով զանոնք բոլորը խաղաղութեան մէջ արևշատ օրերով երջանիկ։

Արդ՝ **«Բանն Քրիստոսի բնակեսցէ ի ձեզ առատապէս, ամենայն իմաստութեամբ ուսուցանել և խրատել զմիմեանս. սաղմոսիւք և օրհնութեամբ և երգովք հոգևորօք օրհնել ի սիրտս ձեր զԱստուած»** (Կողոս. Գ 16)։

Ամէն։

ԾԱՌԱՅՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10-ն մայիսի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրաքաղաքս Սրբոյ Էջմիածնի։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՍԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Ս. Հոգին Աստուծոյ դարեր շարունակ պահպանիչը և լոյս հոլանին եղած է մեր Եկեղեցիին և մեր յուսացեալ ժողովուրդին:

Մենք կը հաւատանք, թէ նաև մեր օրերուն Ան է ներշնչողը և առաջնորդը մեր Եկեղեցւոյ սպասաւորներուն, որոնք կը գործեն իբրև ժիր մատռուակներ, հայ ժողովուրդի հոգևոր կեանքի շինութեան ի խնդիր:

Այսօր Մեր հայեացքը կ'ուղղենք Ձեր տիրախնամ մեծ երկրին, ուր Մեր հաւատացեալ զաւակները նոր թռուով կ'ապրին ու կ'աճին խաղաղ և բարգաւաճ պայմաններու մէջ, կենդանի և վառ պահելով իրենց քրիստոնէական հի-

Հաւատքը և հայկական հոգին, Ս. Էջմիածնի աստուածային օրհնութեան ներքոյ:

Մեր սրտին համար մեծ մխիթարութիւն է տեսնել և հետևիլ Ձեր եկեղեցական համայնքներու հոգևոր, կրթական և մշակութային աշխատանքներուն, ինչպէս նաև Ձեր թեմական կազմակերպութեան եռանդուն և արդիւնաշատ գործունէութեան, ի գլուխ ունենալով թեմական առաջնորդը և ամբողջ հոգևոր դասը:

Մենք գոհունակութեամբ տեղեկացանք, Մեզի ուղղուած 3 մայիս 1966 թուակիր զեկուցագրէն, թէ օրինաւորապէս գումարուած Ձեր թեմական պատգամաւորական ժողովը Ձերդ Սրբութիւնը ընտրած է առաջնորդ Միացեալ Նահանգաց հայոց թեմին, համաձայն թեմական կանոնադրութեան տրամադրութեանց:

Այսու մեր կոնդակաւ խնդութեամբ կը շնորհաւորենք և կը հաստատենք Ձերդ Սրբազնութեան ընտրութիւնը, յղելով Ձեզի Մեր հայրական օրհնութիւնը և բարի մաղթանքները, որ Ս. Հոգին ունենալով Ձեզի իբրև ներշնչարան և զօրավիգ, Ձեզի յատուկ իմաստութեամբ ու խանդավառ եռանդով՝ նուիրուիք Ձեր մեծ թեմը ղեկավարելու և Ձեր եկեղեցիները և հաւատացեալները առաջնորդելու և մխիթարելու սուրբ գործին:

Դուք, սիրելի՛ Սրբազան, անձնուէր ծառայութեան բազում տարիներու վաստակ մը ունիք Ձեր ետին, և տակաւին երիտասարդ էք ու կը գտնուիք ոգեկան և իմացական Ձեր ուժերու լիութեան մէջ: Կը հաւատանք, թէ Ձեզմով պիտի կարողանայ սկիզբ առնել եկեղեցաշէն կեանքի նոր շրջան մը Ձեր թեմին մէջ, յառաւել շինութիւն Մեր զաւակներուն կրօնական կեանքին և յառաւել ամրապնդում եղբայրական սիրոյ միութեան, մեր Եկեղեցւոյ ապահով հովանիին ներքև և Ս. Էջմիածնի օրհնութեամբ:

Ձեր խնդիրն է նաև անաղարտ ու հարազատ պահպանումը Ձեր ժողովուրդի հայկական հոգիին և անոր բարոյական ու մշակութային նկարագրի:

Գիտենք, թէ ծանր է Ձեր լուծը, սակայն քաղցր է ան և յոյժ պատուաբեր:

Եւ Մենք կը խորհինք, թէ Ձեր թեմի ամբողջ հոգևոր դասը, ինչպէս և Ձեր վարչական մարմիններն ու եկեղեցական կազմակերպությունները, Ձեր շուրջ համախմբուած, սիրով միաբան, պիտի հանդիսանան Ձեզի նեցուկ և գործակից՝ ի խնդիր Ձեր առաքելութեան լիակատար յաջողութեան:

Հաւատքով, սիրով և լաւատեսութեամբ, անցէք կենդանի գործի, ապաւինելով Աստուծոյ, մեր ժողովուրդի բարի հոգիին և Ձեր մտքի ու սրտի ուժերով:

«Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայրն փառաց՝ տացէ ձեզ զՀոգին իմաստութեան և յայտնութեան՝ գիտութեամբ իւրով» (Եփես. Ա 17):

Ամէն:

ԵՒՍԹԱԹՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ-2-ն յունիսի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՍԻՄՈՆԵԱՆ,
ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԼԻՖՈՐՆԻՈՅ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ,
ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Որպէս է Ս. Էջմիածինը այսօր, ի տես իր պանդուխտ զաւակներուն հոգևոր կեանքի ծաղկման և եկեղեցական կազմակերպութեան ամրապնդման:

Այս մխիթարական իրողութեան մասին վկայութիւն մըն է նաև Կալիֆորնիոյ հայոց թեմը, իր եկեղեցական համայնքներով և հոգեշէն գործունեութեամբ:

«Քաջալերեցարուք և զօրացին սիրտք ձեր, ամենեքեան ոյք յուսացեալ էք ի Տէր» (Սաղմ. Լ 25):

Այսօր ուրախ ենք մանաւանդ, որ Ձեր թեմական պատգամաւորական ժողովը տարւոյս մայիսի 10-ին, օրինաւոր ընտրութեամբ, Ձերդ Սրբազնութիւնը

կոչած է թեմական առաջնորդի պաշտօնին, ընտրութիւն, զոր Մենք սիրով կը հաստատենք և Ձեզի կը յղենք Մեր ողջոյնը և հայրապետական օրհնութիւնը։

Բազում տարիներու անբասիր և հաւատարիմ ծառայութեան վաստակով, Դուք պատուաբեր տեղ մը կը գրաւէք մեր հոգևորականութեան մէջ, իբրև բարի և առանց ամօթոյ ժիր մշակ մը՝ Աստուծոյ և մեր ժողովուրդին առջև։

Վստահ ենք, թէ Ձերդ Սրբազնութեան առաջնորդութեան ներքոյ, տիրախնամ Ձեր թեմը պիտի շարունակէ իր շէն ու խաղաղ կեանքը, արձանագրելով բարի և առատ արդիւնքներ իր հոգևոր առաքելութեան ճամբուն վրայ։

Մեր իղձն է, որ թեմիդ հոգևոր դասը և թեմական-եկեղեցական վարչութիւններն ու կազմակերպութիւնները, Ձեր շուրջ համախումբ և սուրբ ներշնչումներով տոգորուած, ըլլան Ձեզի ժրաջան ու հաւատարիմ գործակիցներ, որպէսզի յաջողութեամբ պսակուի Ձեր առաքելութիւնը՝ ի շինութիւն մեր ժողովուրդի հոգևոր կեանքին և յանաղարտ պահպանումն Մեր հաւատացեալ զաւակներուն հայկական հոգիին։

Ձեզի քաջառողջ ու երկար կեանք, սիրելի՝ Սրբազան, և աստուածային օգնականութիւն։

«Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է որ խոստացաւն» (Եբր. Ժ 23)։

Ամէն։

ԵՒՍԵԲԻՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ-7-ն յունիսի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՍՊԵՏՆԵՐԻՆ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ, ՅԱՐԳԱՐԺԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ ԱՆԴԱՄՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՍՊԵՏԱՑ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Յոյժ ճշանակալից է և յուզիչ, որ մեր ազգի նահատակութեան իսկ օրերուն, 1916-ի գարնան, Ատլանտեանի հեռաւոր ափերուն վրայ, ծնունդ առած է և կազմակերպուիլ սկսած Ձեր եղբայրութիւնը, Վարդանանց սուրբ անունով:

Յառնած հայ ժողովուրդի անաւոր տառապանքներու յորձանքներէն, մեռնելով իսկ ապրելու՝ անոր հաւատքով ոգեշնչուած, գոյատևելու և ստեղծագործելու անոր սրբազան տենդով գոտեպնդուած և այսօր Հայոց աշխարհի նոր կեանքի արևով լուսաւորուած, Դուք, Վարդանանց ասպետներդ, ահա յիսուն տարիներ շարունակ ապրեցաք, երազեցիք ու տքնեցաք՝ կենդանի և շէն պահելու համար հայոց ազգը և անոր Ս. Եկեղեցին օտար հորիզոններու տակ:

Այսօր, Ձեր յիսնամեայ կեանքի սեմին, Մենք կ'ողջունենք և կ'օրհնենք Ձեր կազմակերպութիւնը և Ձեր վաստակը ու կը մաղթենք, որ Տիրոջ օգնութեամբ Դուք շարունակէք Ձեր առաքելութիւնը Սիրիոյի հայութեան ամբողջ տարածքին վրայ, նոյն սրբազան ոգիով, նոյն նուիրումով և լաւատեսութեամբ, բայց և արդի հայ կեանքի կենսական հարցերու և պայմաններու գիտակցութեամբ:

Մենք կը հաւատանք, թէ Ձեր միութիւնը մեր օրերուն կոչուած է վերածուելու եկեղեցաշէն և հայրենասէր շնորհման մը, համազգային մակարդակի վրայ:

Հայոց պատմութեան ներկայ շրջանի աւագ խնդիրներէն մէկն է՝ կենսունակ ու անաղարտ պահել արտերկրի մեր պանդուխտ ժողովուրդի հայկական հոգին և մէկ ու անբաժան՝ Հայաստանեայց Ս. Եկեղեցին՝ կեանքի աւիշ և հոգիի լոյս ստանալով վերածնուած Մայր Երկրի ակունքներէն:

Ս. Էջմիածնէն օրհնութիւն Ձեզի և յաջողութիւն Ձեր գործին:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13):

Ամէն:

ԵՒԵՈՐԱԿՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21-ն մայիսի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Մայիսի 23-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պաշտոնական Իր առաջին այցելությունը տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նորընտիր նախագահ Բ. Մուրադյանին, քաղաքամայր Երևանի կառավարական պալատում:

Նորին Ս. Օծության ընկերակցում էին գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը և գավազանակիր ճոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մեծաճարգ նախագահի և Ամենայն Հայոց Հայրապետի միջև տեղի ունեցավ սրտագին զրույց, բացառիկ ջերմ մթնոլորտում:

Զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ
ԴԵՊԻ ՍԱՆԱՀԻՆԻ ԵՎ ՀԱՂԲԱՏԻ ՊԱՏՄԱԼԱՆ ՎԱՆՔԵՐԸ

Մայիսի 16-ին, երկուշաբթի, գիշերվա ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի, Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի և Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանի, ուխտի գնաց դեպի Սանահինի և Հաղբատի պատմական վանքերը։

Երևանի քաղաքային կայարանում, նորին Ս. Օծության և շքախմբի անդամներին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանները։

Առավոտյան ժամը 8-ին, գնացքը հասնում է Լոռվա գեղեցիկ քաղաքը՝ Ալավերդի։ Տեղի երկաթուղային կայարանում Վեհափառ Հայրապետին և նրա շքախմբի անդամներին դիմավորում է Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։ Հայոց Հայրապետին դիմավորում են նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, Ալավերդու քաղաքային սովետի նախագահ Արշակ Մալխասյանը, շրջանային սովետի նախագահ Քերոբ Մխիթարյանը և բազում տեղացիներ։

Ջերմ ընդունելությունից և բարի գալստյան բարեմաղթություններից հետո, ավտոմեքենաների շարասյունը ուղևորվում է դեպի քաղաքային հյուրանոցը։

Ալավերդին շրջանային կենտրոն է։ Քաղաքը ծովի մակերևույթից բարձր է 650 մետրով։ Սովետական Միության ամենահին պղնձի արդյունաբերության կենտրոններից մեկն է։ Նախկինում ամբողջ գավառը եղել է Անիի թագավորության ենթակա Կյուրիկյան թագավորության Տաշիրք գավառի մի մասը։ Ալավերդում են գտնվում Ժ—ԺԳ դարերում հոգևոր, մշակութային վերելք ապրած հռչակավոր Սանահինի և Հաղբատի վանքերը, ինչպես նաև Քոբայրը, Քառասուն մանկունքը, Հոռոմոց վանքը և այլն։ Այստեղից շատ հեռու չէ նաև Օձունի եկեղեցին։ ԺԳ դարում, երբ Հայաստանը թոթափել է Սելջուկյան լուծը, աղատագրված այս վայրերում իշխել են Զաքարե և Իվանե եղբայրները։

Այսօր Ալավերդում գործում է պղնձաձուլական մեծ կոմբինատ, որն օժտված է ժամանակակից տեխնիկական միջոցներով և առաջավոր տեղերից մեկն է գրավում Սովետական Միության պղնձի և այլ գունավոր մետաղների արդյունաբերության մեջ։ Քաղաքն ունի գարեջրի, աղյուսի, տրիկոտաժի գործարաններ։ Այստեղ գործում են նաև հանգստի վայրեր, բանվորական ակումբներ, երաժշտական դպրոց, 11 միջնակարգ և ութնամյա դպրոց, 13 մանկապարտեզ, գյուղատնտեսական տեխնիկում և այլն։ Քաղաքը, որն ունի 35 000 բնակչություն, օրեցօր մեծանում է և գեղեցկանում։ Կառուցվելու է նաև ճոպանուղի։

Ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով, այցելություն է տալիս քաղսովետի նախագահ Ա. Մալխասյանին, շրջանային սովետի նախագահ Ք. Մխիթարյանին։ Ընդունելության ներկա են շրջանի ղեկավար մարդիկ, մտավորականներ և ճարտարապետներ։ Ընդունելության սեղանի շուրջ Վեհափառ Հայրապետը բաժակ է բարձրացնում քաղաքի բոլոր ղեկավարների և հայ շինարար ժողովրդի կենացը, օրհնում նրանց հայրենանվեր գործը։

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով և քաղաքապետի նախագահի տեղակալ Մելիքսեթյանի ընկերակցությամբ, այցելում է քաղաքի հայտնի պղնձաձուլական կոմբինատը։ Վեհափառ Հայրապետին դիմավորում է կոմբինատի տնօրեն Հակոբ Սարգսյանը իր աշխատակիցներով։ Վեհափառ Հայրապետը ծանոթանում է այս մեծ հիմնարկության կյանքին և գործունեությանը։ Այնուհետև Վեհափառ Հայրապետն այցելում է էլեկտրոլիզի և պղնձի ձուլման արտադրամասերը։

Ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով, ուխտի է գնում դեպի Սանահինի պատմական վանքը։ Նշանավոր է Դեբեդ գետի վրա ձգված պատմական կամուրջը, 175 մետր մեկ թռիչքով։ Այն շինել է տվել Նանա թագուհին ԺԳ դարում։ Կես ժամ անց Սանահինն է։ Ամբողջ գյուղը, մեծով ու փոքրով, ջերմորեն դիմավորում է Վեհափառ Հայրապետին, Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանին և նրանց ուղեկցող անձանց։ Այստեղ են Սանահինի սովխոզի դիրեկտոր Դավիթ Հարությունյանը, դպրոցի տնօրեն Սուրեն Իսրայելյանը և ուրիշներ։ Բարի գալստյան խոսքից հետո, Վեհափառ Հայրապետն ու Իր շքախումբը այցելում են հուշարձանախմբի ամեն մի եկեղեցին ու անկյունը և համբուրում հազարամյա վանքի սուրբ քարերն ու եռամեծ վարդապետների, հավատավոր և բարի իշխանների շիրիմները։ Սարսուռ է անցնում բոլորի սրտով։

Վանքի գլխավոր եկեղեցում Վեհափառ Հայրապետը «Հայր մեր» է ասում։ Խմբովին երգում ենք «Ուրախ լեր» շարականը։ Տիրան արքեպիսկոպոսը «Հոգւոց» է կարդում այնտեղ թաղված տասնյակ փառավոր հոգիների հանգստության համար։ Ապա Վեհափառ Հայրապետն օրհնում է տաճարում հավաքված գյուղացիներին։ Այս վանքը միաժամանակ հանդիսանում է մեր ազգային-եկեղեցական առաջին պանթեոնը. այստեղ են գտնվում Զաքարե իշխանից մինչև Գրիգոր վարդապետ Տուտեորդու և ուրիշների դերեզմանները։

Սանահին վանքի հուշարձանների խումբը պատկանում է Ժ—ԺԳ դարերին։ Այստեղ առաջին եկեղեցու հիմնադրությունն սկսվել է Անանիա Մոկացի կաթողիկոսի ժամանակ, երբ հիմնվել է նաև միաբանություն։ Վարդապետներն իրենց աղոթքից դուրս զբաղվում են նաև հայ մշակույթով, գրով ու գրականությամբ։ Վանքը փայլում է մանավանդ Սմբատ Բ Բագրատունու թագավորության շրջանին։ Այստեղ Գրիգոր Մագիստրոս գիտուն իշխանը հիմնել է իր նշանավոր ճեմարանը։ Այստեղ են գործել Հովհաննես սարկավագ վարդապետը, Անանիա Սանահնեցին և ուրիշներ։

Սանահինի և նրանից ոչ շատ հեռու գտնվող և նույնքան մեծ ու պատմական Հաղբատ վանքերի պատմությունը հյուսել են մեր շատ պատմիչները՝ Ստեփանոս վարդապետ Ասողիկը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Մատթեոս Ուռհայեցին, Վարշան վարդապետ Բարձրբերդցին, ինչպես նաև Հ. Ղևոնդ Ալիշանը և դեռ շատ ուրիշներ։

Այսպիսի վայր այցելելիս մարդ մի անգամ էլ հավատում է այն խոսքին, որ իրոք դեղեցիկ ճարտարապետական մտահղացումներով կառուցված հուշարձանը քարեղեն երաժշտություն է, իսկ Սանահինը այդպիսի երաժշտությունների մի համանվագ է, հուշարձանների մի խումբ։ Այստեղ արտահայտված են հայ ճարտարապետության նախորդ շրջանի բոլոր մտածումներն ու նվաճումները։

Հուշարձանների այս խմբի ամենահին եկեղեցին Ս. Աստվածածինն է, կառուցված 935—945 թվականներին։ Այն արտաքուստ ուղղանկյուն է, ներքուստ խաչաձև, իսկ համակառույցի կենտրոնական առանցքը կազմող եկեղեցին Աշոտ Գ Ողորմած թագավորի բարեպաշտ թագուհի Խոսրովանուշի կառուցած Ամենափրկիչ եկեղեցին է (961—972 թ. թ.)։ Այս եկեղեցու ժամատունը կամ գավիթը կառուցված է 1181 թվականին, հետագայում։ Այն մի մեծ սրահ է իր գմբեթով, կառուցված սյուների վրա, կամարակապ։ Այս երկու եկեղեցիների միջև է գտնվում Գրիգոր Մագիստրոսի հիմնած ճեմարանը, որը նշանավոր է հանդիսացել Ժ դարի վերջին և ԺԱ դարի սկզբին։

Հյուսիսային կողմում է գտնվում բարձր և դեղեցիկ զանգակատունը, իր տեսակի մեջ ամենահինը՝ կառուցված ԺԳ դարի առաջին կեսում Աբբաս Բ. Բագրատունու օրով։ Զանգակատունը ներսից ունի աստիճաններ, որոնք տանում են երկրորդ հարկ, որտեղ կան պատարագի սեղաններ։ Այստեղից քիչ հեռու գտնվում է ճարտարապետական համակառույցի մաս կազմող Ս. Գրիգոր մատուռը, սիրուն, կլորաձև։ Մատենադարանը, որն այսօր իր չորս պատերով է միայն մեզ հասել, կառուցված է 1063 թվականին, Հրանուշ թագուհու և Դավիթ Ա Անհողին թագավորի աղջկա կողմից։ Սա մի հոյակապ կոթող է, առանց սյուների, կամարակապ և քառակուսի գմբեթավոր։ Պետք է հիշել, որ ինչպես հուշարձանախմբի մյուս եկեղեցի-

ների վրա, այնպես էլ այստեղ կան զարգացանդակներ և ճոխ արձանագրություններ։

Պատմական հուշարձանների այցելությամբ անցնում է շուրջ երկու ժամ։ Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում վանքից, անմոռանալի տպավորություններով և հուշերով ու խոհերով։ Գյուղի դեկավարները սովխոզում կազմակերպել են ճաշկերույթ ի պատիվ Հայոց Հայրապետի։ Ընդունելությունն անցնում է ջերմ, հայրենասիրական մթնոլորտում։ Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը օրհնում է սեղանը և հրաժեշտ առնում հյուրընկալ հարկից, մաղթելով բոլորին նորանոր հաջողություններ իրենց հայրենանվեր աշխատանքում։

Լիանային ծաղկավետ երթուղով Վեհափառ Հայրապետը վերադառնում է Ալավերդի, հյուրանոցի իր հարկաբաժին։

Մայիսի 18-ն է, շաբաթ առավոտ։ Հյուրանոցի պատուհաններից երևում է Դեբեդ գետը, որ հոսում է փրփրաբաշ ընթացքով։ Այսօր եղանակը ավելի գեղեցիկ է, ջերմ, արևոտ, երկինքը պայծառ։ Այսօր ծրագրվել է ուխտագնացություն դեպի Հաղբատի վանքը, բայց Վեհափառ Հայրապետը հրավեր ունի նաև իր շքախմբով այցելելու քաղաքի հայտնի երաժշտական դպրոցը, որը կրում է Ռոմանոս Մելիքյանի անունը։

Ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով և պաշտոնական անձանց առաջնորդությամբ, այցելում է հյուրանոցից ոչ շատ հեռու գտնվող գեղեցիկ դպրոցը, ուր դիմավորվում է դպրոցի տնօրեն և վաստակավոր ուսուցիչ Կարպիս Տեր-Պետրոսյանի, շնորհալի ուսուցչական կազմի և աշակերտության կողմից։

Այստեղ բոլորը մոտիկից ծանոթանում են դպրոցի կյանքին։ Դպրոցում սովորում են 180 երկսեռ աշակերտներ. դպրոցն ունի որակյալ դասախոսական կազմ։ Դպրոցի տնօրենը, որը հայրենադարձ է Հալեպից, չնայած իր երիտասարդ հասակին, արդեն ունի վաստակավոր ուսուցչի կոչում։ Դպրոցի առաջադեմ աշակերտները հաճախ հրավիրվում են Երևան՝ ելույթ ունենալու մայրաքաղաքի մեծ բեմահարթակներում կամ հեռուստատեսությամբ։ Եվ ահա թե ինչո՞ւ անվարան դպրոցի տնօրենը և բոլորը արդար հպարտությամբ Վեհափառ Հայրապետին հրավիրում են դպրոցի դահլիճը համերգի, որն անցնում է բացառիկ հաջողությամբ։ Աշակերտ ջութակահարների լարային խումբը կատարում է Ռ. Մելիքյանի «Փոքրիկ տղան և Դ. Շոստակովիչի «Պոլկա»-ն։ 5-րդ դասարանցի Արմիկ Արովյանը ջութակի վրա կատարում է Սայաթ-Նովայի «Քամանչա»-ն, Էլմիրա Մարտիրոսյանը՝ Բեթովենի «Տոկատա»-ն, Հ. Հարությունյանը՝ «Սիրուհիս»-ը և Շուբերտի «Մեղուն», 7-րդ դասարանցի Անահիտ Շահվերդյանը՝ Աբրահամյանի «Լբսպրոմտ»-ը և 8-րդ դասարանցի Պիկտորյա Մատթևոսյանը՝ Ա. Բարաջանյանի «Վալսարշապատի պարե»-ը և Սենսանսի գունդերտը։

Բոլոր համարներն էլ, որոնք ընկերակցվում էին դաշնամուրով, արժանացան բուռն ծափերի և մեծ գնահատանքի։

«Մեր լսածը մի սքանչելի համերգ էր»,— ասաց համերգի վերջում Վեհափառ Հայրապետը։— Կարծեմ Երևանի Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում լինեիք։ Շնորհավորում եմ ձեզ բոլորիդ։ Ես ուրախ եմ, որ այսքան մեծ թվով աղջիկներ ու տղաներ են հավաքվել այստեղ։ Նրանք փայլուն աչքերով դիտում են Ինձ և լսում։ Ես էլ ճենց նայում եմ իրենց և անչափ ուրախանում։ Բերում եմ բոլորիդ Ս. Էջմիածնի օրհնությունը և Իմ ամենաջերմ մաղթանքները։ Երեխանե՛ր, լիցքավորվեցե՛ք շնորհներով, որ ապագային, երբ մեծ մարդ դառնամ, լինեմ մեր ազգի պարծանքը։ Դուք միայն այս բազմի զավակները չեք, այլ ամբողջ հայ ժողովրդի, այստեղ թե արտասահմանում, մոտ 5 միլիոնանոց ժողովրդի զավակները։ Տե՛ս, Տիրան սրբազանը, որ Իմ կողքին է, եկել է Ամերիկայից. նա այս բոլորը և ձեր ողջույնները կոտանի այնտեղի ձեր եղբայրներին և քույրերին։ Ուրեմն բարձր պահեցեք մեր ժողովրդի նկարագիրը, արվեստը և հայրենասիրությունը»։

Վեհափառ Հայրապետը դպրոցին հրաժեշտ տալուց առաջ, օրհնում է պատրաստված համեստ սեղանը և բաժակ է բարձրացնում տնօրենի, դասատուների և աշակերտների կենացը, ցանկանալով հետագա լավագույն հաջողություններ։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հուշամատյանում գրում է.

«Ս. Էջմիածնից ողջո՛ւյն և օրհնությո՛ւն Ալավերդու երաժշտական դպրոցի տնօրենության, դասախոսական կազմին և աշակերտության։

Մենք լսեցինք աշակերտների համերգը մեծ զգեստությամբ և անկեղծ զգաստությամբ։ Վազգեն Ա, Նաթողիկոս Ամենայն Հայոց։ 18 մայիսի 1966 թ.»։

Հուշամատյանում ստորագրում է նաև Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը։

Ժամը 12.30-ին, Վեհափառ Հայրապետն ուղևորվում է դեպի Հաղբատի վանքը։

Ավտոմեքենաները նորից ընթանում են Դեբեդի աջ ափով, գեղեցիկ ճանապարհով։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Ամեն կողմ կանաչ է ու ծաղիկ, լսվում է թռչունների ձայնը։ Բավական բարձրանալուց հետո, ահա և Հաղբատ գյուղը, թաղված կանաչի մեջ և իր գիրկը առած երբեմնի լուսավորության կենտրոն Հաղբատի վանքը։ Հաղբատը հնում եղել է նաև թագավորների և իշխանների ամառանոցը։

Վեհափառ Հայրապետը Հաղբատի վանքում

Վանքի դռան առաջ փոքրիկ, բաց տարածության մեջ, հավաքվել են բոլոր շինականները և շատ, շատ երեխաներ։ Վեհափառ Հայրապետին ընդառաջ են գալիս գյուղի ղեկավարները՝ գյուղական սովետի նախագահ Սանդրո Մեջլումյանը, սովխոզի դիրեկտոր Անուշավան Էվոյանը, Արտեմ Երդնկյանը, գլխավոր հաշվապահ Վախթանգ Վարոսյանը, դպրոցի տնօրեն օրիորդ Վարոսյանը և ուրիշներ։

Վեհափառ Հայրապետը մտնում է վանքի Ս. Նշան գլխավոր եկեղեցին՝ «յուխտ և յերկրպագութիւն», մինչ բոլորս մեկ երգում ենք «Որք զարդարեցիք» Թարգմանչաց շարականը։ Երգը թև է առնում, բարձրանում, բախվում սուրբ կամարներին ու պատերին և բարձրանում մինչև վե՜ր, վե՜ր...։ «Պահպանիչ» և «Հայր մեր» աղոթքներով վերջանում է ժամերգությունը։ Հուզված են բոլորը և արցունք կա բոլորի աչքերում։ Վեհափառ Հայրապետը Իր օրհնություններն է բաշխում ժողովրդին։

Վեհափառ Հայրապետը և շքախմբի անդամները այցելում են հուշարձանախմբի եկեղեցիները և խոնարհվում բոլոր սեղանների առաջ։

Հաղբատի վանքի հիմնադրությունը բարձրանում է մինչև Բագրատունյաց Աբբաս Ա Թագավորի օրերը, երբ Բյուզանդիայից հալածական հայ վանականները գալիս են և հիմքը դնում այս փառավոր վանքի և եկեղեցու։

Ս. Նշանը, գլխավոր և մայր եկեղեցին, կառուցված է խոսրովանուշ թագուհու կողմից (967—991 թ. թ.), Գուրգեն և Սմբատ արքայորդիների օրոք, որոնց բարձրաքանդակները՝ երկուսով կանգնած դեմ-դիմաց և իրենց ձեռքում եկեղեցու մակետը բռնած, գտնվում է եկեղեցու արևելյան պատի վրա, դրսից, զանգակատան կողմից։ Եկեղեցին կոչվել է Ս. Նշան, որովհետև Բագրատունյաց նախարարական տան պահապան և պաշտպան Քրիստոսի խաչափայտի մասունքը նվիրված է եկեղեցուն և շատ երկար պահվել է այնտեղ։ Եկեղեցին և գավիթը (1185 թ.) շրջվել են սրբատաշ որձաքարերից։ Այս Ս. Նշան եկեղեցում է գտնվում նաև հայ եկեղեցական մի որմանկարի նմուշ, պահպանված ԺԳ դարից, որը գեղարվեստական մեծ արժեք է ներկայացնում։

Այստեղից հարավ գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցին, որը կառուցվել է 1005 թվականին. գեղեցիկ և կոկիկ կառույց է։ Եկեղեցին ունեցել է պատարաղամատույցի անաստիճան 9 խորան։

Այս հուշարձանախմբի կառույցներից մեծ մասը մեզ է հասել ԺԳ դարից. դրանք են մատենադարանը, Ս. Աստվածածին մատուռը, սեղանատունը, դպրատունը, զանգակատունը և վանքի աղբյուրը։ Այստեղ էլ, ինչպես Սանահնում, կան գեղեցանգակ, հրաշակերտ խաչքարեր. արդարև, բացօթյա մի թանգարան. որքա՜ն ճիշտ է ասել բանաստեղծը՝ «խաչքարերու սուրբ աշխարհ»։

Դպրատունը կոչվում է նաև «Համաղասպի շենք», որովհետև այն կառուցել է տվել վանքի վանահայր Համաղասպ եպիսկոպոսը։ Սա մի ընդարձակ դահլիճ է, սրբատաշ քարերով, սյունազարդ, մեծ գմբեթով, իսկ դպրատնից հարավ գտնվող մատենադարանը, ընդհակառակը, առանց սյունի է, սակայն կենտրոնագմբեթ է և ունի քառակուսի հատակագիծ։ Սեղանատունը գտնվում է վանքի պարիսպներից դուրս։

Հաղբատի «ամենաբարձրագույն» շինությունը դանգակատունն է, որը կառուցվել է 1245 թվականին։ Զանգակատան և ժամատան միջև գտնվում են Հովհաննես սարկավագ վարդապետ իմաստասերի, Դավիթ Քորայրեցու (ԺԳ դ.), Հովհաննես Պլուղի (ԺԴ դ.) և շատ ուրիշների դամբարանները։ Քիչ այն կողմ, եկեղեցու արևմտյան պատի վրա, դրսից, վերջերս փակցված սև մարմարե հուշատախտակի վրա գրված է. «1775—1795 թվականներին հայ մեծ բանաստեղծ ու երաժիշտ Արութին Սայաթ-Նովան, Տեր Ստեփան անունով, ապրել է Հաղբատում որպես վանքի լուսարար»։

Վեհափառ Հայրապետը հետաքրքրվում է նաև վանքի աղբյուր-հուշարձանով, որը գտնվում է վանքի պարիսպներից դուրս։

Կնոջն անցել է և այստեղ ամեն ինչ մի անգամից նայել հնարավոր չէ։ Գյուղի դեկավարությունը Վեհափառ Հայրապետին և Իր շքախմբին հրավիրում է ճաշի, որն անցնում է ջերմ, սրտագին մթնոլորտում։

Վեհափառ Հայրապետը և շքախմբի անդամները որսագին տպավորություններով հրաժեշտ են առնում Հաղբատից և հաղբատցիներից։

Վերջին ժամերն են հյուրընկալ Ալավերդում։ Վեհափառ Հայրապետը, քաղաքին հրաժեշտ տալուց առաջ, հյուրանոցի Իր բնդունարանում, բարեհաճում է բնդունել մի քանի խումբ հյուրերի, որոնց թվում նաև Ռուսինիայից հայրենադարձ Իր նախկին աշակերտների։ Ողջերթ մատնելու համար Իրեն այցելում են նաև տեղական իշխանությյան ներկայացուցիչները։

Գիշերվա ժամը 10.50-ն է։ Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով, ժամանում է Ալավերդու երկաթուղային կայարան։ Նա հրաժեշտ է տալիս Իրեն ուղեկցելու համար եկած քաղաքային և շրջանային սովետների դեկավարներին, կայարանապետին, ներկաներին և բարձրանում վագոն։ Քիչ հետո Թբիլիսի—Երևան գնացքը պոկվում է կայարանից և ուղղություն վերցնում դեպի Երևան։

Գիշերն անցնում է և առավոտյան ժամը ճիշտ 7-ին գնացքը Հաղբատի և Ստեփանի ուխտավորներին բերում և հասցնում է Սևանա լիճ։

Վեհափառ Հայրապետը, Մայր Տաճարում Իր աղոթքը կատարելուց հետո, առաջնորդվում է Վեհարան՝ Իր պատմական ուխտագնացությունից լավագույն տպավորություններով և հուշերով։

ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՔԱՐՅԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ 1965 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 ԹՎԱԿԻՐ ՆԱՄԱԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ*

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհազարդ Եղբայր.

Իր ժամանակին ստացանք Ձեր 14 դեկտեմբեր 1965 թվակիր նամակը ներփակյալ հայտարարությամբ միասին, որ կկրեր 7 դեկտեմբեր 1965 թվականը:

Ցնծագին ուրախությամբ ողջունած էինք Ձեր գահակալության տասնամյակի տոնակատարությունը, որուն բերինք Մեր մասնակցությունը հատուկ պատգամավորությամբ: Հոգևին հրճվեր էինք ի լուր այն խանդավառության և համազգային հարգանքին, որով արժանավայել կերպով նշվեցավ և բարձրորեն գնահատվեցավ Ձեր տասնամյա անխոնջ և բեղուն գործունեությունը:

---

* Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 1965 թվականի դեկտեմբեր 14 թվակիր նամակին Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսը պատասխանել է 1966 թվականի ապրիլ 21 թվակիր նամակով, որը Մայր Աթոռում ստացվել է մայիսի 12-ին:

Խմբագրությունս, ի գիտություն և ի լուսաբանություն հայ հանրային կարծիքի, իրեն պարտք է համարում հրատարակել նաև վերոհիշյալ նամակը, որով թվում է, թե փակվում է վերջին երկու տարիների ընթացքում վիճանակված նամակների շրջանը՝ Անթիլիասի ոչ օրինական և բաժանարար ձեռնարկների մասին, ի ծխտումն Երուսաղեմի ողջագուրման ոգու:

Կարծում ենք, թե ամեն մեկնություն ավելորդ է:

Հրավիրում ենք միայն մեր հարգելի ընթերցողներին՝ մի անգամ ևս կարդալու Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի գրած 1965 թվականի դեկտեմբեր 14 թվակիր նամակը (տե՛ս «Էջմիածին», 1966 թ. հունվար, էջ 37—42) և այս համարում մեր հրապարակած 1966 թ. ապրիլ 21 թվակիր գրությունը, որ փաստորեն հաստատումն է Անթիլիասի կատարած և կատարելիք անօրինականությունների և մերժում Ամենայն Հայոց Հայրապետին պատասխանելու։

Խմբագրություն «Էջմիածին» ամսագրի

Որքան խոր էր Մեր ուրախությունը, նույնքան խոր եղան նաև Մեր հուսախաբությունը, զարմանքն ու վրդովումը ստացումովը Ձեր նամակին, որուն կցված էր Գերագույն Հոգևոր Խորհուրդի կողմե հրապարակված հայտարարության պատճենը (7 դեկտեմբեր 1965)։ Ս. Աթոռոյս նկատմամբ ծանրորեն մեղադրական և խստորեն դատապարտողական արտահայտություններով լեցուն սույն հայտարարությունը, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության վերամշակյալ Կանոնագրության 32-րդ և 39-րդ հոդվածները կնկատեր «ծանրակշիռ խախտում Հայ Եկեղեցու նվիրապետական կարգի և իրավասությանց սահմանների», շաբաթներ առաջ լույս տեսած էր արդեն կարգ մը հայ թերթերու մեջ և յառաջ բերած շփոթի և թյուրիմացությանց անհաճո մթնոլորտ մը, որ ոչ մեկ ձևով օգուտ կրեր մեր Եկեղեցվո ընդհանրական և գերագույն շահերուն։

Այդ հայտարարության մեջ «ողբալի իրողություն» բացատրությամբ կբնորոշվեին և կդատապարտվեին Կանոնագրությանս վերոհիշյալ երկու հոդվածները, «անօրինական, եկեղեցաքանդ ու ազգավնաս ընթացք» բառերով կնկարագրվեր Կաթողիկոսությանս ընթացքը և վերջապես, զորահավաքի ու մարտակոչի ոգին հիշեցնող ոճով մը կհրահանգվեր. «Ջերմապես կոչ ենք անում Հայ Եկեղեցու բոլոր սպասավորներին անխտիր, բոլոր հայ կազմակերպություններին, հայ մամուլին և համայն հավատացյալ մեր ժողովուրդին՝ թույլ չտալու, որ անօրինական արարքներ, ոտնձգություններ ու պառակտումներ տարածվեն Սփյուռքի հայ եկեղեցական կյանքի մեջ»։

Արվեստակերորեն երևակայված և դիտավորյալ միտքով հղացված աղետի մը, ահավորագույն չարիքի մը դեմ պայքարի հրավեր մըն է այս, որ ոչ մեկ հիմք ունի տվյալ իրականության մեջ և ոչ մեկ արդարացում կգտնե տրամաբանության և իրողության լույսին տակ։ Ամենեն պարզամիտ ընթերցողն իսկ անդրադարձավ, որ պառակտումներու առաջքն առնելու պատրվակին տակ նոր պառակտումներ ստեղծելու տրամադրությունն էր, որ կարտահայտվեր, Կիլիկյան Աթոռի դեմ նոր պայքարի առիթ մը փնտռելով։ Այլապես, ինչպե՞ս բացատրել «եկեղեցաքանդ ու ազգավնաս» բառերու նման անբարյացակամ, անարդար և վիրավորական բառերու գործածությունը։ Կիրքեր հրահրելու, պայքարի ճամբա պատրաստելու մտայնությունն ու տրամադրությունը այնքան տիրականորեն ներկա են այդ հայտարարության մեջ, որ դժվար կարելի է հաշտեցնել Գերագույն Հոգևոր Խորհուրդի նման կարևոր և պատկառելի ժողովի մը հետ։

Սիրելի՜ Եղբայր ի Քրիստոս.

Ստեղծված այսպիսի անհաճո, խռովյալ մթնոլորտի մեջ ինչպե՞ս կակնկալեիք, որ պատասխանեինք Ձեր նամակին։ Հաճախ Ձերդ Եղբայրության հայտնած էինք այն լուրջ և առողջ սկզբունքը, որ որևէ տարակարծության պարագային, սիրո, խաղաղության, փոխադարձ հարգանքի, անաչառ քննության, լայնախոհ մոտեցումի և բանակցության ճամբան պետք է ընտրել որպես հարցերու լուծման դրական ճամբա։ Ժողովրդական զանգվածներու մեջ նման հայտարարությունները կունենան ժխտական և հոռի ազդեցություններ և փոխանակ դյուրացնելու՝ կդժվարացնեն Մեր գործը։ Ոչինչ կշահին մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը նման հայտարարություններե։

Այնքան ատեն, որքան հարգված չէ Մեր վերև առաջարկած սկզբունքը, Մենք չենք կրնար անդրադառնալ Ձեր հարուցած հարցերուն։ Այնքան ատեն, որքան մեղադրանքի, դատապարտության, պայքարի ոգին վերջ չէ գտած

Կիլիկյան մեր Ս. Աթոռին ընկատմամբ, Մենք չենք կրնար ընկատողության առնել Ձեր հարուցած հարցերը: Փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտի մեջ պետք է տեղի ունենան Մեր թղթակցությունները և ոչ թե ի հառաջագունե Ձեր Ս. Աթոռին կողմե որդեգրված դատապարտության կեցվածքի մը՝ հանդեպ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին և անոր դարավոր անկախության գիրքին:

Բաղդր է Մեզի հուսալ, որ միանգամ ընդմիշտ կդադրի հակառակության ոգին Կիլիկյան Մեր Աթոռին դեմ և Մենք կունենանք ու կստեղծենք պատեհություններ և միջոցներ՝ գործնապես կենսավորելու համար Մեր հոգևոր և ազգային եղբայրությունը սիրո, միության և գործակցության հրաշագործ մթնոլորտին մեջ:

Ամեն ճիգ պետք է ի գործ դնել, որ այդ մթնոլորտը չխաթարվի որևէ արարքով՝ խոսքով կամ գործով, որ կրնա վնաս բերել մեր ժողովուրդի անդորր և ստեղծագործ կյանքին: Հեռու մնալ անհարկի վեճերե—այս պետք է ըլլա մեր Եկեղեցվո սկզբունքը և պատգամը: Ծառայել մեր ժողովուրդին—այս պետք է ըլլա մեր Եկեղեցվո նշանաբանն ու կյանքի ուղեգիծը:

Կաղոթենք առ Բարձրյալն, որ Ձերդ Վեհափառության պարգևե անսահման ուժ և իմաստություն, առողջություն և կորով՝ Ձեր գահակալության նոր բացված երկրորդ տասնամյակն ալ վերածելու համար շինարար շրջանի մը՝ ի փառս Աստուծո և ի պայծառություն Հայաստանյայց Ս. Եկեղեցվո:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,

Աղոթակից

ԽՈՐԵՆ Ա.

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

ԱՆԹԻԼԻԱՍ,
21 ապրիլ 1966

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 8-ին, Ավագ ուրբաթ օրը, երեկոյան ժամը 6-ին, որպես ուխտավոր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը Ամերիկայի Միացյալ Նահանգներից։

Մայր Տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, Տիրան սրբազանը Վեհարանում ջերմորեն ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից, որպես Մայր Աթոռի հարազատ զավակը և Նորին Ս. Օծության բարձրաստիճան թանկագին հյուրը։

Նորին Սրբությանը հատկացվեց Վեհարանի երկրորդ հարկում մասնավոր հարկաբաժին։ Սրբազանը Մայր Աթոռում գտնված օրերին վայելեց Մայր Աթոռի միաբանության հյուրասիրությունն ու հարգանքը։

Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոսը Մայր Աթոռում մնաց ապրիլի 8-ից մինչև մայիսի 30-ը, երկուշաբթի օր։ Սրբազանը ուխտի գնաց Ս. Գեղարդ, Սանահին և Հաղբատ վանքերը, այցելեց Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանը, մայրաքաղաքի տեսարժան վայրերը, պատմական հուշարձանները, եղավ հարազատների, բարեկամների բնակարաններում, շփումներ ունեցավ մտավորականության, արվեստագետների հետ։

Տիրան սրբազանը ներկա եղավ Մայր Տաճարում եկեղեցական արարողությանց, մոտիկից ծանոթացավ Մայր Աթոռի կյանքին, աշխատանքներին, միաբանության հետ եղբայրական շփումներ, զրույցներ ունեցավ, սիրեց նրանց անկեղծորեն իրենց նվիրման և ծառայության մեջ, այցելեց Հոգևոր Ճեմարան, ներկա եղավ դասախոսությանց և ամավերջի քննություններին, այցելեց խմբագրատուն, Մայր Աթոռի դրասենյակները, տպարանը, ամեն առիթով արտահայտելով իր գոհունակությունն ու ուրախությունը, Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ կատարված և կատարվող հոգևոր, մշակութային, վանական-վարչական, շինարարական գործերի բարվոք ընթացքի և արդյունքների մասին։

Ապրիլի 23-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանում, Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը կարդաց իր առաջին դասախոսությունը, հանգամանորեն ներկայացնելով և հետաքրքրական վերլուծությամբ՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի եկեղեցական, մշակութային կյանքը, հուսադրիչ տվյալներով։

Այնուհետև, մայիսի 10-ից մինչև 13-ը, 4 օր անընդհատ, երեկոյան ժամը 7-ից մինչև 10-ը, գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոսը Հոգևոր Ճեմարանում կարդաց դասախոսությունների մի ամբողջ շարք, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, Արարատյան, Շիրակի և Վրաստանի թեմերի քահանայից դասը, շուրջ 70—80 հոգի։

Դասախոսությանց ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը։

Առաջին դասախոսության նյութն էր «Աստվածաշունչը և Աստուծո գոյության ոչ դասական փաստերը»։

Երկրորդ դասախոսությունը՝ «Հավատքը և գիտությունը»։

Երրորդ դասախոսությունը՝ «Հիսուս որպես Փրկիչ կամ Փրկության վարդապետությունը»։

Վերջին դասախոսությունը՝ «Հոգու անմահություն կամ հավիտենական կյանք»։

Մայր Աթոռում գերաշնորհ Տ. Տիրան սրբազանի կատարած շահեկան և հոգեշեն դասախոսությունները, որոնք լսվեցին հարաճուն հետաքրքրությամբ, կարելի էր գնահատել որպես կարևոր իրագործություն Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի եկեղեցական, մշակութային կյանքում։

Դասախոսությունների փակումը կատարեց Վեհափառ Հայրապետը ուրբաթ գիշեր, մայիսի 13-ին։ Նորին Ս. Օծությունը շեշտեց, որ հայ ժողովուրդը, իր պատմության ողջ ընթացքում, զգացել է իր հոգու մեջ միշտ Աստուծո ներկայությունը և այդ զգացման թելադրանքի տակ ապրել, տառապել, աղոթել և ստեղծագործել է՝ որպես եկեղեցի և ժողովուրդ։

Այնուհետև վանական սեղանատանը, Տ. Տիրան արքեպիսկոպոսը, Մայր Աթոռի միաբանության և քահանայից դասի հետ, մասնակցեց երեկոյան ընթրիքին։

Մայիսի 29-ին, կիրակի, Հոգեգալստյան տոնին, Տ. Տիրան արքեպիսկոպոսը Մայր Տաճարում պատարագեց և իմաստալից քարոզ խոսեց օրվա տոնի մեծ խորհրդի և նշանակության մասին, շեշտելով Ս. Հոգու սրբացնող, կենդանացնող, առաջնորդող դերը, ինչպես տիեզերքի ողջ պատմության մեջ և Քրիստոնեական Ընդհանուր Եկեղեցու կյանքում, այնպես էլ մեր եկեղեցում, հայրենի հողի վրա, Ս. Լուսավորչի տեսիլքով սկիզբ առած հայ ժողովրդի հոգևոր, բարոյական վերածննդյան մեջ։ Սրբազանը իր քարոզն ավարտեց Մայր Աթոռի անսասանության և նրա արժանավոր Գահակալի կյանքի արեշատության և հայրենյաց բարօրության սրտագին մաղթանքներով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև Բուլղարիայից հայ ուխտավորների 200 հոգինոց խումբը։

Ժամը 4-ին, Վեհարանում, ի պատիվ Տ. Տիրան սրբազանի, ողջերթի մտերմիկ ընդունելություն էր կազմակերպված։

Ներկա էին Մայր Աթոռի միաբանները, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, դասախոսները և վանքի պաշտոնեությունը։

Հյուրերի թվումն էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Ներկա էր նաև ԱՄՆ-ից սրբազանին ծանոթ Արամ Սարյանը, որ ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում։

Վեհափառ Հայրապետը ջերմ, հուզիչ ողջերթի խոսք ասաց Տ. Տիրան արքեպիսկոպոսին, շեշտելով իր ուրախությունը Մայր Աթոռում նրա անցկացրած օրերի համար և վկայեց իր անձնական սիրո և համակրանքի մասին դեպի Տիրան սրբազանի անձը։

Այս ուրախ առիթով Վեհափառ Հայրապետը Տիրան սրբազանին նվիրեց եպիսկոպոսական մի պանակ, ի նշան հայրապետական բարձր գնահատության։ Տիրան սրբազանը հայրապետական նվերը ստացավ խորապես զգացված։

Այնուհետև Տիրան սրբազանին ողջերթ մաղթեցին Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պողոսյանը՝ հանուն Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի, Գրիգոր Բերմեզյանը՝ հանուն Գերագույն Հոգևոր խորհրդի և Արթուն Հատիտյանը՝ հանուն «Էջմիածին» ամսագրի խմբագրության։

Դասախոս Սամվել Անթոնյանը գրաբար հատվածներ արտասանեց Եղիշեից, իսկ հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայգարյանը, ի պատիվ սրբազանի, մի քանի հայրենասիրական երգեր երգեց։

Ջերմ, անկեղծ և խորն էին Տիրան սրբազանի շնորհակալության և բարեմաղթության խոսքերը իր մեկնումի պահուն։

Ողջերթի մտերմիկ սեղանը ավարտվեց խմբովին երգված «Էջ Միածին» ի Հարէ» շարականով։

Մայիսի 30-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 8-ին, գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոսը, լավագույն տպավորություններով, անմոռաց հուշերով հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և միաբանությունից, ավտոմեքենայով մեկնեց դեպի Թբիլիսի, ուր Նորին Սրբազնությունը կանցկացնի մի քանի օր։

Հանուն Վեհափառ Հայրապետի, մինչև Թբիլիսի Տիրան սրբազանին ընկերակցում էին Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը և դիվանապետ Հայկ Առաքելյանը։

Բարի ճանապա՛րհ Ձեզ, մեր սիրելի՛ Թանկագի՛ն Տիրան սրբազան։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 28-ին, ճինգշաբթի, Ջատկվա արձակուրդների առթիվ, Հոգևոր Ճեմարանի ուսանողություններ միօրյա պտույտ կատարեց, այցելելով Ս. Գեղարդի վանքը, Գառնիի ավերակները և Սղիշե Ցարենցի անվան հուշարձանը։

***

Ապրիլի 29-ին, ուրբաթ, ժամը 2-ին, Մայր Աթոռ այցելեց Հնդկաստանի քաղաքական և հասարակական գործիչ պրոֆ. Ջատերջին, ընկերակցությամբ Արտասահմանի հեռմշակութային կապի Հայկական ընկերության նախագահ տիկին Բերսաբե Գրիգորյանի։ Հարգելի հյուրը, այցելելուց հետո Մայր Տաճար և եկեղեցական արվեստի թանգարան, ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից։ Հայոց Հայրապետի և հարգելի պրոֆեսորի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որին ներկա էր նաև գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը։ Ժամը 3-ին, ի պատիվ հարգելի հյուրի, տրվեց ճաշկերույթ։ Պրոֆեսորը հրաժեշտ առավ Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից լավագույն տպավորություններով։

***

Մայիսի 1-ին, «Կարմիր Կիրակէ», Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Սղիայանը՝ «Ով անմիտք և հեղգասիրտք ի հաւասալն ամենայնի որ խոսեցան մարգարէքն» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 8-ին, կիրակի, «Տօն երեման Ս. Խաչի». Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը՝ «Վեր առեալ ցնծայ երկինք և երկիրս ուրախանայ ընդ յայտնիլ սրբոյ խաչին սեռակնաձև քառաթևին, որ զաշխարհս լուսաւորեաց արեղակնահերպ ճառագայթիւք» շարականի բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 15-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաբարյանը՝ «Չէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 19-ին, ճինգշաբթի, «Համբարձումն Քրիստոսի»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Նշան քահանա Բեյլերյանը՝ «Եւ ամբարձեալ զձեռսն իւր օրհնեաց զնոսա... և վերանայր յերկինս» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, ի հիշատակ Հայրապետական Աթոռի Սսից Ս. Էջմիածին փոխադրության տարեդարձի, կատարվեց հայրապետական մաղթանք։

Օրվա հանդիսությանց ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 22-ին, կիրակի, «Երկրորդ Մաղկազարդ»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետ Սերայդարյանը՝ «Քում ամենազօր գալստեանդ, Քրիստոս Աստուած մեր, երկիրպագանեն զօրք հրեշտակաց» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 23-ին, երկուշաբթի, Հոգևոր Ճեմարանում սկսվեցին ամավերջի գրավոր ու բանավոր քննությունները, որոնք տևեցին մինչև հունիսի 4-ը, շաբաթ։



ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼԵՌԸ

Այս տարի, ապրիլ ամսի վերջերին, Երուսաղեմում, Սրբոց Հակոբյանց վանքի տպարանից լույս-տեսնում բանաստեղծ Եղիվարդի «Ծտարականը», որը մաս առ մաս հրատարակվում էր «Սիոն» ամսագրում, 1862 թվականից սկսած։

Եղիվարդը՝ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, շուրջ երեսունհինգամյա իր գրական շնորհակալ վաստակով, ծանոթ ու սիրված դեմք է մեր նոր գրականության մեջ, իսկ նրա «Ծտարականը», իր ինքնատիպ հորինվածքով և իրավ արվեստով, ոչ միայն նրա գրական ստեղծագործության գագաթն է, այլև նվաճումներից մեկը մեր արդի եկեղեցական մատենագրության։

Գրքում ավետարանական պարզ և անմիջական պատումների ֆոնի վրա, տրվում է «Կյանքն ու գործը պանդուխտ Աստուծույն, որ օր մը վար իջավ աստղերեն, երբ մեր աշխարհը տակավ կհեռանար երկնքեն»,—նշում է հեղինակը։

«Ծտարականը» ճշմարիտ, կենդանի և այժմեական գիրք է Քրիստոսի և Նրա վարդապետության մասին, գրված արվեստագետի սրբազան ներշնչանքով, խորունկ ապրումով, Սեն Վարդապետի հանդեպ անսահման պաշտամունքով։

«Էջմիածին» ամսագիրը հետագայում հանգամանորեն և մասնավոր գրախոսականի մեջ կանդրադառնա գրքի բովանդակության, արվեստին, լեզվին և ինքնատիպության։ Այժմ ընթերցողներին ներկայացնում ենք «Լեռը» գլուխը։

Եղիվարդը «Ծտարականը» «հիացումով, երախտագիտությամբ և եղբայրական սիրով» ձոնել է Ամենայն Հայոց Հայրապետին, Նրա գահակալության ասնամյակի երջանիկ առիթով։— Խմբագրություն «Էջմիածին» ամսագրի

Առտու մը, Ծտարականը իր ընտրյալներու խումբով ելավ Կափառնայումի ուսին բարձրացող լեռը։ Շրջակա վայրերեն ստվար բազմություն մը եկավ խռնվելու իրենց շուրջը, քաղցր հետապնդումով։ Եկած էին բոլորը, լսելու նոր քարոզիչը, որ շարաթներե ի վեր լճեզրին վրա կշրջեր ու կխոսեր։

Ուրախ էր Ծտարականը, ոսկիացող ցորենների արտին դիմացը կեցող սեղմնացանին պես, որուն մտքին մեջ կլայնային ու կծավանային հույսին դաշտերը, մշտապես կանաչ, ուր պիտի աճեին մարդոց երազները։ Քիչ մը անդին կփովեր խաղաղ լիճը Գալիլիո, երկնքեն փրթած և լեռներու գիրկը ինկած կապույտ ակի մը նման։ Ավելի անդին Հորդանան կճեղքեր լիճը և կրանար իր ակոսը դեպի հարավ։

Լեռան բարձունքին՝ շրջապատված հարյուրավոր աչքերե, լուռ էր Վարդապետը։ Անոր մտքին՝ կտոր-կտոր կշինվեին օրերը, թիվով հաղիվ քսանի հասնող, որոնց յուրաքանչյուրին մեջ իրեն տրվեցավ անդունդներե անդունդ անցնիլ մարդերու ցավին, մեղքին և երազներուն։ Հետո վերցուց իր աղվոր ղլուխը և նայեցավ վայրկյանե վայրկյան շատացող բազմության, և սկսավ խոսիլ, քաղցր ու խաղաղ մրմնջող երկնքին.

— Երանի հոգիով աղքատներուն, անոնց՝ որ չեն փնտռեր իրենց թագավորությունը, այլ բոլոր մարդոց։ Որոնք իրենց հոգին բույծի չեն դրած հաճույքի և ոսկիի որդնայից կարասներուն խորը։ Որոնց աչքերը կուշտ են կյանքի բարիքներուն, բայց մանավանդ շարիքներուն դիմաց կյանքին կնային գերեզմանի մը լայնքեն։ Որոնք ամեն ինչ ունին, առանց բան մը ունենալու։

— Երանի սգավորներուն, որոնց սիրտը, նման բացվող խեփորին, իր մեջ ունի ամբողջական գիտակցությունը ցավին, արյունող սլաքը մարմնին ու հոգիին։ Երանի անոնց, որ հոգևկան այդ տագնապը ունին, որմե՝ միայն կրնա ծնիլ գեղեցկության լույսը, և ինքզինքը ըլլալու գիտակցությունը։ Ցավը բուժիչ թույնն է մեր հոգիին ու մարմ-

նին հավատարապես. մոտեցուցե՛ք ձեր շրթները իր այրող բաժակին, շինված երկնավոր Հոր ձեռքով և սրբագործված իր արցունքներով։ Առանց վերջի սիրտը հաճույքներու բացված ուսկան մըն է լոկ։ Երանի սպասարիներուն, որովհետև անոնց տրտմությունն ու բերկրանքը իրարմով կսնանին։

— Երանի հեղերուն, որոնք գիտեն հանդարտել չարերուն, բայց որոնք ժայռեն ինկող ջուրի կաթիլներուն պես կրնան համբերությամբ մաշեցնել կարծրությունը քարերուն։

— Երանի անոնց, որ արդարության ողբերգական սերը ունին և կրնան իրենց մահով խորտակել կափարիչը գերեզմանին։ Որոնց պարտությունն ու մահը քաղցր հաղթանակ մըն է, դարերու սիրտը արյունով լուսավորող։ Որոնց նայվածքը ապագային կնայի, նետահար թռչունի մը նման, որ սակայն մշուշներեն անդին արևը կտեսնե։ Երանի արդարության համար հալածվողներուն, որոնք արդար մահով տաճարներու կվերածեն իրենց մարմինները, հոն կախելու երդին մշտավառը։ Որոնք մարմինն իսկ են դաշնավոր այն գաղափարին, որ դարերու ցժոխքն է դիմավորեր հաճախ, իր արյունոտ և ցախչախված թևերով պաշտպանելու վիրավոր գեղեցկությունը արդարության։

— Երանի անոնց, որ գթած են և ողորմած, Աստուծո սրտին և երկնքի լացող աչքին պես։ Որոնք ուրախությամբ գիտեն բաժնել իրենց հացին պատառը ընկերին հետ, ինչպես ծաղիկը իր բույրը և արևը իր լույսը կբաշխե անխտիր։ Տալը ապրելու և տնելու կերպ մըն է, ինչպես հողը, ինչպես ծառը, ինչպես մայրը։ Կյանքն է որ կյանքին կուտա, իսկ մենք վիկներն ենք միայն այդ տուրևառին։

— Երանի խաղաղարարներուն, որոնք սիրով կտանին պայքարը չարին դեմ։ Որոնք գիտեն քանդել պատճառները խռովության, որոնց հոդին վեր է պայքարեն և դիտե վերածել ժայռերը պարտեղներու և փոթորիկները խաղաղ ջուրերու։

— Երանի անոնց՝ որ սուրբ սիրտ ունին, որոնք Աստուծո կնային, ինչպես լիճը երկնքին, ցոլացնելով պատկերը անոր։ Սուրբը մարմնացյալ Աստվածն է այս երկրի վրա, լուսավոր առուն երկնքի սրտեն սկիզբ առնող և հավիտենության գացող։ Առանց սրբության ոսկի շղթային, ոչ ոք կրնա երկինք բարձրանալ։

Այս խոսքերը հոն հավաքվողներուն համար նոր էին առտվան թարմ շաղին պես։ Լեռնեն տրված նոր թագավորության այս հրովարտակը, ոսկի տառերով գրված, ավելի քան տպավորիչ էր։ Շատեր կկարծեին, թե այլևս իրենց կպատկաներ կապույտ լճին շուրջ օրորվող աշխարհը, որ կնտխերդանրեր Աստուծո սրբությունը։

Հետո իր աշակերտներուն հետ իջավ լեռնեն ու ուղղվեցավ դեպի Կափառնայում։ Ճամբան նշմարեց այրեր և կիներ, որոնք զաշտերեն և այգիներեն քաղաք կվերադառնային։ Անոնք բոլորը կկրկնեին իր անունը և իրեն կնայեին բաղցրությամբ։

«Ի՞նչ կրնամ տալ ես ասոնց, որոնք հոգին բարիքը կհանդերձեն, կապելով իրենց սիրտը արտերուն, այգիներուն և հնձաններուն»,— կմտածեր Օտարականը։

«Իսկի՞վ թե կարենայի ընել սիրտս պտղաբերած ծառ մը, մատուցանելու կայն չբավորներուն, կամ բխեցնելու ըղձանքներս, աղբյուրի նման, լեցնելու համար բաժակները ծարավ ունեցողներուն։

«Տոնական օրերը մոտ են բացվելու, գարնան անդաստաններու նման. Քող թափի երկնքի ոսկի ցորենը ինչպես հողերու՝ այնպես ալ սիրտերու մեջ։

Երբ քաղաք մտավ, բոլորը ընդառաջ եկան իրեն և խնդրեցին որ իրենց հյուրը ըլլա։ «Դուն օտարական չես մեզի, այլ մեր պավակն ու բարեկամը։ Մենք գիտենք քու մանկությունդ և պատանեկությունդ, որ այժմ մեզի երազ կթվի։ Մենք սիրած ենք քեզ անխոս, այժմ այդ սերը աղաղակի վերածված մեր հոգիներուն մեջ, քեզի կկանչեն։ Եվ ամբոխը Օտարականը իր մեջ առած դեպի քաղաքին ժողովարանը ուղղվեցավ։ Օրը շաբաթ էր երբ ժողովարան մտան։ Օտարականը իր սովորության համաձայն մոտեցավ մարգարեներու դպաններուն, դատեց մին անոնցմե և կարդաց. հետո սկսավ խոսիլ։ Բնագիրը, որ ծանոթ էր իրենց, բոլորին համար այլակերպվեցավ հանկարծ։ Իրենց կթվեր, թե առաջին անգամ կլսեին այդ խոսքերը, որովհետև նոր արև մը զտնոնք կոսկեզոծեր, վերածելով անակնկալ հայտնության մը։ Պարտիզպանը, դարբինը, որմնադիրը, ձրկնորսները, գեղջուկները, առևտրականները, որոնք կկազմեին ամբոխը, մտադիր կլսեին իր բացատրությունները և չէին ուզեր, որ ան վերջացներ։ Կուզեին, որ հայտներ նոր թագավորության օրը, հեռանկար մը այդեկությունքի կոչունքներու և առատության։

Եվ բոլորի հիշողության խորը, անդամ մը ևս կհնչեր խոսքը մարգարեին. «Որքա՜ն գեղեցիկ են ոտքերն անոր՝ որ լեռներուն վրա կավետարանե և խաղաղություն կբերե աշխարհին։



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ *

IX.— Հայկական երաժշտանոցի մը համար

Կոմիտաս հայկական երաժշտանոցի մը համար Եվրոպայեն կդառնար նոր ոգևորությամբ մը, ինչ որ ըրեր էր Պոլսո իր առաջին ամիսներուն, սկիզբն էր միայն այն մեծ առաքելության, որուն սիրույն հեռացեր էր ան էջմիածնեն։

Ծանուցանելով Կոմիտասի դարձը Եգիպտոսեն, թերթերը կավելցնեին.

«Կոմիտաս վարդապետ որոշած է Պոլիս հաստատվիլ և հիմնել հոս կոնսերվատուար (երաժշտանոց) մը։ Բոլորովին նոր հիմնարկություն մը պիտի ըլլա այս՝ Պոլսո և ամբողջ Տաճկաստանի համար, և վստահ ենք, թե ոչ միայն գեղարվեստական հեղաշրջում մը հառաջ պիտի բերե, այլև մեծ հաջողություն պիտի գտնե, շնորհիվ Կոմիտաս վարդապետի նման տաղանդավոր արվեստագետի մը»[70]։

Կոմիտասեն քիչ առաջ Պոլսո մեջ երաժշտանոց մը բանալու փորձը ըրեր էր ուրիշ հայ երաժիշտ մը, Լևոն Եղիազարյան։ Համեմատաբար ավելի համեստ էր անոր երաժշտական պատրաստությունը, թեև օժտված էր ան ուրիշ արժանիքով մը, որ հանդգնություն կկոչվի։ Այնուամենայնիվ պայմանները թույլատու չեղան, որ ան հաջողություն գտնե։ Եվ սակայն տեղին էր, որ այս էջերուն մեջ հիշատակության արժանանար խանդավառ այս երաժիշտը, որ դժբախտաբար անծանոթ մնաց երաժշտական հայ շրջանակներուն։

Լևոն Եղիազարյանին պիտի հանդիպեինք տարիներ հետո, 1925 թվականին, երբ Բուքրեշ կուգար համերգներ տալու։ Տարիները և կյանքի պայմանները խաղացեր էին անշուշտ իրենց գերը. բայց բան մը կպահեր միշտ հին օրերու իր խանդավառությենեն և ավյունեն։ Յուկոսլավիայեն կուգար, ուր համերգ մը տվեր էր և հաջողություն էր գտեր։ Բուքրեշ ավելին գտավ. շնորհիվ նախ ազատորմնադրի կապերուն, որոնք ամեն դուռ իր առջև բացին, բայց մանավանդ հովանիին, զոր ընծայեց իրեն հայ ժողովուրդի մեծ բարեկամը, պրոֆ. Նիկոլա Յորգան։

Եղիազարյանի համերգներուն մասին կգրեինք այն ատեն.

«Շատ հայ արվեստագետներ անցած են այս հորիզոնեն՝ երաժիշտ ըլլան, գրագետ թե բեմի գործիչ, բայց անոնցմե ոչ մեկը կրցած էր ռումեն ժողովուրդին մեջ այնքան մեծ հետաքրքրություն արթնցնել հայ արվեստի շուրջ, որքան կրցավ ընել հայ երաժշտագետ մը՝ Լևոն Եղիազարյան, հաչ; երաժշտության նվիրված իր զույգ մը երաժշտական երեկոներով, առաջինը տրված հունիս 20-ին Աթենեի հոյակապ սրահին մեջ,

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № № Ա-ից, Ե—Զ—Է-ից, Ը—Թ-ից, Ժ-ից և 1966 թվականի № № Ա-ից, Բ-ից, Դ-ից և Դ-ից։

[70] «Ազատամարտ», 1911 դեկտեմբեր 23/1912 հունվար 5, թիվ 778։

իսկ երկրորդը կրկնված Պոպուլար Թատրոնին մեջ շարաթ մը հետո՝ Հարավ Արևելյան Եվրոպայի կաճառին փափագով, երկուքն ալ Կընաարիա Ռոմրնիկ երգչախումբին մասնակցությամբ։ Կարճ ատենվան մեջ օտար երգչախումբի մը սորվեցնել հայ երգեր ու մանավանդ օտար մտավորական շրջանակներ հետաքրքրել հայ արվեստով՝ աշխատանքներ էին, որոնց համար կարելի չէ ջերմորեն չշնորհավորել հայ երաժիշտը։ Եվ եթե հայտագրին բոլոր երգերն ալ հավասար հոգածությամբ ընտրված չէին[80] ու ընտրվածներուն մեծ մասն ալ՝ օտար վարպետներու կողմե դաշնակված՝ կորսնցուցած էր մասամբ իր հայ դիմագիծը, այնուամենայնիվ երկու համերգներն ալ անցան հաջող, ու կրցան հայ երաժշտության վրա համակրանքով խոսիլ տալ ռումեն մամուլը։ ... ռումեն մամուլը քանի մը օր գրաղեցավ սույն երկու երեկույթներով, պանծացնելով հայ արվեստը, բայց միևնույն ատեն զգացնելով, որ ավելի հաճելի պիտի ըլլար լսել հայ երաժշտութենեն այնպիսի գոհարներ, որոնք կրած չըլլային օտար մատներու հպումը»[81]։

Տեղն է ըսելու, որ ազգն տարիներ առաջ, այն է 1900-ին, Եղիազարյան հայ երգերեն ոմանք դաշնակած էր ինք և ուրիշներ ալ դաշնակել տված օտար երաժշտագետներու։ բայց այդ երգերեն շատերը հայերի երգեր չէին, այլ հայ բառերու վրա պարզապես օտար եղանակներ. այս պարագան սրտմտեցուցեր էր այն ատեն Կոմիտասը, և դայն մղեր բուռն հոդված մը ստորագրելու «Արարատ»-ի մեջ (1900, էջ 367—368)։

Եղիազարյան շուտով կասեցավ սակայն իր ոգևորության մեջ։ Հյուծախտը կկրծեր դինքը և մեկեն անկոգնին գամեց։ Ան աչքերը փակեց Բրաշով, բուժարանի մը խորթ մեկ անկյունը։ Իր աճյունները կհանգչին տեղվույն գերեզմանատունը, ցմիշտ մոռցված։

Եթե այս փակագիծը բացինք հեք արվեստագետի համար, պատճառն այն էր, որ ան առաջինը կըլլար Պոլսո մեջ երաժշտանոց մը բանալու մասին մտածող։

Կոմիտաս Պոլսո կհայտնվեր ավելի մեծ հմայքով, և ավելի նպաստավոր պայմաններ կգտներ շուրջը։ Առաջին իսկ պահեն խանդավառությամբ ողջունեց Պոլիս երաժշտանոցի մը գաղափարը, և առավելապես մտավորականությունն էր, որ ոգևորվեցավ։

«Ազատամարտ» առաջինը կրլլար ձեռնարկը ողջունող։ Ան իր 1911 մարտ 1/14 թիվին մեջ խմբագրական մը կհրատարակեր «Հայկական երաժշտանոցի մը ձեռնարկը» խորագրին ներքև։

Սույն խմբագրականը, որ եղած էր Ռուբեն Զարդարանի իսկ գրչեն, արտահայտությունն էր հայ մտավորականության մեջ ստեղծված խանդավառության, և կարժեր ծանոթանալ անոր։

«Պոլսո մեջ հայկական երաժշտանոց մը հիմնարկելու գաղափարը սկսած է բռնել ուրդեն գործնական ճամբա մը։ Ջերմապես կշնորհավորենք այս գործը։

Մեզ համար հայկական երաժշտանոց մը՝ պերճանք, «լյուքս» չէ՝ ինչպես տարփին մտածել թերես շատեր։ Հայ գեղարվեստի զարգացումը և այդ զարգացման նպաստող ամեն մեկ բայլ, որոնցմե մեկն է նաև երաժշտանոցը, մենք կրնդունինք հայ ժողովուրդի ազգային կյանքին և ցեղային բազարակրթության համար բարձրորեն անհրաժեշտ։

Երաժշտությունը թարգման է ազգի մը հոգիին, անոր թափը գեպի գեղեցկության սահմանները, և արտահայտությունը՝ անոր ինքնուրույնության։ Եվ էապես այս հատկանիշները կերևան ժողովրդական երգերու և անոնց ներշնչման ու եղանակավորման աղբյուրներուն մեջ։

Մինչև եկմայլան, Կարա-Մուրզա և մանավանդ Կոմիտաս վարդապետ՝ հայ երաժշտության մը ինքնատիպ գոյությունը և անոր մասնավոր արժեքը անծանոթ էին, ոչ միայն եվրոպացիներուն, այլ նույնինքն հայուն։ Հատկապես Կոմիտաս վարդապետն եղավ, որ նվիրեց դրեթե իր ամբողջ կյանքը այդ վերին աստիճանի աղնիվ նպատակին և կրցավ, հայ գեղջկական երգերու գիտական համբերատար ուսումնասիրությամբը՝ անոնցմե դտել և հայտնագործել հայկական ինքնուրույն երաժշտությունը։ Բայց Կոմիտաս վարդապետը անհատ մըն է, որ գոյություն ունի այսօր և կրնա չունենալ վաղը, ինչ որ ամենեն ավելի էականն է, անոր կատարած այնքան հոգնագահանջ ուսումնասիրության արդյունքն ու հաջողությունները պետք չէ մնան առանց լույսի, պետք չէ մնան առանց հետևորդներու և հետևաբար ենթակա միշտ անակնկալ պատահարներու և կորուստի։

Ուրեմն երաժշտանոցի մը հիմնական նպատակը պիտի ըլլա՝ մեկ կողմեն հասցնել լուրջ երաժշտագետներ, շարունակելու համար Կոմիտաս վարդապետի սկսած գործը, մշակելու հայ երաժշտությունը և եվրոպա-

---

[80] Հայտագրին մաս կկազմեին, օրինակ, «Վարդանի երգը», «Իմ սիրելիս», «Ես լանցի»։

[81] «Նավասարդ», Բուքրեշ, 1925, հուլիս—օգոստոս, էջ 123։

նանին հետ տարածելու հայ ժողովուրդին մեջ, մյուս կողմեն՝ տրամադրելի ժամանակ ու միջոցներ հայթայթելու Կոմիտաս վարդապետին՝ հրատարակելու դասագրքեր, իր մասնագիտական ուսումնասիրությանց թանկարժեք արդյունքը և այն բոլոր աշխատությունները, որ կարևոր են համագրելու և մեկերպելու հայ երաժշտությունը իրրև արվեստ։

Իսկ այսպիսի ձեռնարկ մը պետք է որ հասկցվի, թե հայ ժողովուրդի պատմության և անոր քաղաքակրթության գործին համար անգնահատելի ծառայություն մըն է։ Ազգերը իրենց պատմության ճակատին շուրջը ոսկիե և արծաթե, բսել կուգենք նյութական բարգավաճության փառքը չէ որ կկրեն իրրև պսակ. հին Հունաստանը փոքր և աղքատ ժողովուրդ մըն էր. բայց իր «ճակատով աստղերու դպավ»,— որովհետև կրցավ ունենալ հոգեկան ստեղծագործություն, գիտցավ պահպանել իր մեծ քաղաքակրթությունը և անով դաստիարակել գալիք սերունդները։

Մենք հավատացած ենք, թե հայ երաժշտանոց մը, իր գործունեությամբ ինքնին պիտի չսահմանափակվի միայն հայ հասարակության մեջ, այլ ակամա իր ներգործությունը զգալի պիտի դարձնե և պիտի տարածե նաև բնակակից մանավանդ մեր թուրք հայրենակիցներու հոգեկան աշխարհին ալ ներս։ Տեսեք Զուխաճյանի մը մեկ գործը, «Էլբլերիջի Հորհորը», թե ի՞նչ ահագին բարեշրջական դեր է կատարած թուրք ժողովուրդին մեջ, ինչքա՞ն նպաստած է անոր հոգեկան աղնվացման և հանդիսացած մնայուն կապերեն մեկը՝ հայ և թուրք ժողովուրդներու զգացումի հաղորդակցության։

Հայ երաժշտանոցի մը հիմնարկությունը կոչված է այդ գերն ալ կատարելու, կոչված է բարձրացնելու արևելքցիի հոգին, դարձնելու զայն ընդունակ ազնիվ հուզումներու և ներշնչելու անոր բարություն, քնքշություն և խանդաղատանք, ինչ որ, ավա՞ղ, շատ է պակաս այս երկրին մեջ...»[52]։

Խանդավառությամբ չէ միայն, որ իրականություն կգտնեն մեր ծրագիրները։

Երաժշտանոց մը իրականացնելու համար նյութական միջոցներ ևս անհրաժեշտ էին, ու պանոնք ստեղծել այնքան ալ դյուրին չէր։ Համերգներու հասույթը չէր որ պիտի ապահովեր դանոնք, ինչպես կարծվեցավ պահ մը։

Համերգը, զոր Կոմիտաս տվավ 1911 մարտ 20-ին (ապրիլ 2) Ցունիոն-Ֆրանսեզի սրահին մեջ, հիմնելի երաժշտանոցի օգտին էր։ Այդ առթիվ թերթերուն տրված աղգը կրսեր, թե «Երաժշտանոցի նպատակն է պատրաստել կարող երաժիշտներ միաձայն կամ բազմաձայն, եկեղեցական կամ աշխարհիկ երաժշտական գեղարվեստական խումբեր կազմելու և վարելու, որպես և մասնագետ երգիչներու և նվագողներու ապագա կատարելագործությունը դյուրացնելու համար». խոսելով հետո օրվան հայտագրին մասին, կրսեր, թե «այս համերգը պետք է պարունակե զուտ հայ գեղջուկ երաժշտություն. ծանոթ ընտիր կտորներու վրա ավելցված են տասը նոր գեղջուկ երգեր ես. պիտի երգվին գութանի, սայլի. կալի, քաղհանի, երկաթուղվո, կաթ կթելու, սիրո, զավեշտական, ծաղրական, վիպական, անտունի, հարսանեկան, պարի երգեր, առակերգ և քայլերգ։ Հայտագրի յուրաքանչյուր երգի կազմությունը՝ բանաստեղծությունը, եղանակը և դաշնավորումը նախ Կոմիտաս վարդապետ պետք է հակիրճ վերլուծե և ապա բացատրվածները երգվին։ Համերգին և Զեռաց տեատրակին ամբողջ հասույթը հատկացված է հիմնելի Հայ երաժշտանոցին»[53]։

Ոչ համերգներով, ոչ ալ Զեռաց տեատրակներով կարելի պիտի բլլար ստեղծել սակայն նյութական անհրաժեշտ միջոցները երաժշտանոց մը հիմնելու համար Պոլսո մեջ։ Մտավորականության ծափերը և հանրության պղատոնական զուրգուրանքը ևս անզոր էին իրականացնելու Կոմիտասի ծրագիրը։

Այս անգամ ևս խոսքը կմնար, ավա՞ղ, հայ մեծատունին։

X.— Կոմիտաս և իր «հովանավոր»-ները

Կոմիտաս ինքն ալ կզգար, որ իր ստեղծած ոգևորությունը բավական չէր գլուխ հանելու համար իր մեծ ծրագիրը։ Այդ ոգևորությունը դեր պիտի ունենար անշուշտ իր վաղվան ձեռնարկներուն մեջ, բայց նյութական միջոցներ անհրաժեշտ էին, որպեսզի մարմին առնեին անոնք։ Առանց նյութական բացառիկ զոհողության կարելի չէր, օրինակ, երաժշտանոցի մը հիմնադրություն. գլուխ հանել Պոլսո մեջ։ Ու Կոմիտաս միամտությունն ունեցավ կարծելու, որ զորավիգ կրնան բլլալ իրեն այդ մեծ նպատակին մեջ այն քանի մը համակրելի դեմքերը, որոնք սիրով կմեծարեին զինքը իրենց հարկին տակ և որոնց սալոններուն մեջ ի պատվի էին միշտ երգն ու երաժշտությունը։ Ար-

[52] «Ազատամարտ», 1911 մարտ 1/14, թիվ 528։

[53] «Ազատամարտ», 1911 մարտ 19/1 ապրիլ, թիվ 542։

դարն, անոնք չէին ոլլացեր իրենց աշակցութիւնը համերդներու կազմակերպութեան առթիւ, թեև այդ աշակցութեան երբեք պետք չկար, որպեսզի ժողովուրդը խուռներամ խումբեր Կոմիտասն ու իր խոսքը լսելու համար։

Պոլսո կյանքին ծանոթ եղողները դիտեն, թե այն օրերուն ստեղծված էր նոր դաս մը հայ քաղաքներու։ Հին ամիրաները արդեն վաղուց պատմութեան անցած, անոնց հաջորդող երիտասարդներն ալ պատմութեան էին սկսած անցնիլ տակավ։ Սկսած էր կազմվիլ նոր բուրժուազի մը, որուն հիմը միշտ երիտասարդն էր սակայն, թեև Արևմուտքի ջնարակը վրան։ Ան բոլորովին կտրված չէր անշուշտ հայ կյանքեն, ինչպես էին Թիֆլիսի կամ Բաքվի հարուստներեն շատերը, բայց իր հայութիւնը շատ չէր հեռանար ժամուն բակեն։ Ան հազորդ չէր հայ ժողովուրդի մեծ հուզումներուն ու իր սեփական ժամանցներն ու հաճույքներն ուներ, Պոլսո մեջ առանձին խավ մը կազմած, դանդվածը միշտ խորթ սեպելով իրեն։

Այդ դասը արվեստն հասկցող կկարծեր ինքզինքը։ Քանի մը օտար մեծ դերասան տեսած կամ բանի մը եվրոպական թանգարան այցելած ըլլալ բավ կսեպեր իրեն որպեսզի արվեստն ճաշակ, կամ վերեն նայի հայ արժեքներու վրա, պարծանք կթվեր իրեն հայ հեղինակի մը չհավնիլ, հայ թերթը արհամարհել կամ բանի տեղ չդնել հայ արվեստագետը։

Ասոնց մեջ արվեստն հասկցողներ երբեմն իրապես կային, իսկ ազոնք ավելի ևս իրավունք ունենալ կկարծեին դերագնահատելու ինչ որ օտարին էր, ու հայ արժեքներու մեջ բիծեր միայն փնտռելու։

Մեծ ժեստերու ընդունակ մարդիկ չկային սակայն արվեստի այդ բարեկամներուն մեջ։ Թատրոնի կամ համերգի տոմսակ մը չմերժելով, իրենց ուղարկված դիրքը կամ թերթը չդարձնելով ետ, և երբեմն ալ այս կամ այն դրագետն ու արվեստագետը սեղանակից ընելով իրենց, կկարծեին իրենց բովանդակ պարտքը հատուցած ըլլալ արվեստի հանդեպ։

Սխալեցան անոնք անդամ մը միայն, Արեյյան-Արմենյան խումբին Պոլիս եկած ատենը, «Հուրրիեթ»-ի առաջին օրերուն։ Գացին, լեցուցին օթյակները և ծափահարեցին ալ. որովհետև Զոհրապ հավներ էր խումբին ու անոր ներկայացումներուն կերթար, իսկ Զոհրապին խոսքը այն օրերուն պատգամ էր։ Հետո դարձյալ իրենց դպաղարյունը գտան, ու Կովկասեն եկող մյուս խումբերը այդ դասեն քիչերը միայն ունեցան իրենց ներկայացումներուն, թեև Արեյյանին կամ Արմենյանին նման դերասաններ նոր խումբերուն մեջ ալ կային։ Այդ նոր խումբերուն գորավիդը ավելի համեստ խավերը եղան։

Կոմիտասի հմայքը այդ դասը ևս կոչարդեց սակայն մեկեն։ Գնաց դայն իսկույն շրջապատեց, և հազար խոստում շռայլեց անոր։ Ազգոր ցույց մը էր անշուշտ ասիկա, բայց ցույցերով չէ որ տեսական կրլլան մեծ ձեռնարկները։ Եվ սակայն Կոմիտաս պահ մը հույս դրավ անոնց այս ինքնաբեր պատրաստակամութեան վրա, և հավանութիւն տվավ, որ անոնք հովանավորեն իր վաղվան երաժշտանոցը։ Հովանավոր այդ հանձնախումբը կկազմեին Արամ Հայաճյան, Արմենակ Մանուկյան, Աստվածատուր Հարենց, Արսեն Արսենյան, Եղիազար Գարակյոզյան, Մարտեն Հակոբյան, Մարտիկ Էքսերճյան, Սիսակ Աշճյան և դոկտ. Վահրամ Թորգոմյան, համակրելի մարդիկ բոլորն ալ, և իրենք պիրենք արվեստի բարեկամ կարծող։ Բայց այդքան միայն։ Միամտութիւն էր կարծել, որ երաժշտանոց մը կրնան ստեղծել անոնք։

Որքա՞ն իրավունք ուներ «Ոստան» իր թերահավատութիւնը դգացնելու համար առաջին իսկ պահեն։ «Հայ երաժշտանոց»-ին նվիրված հոդվածի մը մեջ ան կգրեր.

«Կոմիտաս վարդապետի տեսչութեամբ հայ երաժշտանոց մը հիմնելու զաղափարը պիտի իրագործվի։ Այս առթիվ կազմված է մասնախումբ մը ծանոթ անձերե, որոնք նպատակին իրագործման համար հարկ եղած դրամագլուխը պիտի հայթայթեն։ Չենք դիտեր որքան տեսական պիտի ըլլա գործը, նկատի ունենալով թրքահայերու հանկարծական խանգավառութիւնը ու հետո անտեղի պաղութիւնը յուրաքանչյուր սկսված և կարևոր գործի մասին։ Երաժշտանոց մը խիստ կարևոր է մեզի համար կրկնակի տեսակետով. նախ ծանոթացնելու և տանելու համար հայ երաժշտութիւնը ժողովրդական բոլոր խավերուն մեջ, ու զայն մշակելու համար, երկրորդ, կարգի բերելու համար եկեղեցական կամայականորեն խաթարված երաժշտութիւնը։ Ատանկ հաստատութիւն մը բարիք մըն է, բայց խնդիրը դայն տեսական դարձնելուն մեջ կկայանա»[1]։

Երաժշտանոցը ստեղծելու համար տարբեր մարդիկ պետք էին. բայց դանոնք ուրիշ խավերու մեջ պետք էր փնտռել. շողշողուն անունները հաճախ կամջացնեն ձեռնարկը։

Հանձնախումբը կազմող անուններուն մեջ կային այնպիսիները, որոնք պիտի կրնային իրենք, մինակնի՞ն, երաժշտանոցի մը նյութական ամբողջ հոգը ստանձնել։ Քանի մը

[1] «Ոստան», 1911 ապրիլ, թիվ 2, էջ 456։

հարգելի բացառություններն զատ, որոնք Կոմիտասի կողքին մնացին միշտ, Կոմիտասի մնացյալ «հովանավորներ»-ներուն բովանդակ աշխատանքն եղավ անոր համերգներեն գոյացած հասույթը գանձել և մատակարարել, այսինքն անով հոգալ վարդապետին ծախքերը, որ մըն ալ իսպառ լքելու համար դայն, երբոր պիտի հատներ համերգներեն գոյացած գումարը։

Այդ տխուր էջը մենք դեռ պիտի բանանք հետո։

* * *

Շատերն անոնցմե, որ Կոմիտասի կյանքն ու գործունեությունը կփորձեն պրպտել նոր օրերու մեջ, զարհուրած դժնդակ դրվագներեն, որոնք հյուսեցին անոր վերջին տարիներու կյանքը եղերական վախճանի մը հասցնելու համար դայն, սխալած կգտնեն Կոմիտասը՝ Պոլիս գալու իր որոշումին համար։ Այո՛, Կոմիտասի տարիները Պոլսո մեջ ողբերգությամբ մը պիտի վերջանային։ Բայց այդ ողբերգությունը նախատեսել չէր կրնար Կոմիտաս, ոչ ալ անոնք, որ քաջալերեր էին դայն Պոլիս գալու իր ծրագրին մեջ։

Ոմանք Կոմիտասի կյանքն ու գործունեությունը պրպտած ատեն նոր օրերու մեջ, կափսոսան անոր Պոլիս գալուն համար։ Ոչինչ պիտի առարկեինք, եթե զիրենք այդ համոզման մղողը դժնդակ այն դրվագներն ըլլային, որոնք իր վերջին տարիներու կյանքը հյուսեցին եղերական վախճանի մը հասցնելու համար դայն։ Այո՛, Կոմիտաս ողբերգությամբ գուցե չփակեր իր կյանքը, եթե Պոլիս չգտնվեր աղետի տարիներուն։

Բայց կան ալ, որ այն կարծիքն ունին, թե Կոմիտաս աննպաստ միջավայր մը կուգար Պոլիս ոտք կոխած ատեն։

Ալեքսանդր Շահվերդյան, հայ անվանի երաժշտագետը, որ այնքան գուրգուրանքով վերլուծած է Կոմիտասի կյանքն ու գործը, կգրե, օրինակ.

«Որոշ կենսագիրներ չպատճառաբանված ու անհիմն բարեհոգությամբ են խոսում այն տարիների մասին, որ անցկացրեց Կ. Պոլսում, որտեղ նա իբր թե լայն ասպարեզ գտավ իր գործունեության և աջակցություն՝ իր ընդարձակ ծրագրերն իրագործելու համար։ Ավա՜ղ, ամենևին էլ այդպես չի եղել։ Կոմիտասի գործունեության համար Կ. Պոլսի միջավայրը նույնքան աննպաստ էր, որքան որ Էջմիածնի միջավայրը։ Ավելին՝ այժմ նա հեռու էր բուն ժողովրդից, ժողովրդական-գյուղական կենցաղից և ժողովրդական ստեղծագործությունից, որի հետ առաջ սիրով ու մշտապես շփվում էր, հենց որ վանքի պարսպից դուրս էր գալիս։ Բացի դրանից, Կ. Պոլսում առանձնացած ու կենտրոնացած աշխատելու ո՛չ ժամանակ ունեցավ նա, ո՛չ պայմաններ։ Նրա ժամանակն անցնում էր տենդագին գործունեության և համարյա անվերջ ուղևորությունների մեջ»[35]։

Հեռու մեզմե կարծել, թե վարդ հավաքելու կուգար Կոմիտաս Պոլիս։ Այս էջերուն մեջ շատ բան պատմեցինք և դեռ պիտի պատմենք այն փուշերուն մասին, զորս Կոմիտաս Պոլիս ևս քաղեց, ինչպես քաղեր էր Պոլիս չեկած ալ։

Հայ բրածոն նույնն է ամենուրեք. թշնամի ամեն նոր շունչի. Պոլիսը բացառություն պիտի չկազմեր։ Ու Կոմիտաս ինքը ևս պիտի հանդիպեր նման բթամիտներու, որոնց հոգին պիտի չկարենար լայննալ, ըմբռնելու համար իր առաքելությունը։ Հայ ժողովուրդեն ուծացած հայեր ամեն տեղ ալ կան, ու չզարմանանք, եթե Պոլիս ալ ուներ իր լեանտեններ։ Կոմիտասի որին ևս Պոլսո մեջ դեռ պիտի վխտային անոնցմե, որոնց հոգիին պիտի չխոսեր հայ գեղջուկն ու իր երգը։

Եվ վերջապես ուր ալ երթաս, ժլատ պիտի գտնես հայ ուսեալները, ու քիչերու միայն պիտի հանդիպիս, որ իրենց քսակը գիտնան բանալ կարիքի պահուն։ Այդպիսիներեն Պոլիսն ալ ուներ և անոնց պիտի պատահեր Կոմիտաս ևս։

Ի՜նչ ընենք, այդպես էր Պոլիս քաղաքը։ Հոսհոս ու հերոս, չարչի ու արտիստ տվավ իր ծոցեն։ Մերթ փոթորկեցավ, խառնվեցավ հայ ժողովուրդի մեծ հուզումներուն, տեր կանգնեցավ հայ դատին, ու մերթ ալ սողաց, քծնեցավ, լորձնաշուրթն փառաբանեց։ Դուրյան մը տվավ, ու դայն ճանչցավ դաղտագր դնելե հետո միայն, հայ բեմն ստեղծեց ու անոր մեծ աստղերը, բայց թողուց, որ Ադամյան մը թշվառության մեջ աչքերը փակե, ամբողջ քառորդ դար ան զվարթացավ ու զվարճացավ Պարոնյանի շնորհիվ ու փոխարեն ժպիտ մը զլացավ անոր։

Ընթերցողները տիրացուներու, լրագրության բրածոներու, լեանտեններու Պոլիսը, որ Կոմիտասը չըմբռնեց կամ զորավիգ չեղավ անոր, թող չշփոթեն սակայն այն մյուս Պոլիսին հետ, որ իր գիրկը այնքան գուրգուրանքով բացավ հայ երգի վարպետին։ Կոմիտաս բովանդակ մտավորականություն մը իր կողքին ունեցավ, ու երիտասարդներու ամբողջ դասգված մը, որ իրմով դյուքված,

[35] Ալեքսանդր Շահվերդյան, «Հայ երաժշտության պատմության ակնարկներ», Երևան, 1959, էջ 365։

իր ստվերեն ա՛լ չհեռացավ։ Ու դեռ, կախարդական Վարպետին հմայքին տակ, լայն խավերը կային, որոնց ներսը հրաշք էր կատարեր հայ երգը։

Ասոնք բոլորը, արդեն, ուրիշ Պոլիս մըն էին, Վարդապետի՛ն Պոլիսը։ Ու եթե պայմանները այնքան արժանի չըլլային, ամեն հայ շունչ թառամեցնելու համար սուլթաններու մայրաքաղաքին մեջ, համեստ այդ Պոլիսը պիտի կրնար արգասավորել Կոմիտասի ճիգերը, երաժշտանոց մը պարգևել անոր։ Հայ ժողովուրդը իր մեծ ձեռնարկները համեստ խավերուն է որ պարտական է միշտ, թեև անոնց փառքը մեծատուններն են որ հափշտակած են։ Հայ ժողովուրդին լումաներն են, որ կանգուն պահած են իր եկեղեցիներն ու դպրոցները, իր որբանոցներն ու հիվանդանոցները։ Անոնց ճակտին գրոշմված շողշողուն անունները թող մեզ չշփոթեցնեն։ Անանուն կանգված է դիմացուցեր հայ սրբությունները։ Եվ ան է, որ պիտի կարենար դառնալ անոնց բուն հովանավորը, եթե կյանքը ընթանար այն միևնույն խանգավտության մեջ, զոր Կոմիտաս իր շուրջը գտավ 1913—1914 տարիներուն։

XI.— «Գուսան» երգչախումբը

Կոմիտաս Պոլսո մեջ իր առաջին համերգները տվեր էր աճապարանքով։ Քանի մը շաբթվան փորձերով երեք հարյուր հոգի կրցեր էր հանել բեմ։ Իր մոգական ուժը միայն կրնար հապճեպ կազմված այդ խումբով հափշտակել Պոլիսը։

Հիմա սակայն ա՛լ ատեն էր մարզված մնայուն խումբ ունենալ։

Եվրոպայեն դառնալե հետո իր առաջին մտահոգությունն եղավ այդ։

1912 հունվարին Պոլսո թերթերը արդեն կգրեին.

«Կազմվելու վրա է, Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ, գեղարվեստական երգեցիկ խումբ մը։ Մասնակցիլ ուզողները պետք է նկատի ունենան հետևյալ պայմանները.— ա) Իգական սեռը 16 և արականը 18 տարեկանեն վեր պետք է ըլլան։ բ) Կպահանջվի ձայն և լսողություն։ գ) Խումբը պիտի ըլլա մնայուն։ դ) Խումբին անդամները առանց թույլտվության ուրիշ տեղեր չպիտի կարենան երգել։ ե) Մասնակցողները ընկերություն մը պիտի կազմեն որոշ կանոններու ենթակա։ զ) Պիտի սորվին և ուսանին ձրիապես եկեղեցական և աշխարհիկ ազգային և օտար երաժշտութենեն հատընտիրներ։ է) Պիտի ավանդվի նաև եվրոպական տարբական երաժշտություն, խմբական շնչամարդություն, ձայնամարդություն, ձայնական առողջապահություն, երգական վերլուծություն և երաժշտության համառոտ ընդհանուր պատմություն։ ը) Ժողովատեղին է Թերա, Էսայան վարժարանի սրահը։ Դասերը պիտի սկսին կեսօրներեն ետքը 4½-ին իգական, և 5½-ին արական սեռի համար, մեկ ժամ օրընդմեջ, իսկ կիրակի օրերը բոլորը միասին։ թ) Մասնավոր դաս (ձայնամարդություն, շնչամարդություն, ձայնական առողջապահություն, երգեցողություն, ներդաշնակություն, խմբավարություն) կրնան առնել միայն երաժշտական ընդունակությամբ օժտվածները։ Այդպիսիներեն միայն շունչորները ձրի։ ժ) Ընդունելության օրերն են 1912 հունվար 8, կիրակի, կեսօրեն ետքը ժամը 1—4, հունվար 9, երկուշաբթի և հունվար 10 երեքշաբթի կեսօրեն ետքը ժամը 4½—5½՝ իգական սեռի համար, և 1912 հունվար 11, 12 և 13, կեսօրեն ետքը ժամը 4½—6½՝ արական սեռի համար։

Այս խումբը՝ հիմնվելիք հայ երաժշտանոցին նախաբայլը պիտի ըլլա»[86]։

Ու ահա այդ օրերեն կթվագրվի մնայուն երգչախումբը, զոր Կոմիտաս կազմեց ու մարզեց Պոլսո մեջ։

Առաջին իսկ ծանուցումը բավ էր եղեր, որ երիտասարդներու և պատանիներու ստվար խումբ մը իրեն վազե Պոլսո բոլոր թաղերեն։

Երգչախումբը «Գուսան» մկրտեց ան, ու անմիջապես սկսավ իր դասերուն։

«Գուսան» երգչախումբի կորիզը Կեդրոնականի հին և նոր սաներն եղան, առավելապես անոնք որ մարզվեր էին ատենին Զիլինկիրյանի և Մանասի ձեռքին տակ։ Բայց Կոմիտաս կարիք ուներ իգական ուժերու ալ, և այդ ուժերը անոր հայթայթեց առավելապես Բերայի Էսայան վարժարանը, վարդապետին տրամադրության տակ դնելով ուսուցչուհիներու ամբողջ խումբը և աղջկանց լրացուցիչ դասընթացքի երեք դասարանները։

Սխալ պիտի ըլլար կարծել, թե «Գուսան» երգչախումբը առաջին իսկ օրեն իբր կատարելություն մը կներկայանար։ Ճիշտ է որ զտումե մը անցած էին այն 300 երգիչներն ու երգչուհիները, որոնցմով Կոմիտաս կազմեր էր իր առաջին համերգները Պոլսո մեջ։ Բայց այդ զտված խումբին մեջ անգամ փոքր թիվ մը չէին կազմեր երաժշտական հիմնական կրթութենե զուրկ տարրերը, և եթե «Գուսան»-ը իր առաջին համերգներեն իսկ տպավորություն թողուց, այդ բանը ան պարտական էր խումբ մարդելու և վարելու մեջ Կոմիտասի ունեցած մոգական ուժին։

---

[86] «Ազատամարտ», 1912 հունվար 4/17, թիվ 788։

Այնպես որ ավելի բան չափազանցություն է բռնել, ինչպես այդ կընե Աղավնի Մեսրոպյան, թե «Կոմիտասի բացառիկ աշխատասիրությունը, միացած խոր գիտության և ձեռներեցության, ինչպես նաև արվեստի մեծ բծախնդրության, «Գուսան» երգչախումբին ավին հռչակավոր կապելլայի մը կատարելությունը»[87]։

Շատ ալ չմեղադրենք ուրն։՝ երաժշտագետ Ալեքսանդր Շահվերդյանը իր հետագա տողերուն համար.

«Այն երազանքը, որ փայփայում էր Կոմիտասը Կ. Պոլիս ուղևորվելիս, հայկական առաջին կոնսերվատորիան հիմնելու երազանքը, անիրագործելի եղավ։ Ու թեև Կ. Պոլսում Կոմիտասը հափշտակությամբ է իր ուժն ու ժամանակը տալիս մանկավարժությանը և բծախնդիր կերպով հետևում իր աշակերտների բազմակողմանի առաջադիմությանը, սակայն ազգային երաժշտական կարգեր աճեցնելու հնարավորություն չի ունենում։ Ճիշտ է, Կ. Պոլսում նա կազմում է 300 հոգուց բաղկացած մի մեծ, երկսեռ երգչախումբ, որին տալիս է «Գուսան» անունը։ Բայց հազիվ թե այս կատարողական մեծաթիվ կոլեկտիվը իր որակով գերազանցեր երկար տարիների ընթացքում Կոմիտասի ձեռքով զուրգուրանքով աճեցված էջմիածնի խմբից, որտեղ բարձր պարտիաները կատարում էին մանկական բյուրեղանման ջինջ ձայները, մի երգչախումբ, որի կարգապահության, բարեհնչունության ու արտահայտության մասին մնացել են ժամանակակիցների հիացական կարծիքները։

Այն, ինչ Կոմիտասը կրքոտ կերպով փնտռում էր, այսինքն՝ իր նախաձեռնումներն ընկալելու ու զարգացնելու ընդունակ, բարձր կուլտուրական մի միջավայր, Կոստանդնուպոլսում չգտավ...»[88]։

Շահվերդյան տարբեր չափազանցության մեջ կիյնա իր կարգին։ Այդ տողերը գրած առեն ան տեղյակ չէր հավանաբար Կոմիտասի իր իսկ կարծիքին՝ էջմիածնի իր խումբին և Պոլսո մեջ իր գտած տարբերուն մասին։ Տեսանք, թե որքան դժգոհ էր ան այն հարատև փոփոխություններեն, որոնք տեղի կունենային էջմիածնի իր խումբին մեջ, Ճեմարանի սաներուն մշտական փոփոխության երեսեն։

Գալով Պոլսո մեջ իր գտած տարբերուն, Կոմիտասս 1912 մարտ 15/28-ին Պոլսեն կգրեր Փարիզ՝ Մարգարիտ Բարայանին.

«Մշտական խումբ ունիմ բաղկացած 200 հոգուց՝ երկսեռ և ընտիր ձայներ. թե՛ ընդունելությունը և թե՛ ընտրությունը խիստ եմ կատարել, որպեսզի գործը հիմնավոր ստանիմ։ Այժմ բոլոր ուժերս կրկնապատկել եմ, որ երաժշտանոցի գործը գլուխ բերեմ. ուզում եմ նախ շենքը գլուխ բերել, որ տեղական լինի. ուստի գործը ձգձգվում է մի քիչ, բայց հոգ չէ, հույսս վառ է, անդադար գլուխ պետք է հանեմ և քեզ էլ պիտի քարշ տամ այստեղ։— Անցյալ օրը եկավ մի հայ աղջիկ, ձայնը փորձեցի, աստվածային՝ն, Մարգո ջան, մոտս լինեիր և մի լսեիր. խելագարվելի՛ բան էր. բնությունն ամեն բան կատարյալ էր տվել. ձայն, հասակ, գեղեցկություն, խելք, շարժուձև, զգացում, շնորհալիություն... մի խոսքով, ես խելագարվեցա... բայց... բայց... ամեն բան վերջացած էր դրանով. մայրը ամուսնացնելու է հենց էս Զատկից հետո. մայրն էլ մոտս էր։ Սաստիկ զայրացա և ասացի, որ մարգասպան է ինքը, մի այսպիսի հրաշք հանդցնում է. աղջիկն էլ սկսավ լալ և խոստովանիլ տվավ, թե որքան աղաչել է մորը, որ ուզարկի իրեն արտասահման սովորե. ինքը զգացել է, թե բան կա իր մեջ. այրվել է։ ... Ահա քեզ, թե ինչե՞ր են կորչում և ի՞նչպես, ի՞նչ տաղանդներ և հանճարներ են անհայտանում, այրվում տգիտության երեսից։

.. Ա՜խ, որքան եմ ցանկանում, որ մեր երաժշտանոցը բացվեր և դուն էլ գայիր այստեղ ու միասին առաջ մղեինք երաժշտությունը մեր շրջանակի մեջ. չե՞ս իմանում, թե ի՞նչ ընդունակություններ կան և որքան սիրում են «գեղարվեստը»...»[89]։

1913 սեպտեմբերին «Գուսան» երգչախումբը նոր թափ կստանա։ Տաճերու գյուտի տոնին նախօրյակին էր, որ խումբը կպատրաստվեր մասնակցելու տոնական հանդիսությանը։ Կոմիտաս վարդապետ, մամուլի միջոցով, հրավեր կուղղեր փափագողներուն գալ անդամակցելու նոր կազմվելիք խումբին[90]։

Տաճերու գյուտի հոբելյանին «Գուսան» երգչախումբը իսկապես գերազանցեց ինքզինքը։ Բայց, ավա՜ղ, խումբը հաղիվ քանի մը ամսվան կյանք պիտի ունենար անկե հետո...։

---

[87] «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 231։

[88] Ալեքսանդր Շանվերդյան, հիշված աշխատությունը, էջ 366։

[89] Մարգարիտ Բարայան, «Կոմիտաս վարդապետ իր նամակների միջոցով», «Մշակույթ», Փարիզ, 1935։

[90] «Ազատամարտ», 1913 սեպտեմբեր 23 (10 հոկտեմբեր), թիվ 1326։

(Շարունակելի)

ՀԱՄԱՍՏԵՂԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Այս տարի լրանում է Համաստեղի գրական գործունեության հիսնամյակը և ծննդյան յոթանասնամյակը։

Այս առթիվ ԱՄՆ-ում կազմվել է հոբելյանական հանձնաժողով՝ արժանավայել հանդիսությամբ տոնելու անվանի գրողի հոբելյանը, մեծարելու համար հայ տաղանդավոր գրողի, հայրենասեր և ազնվահոգի հայ մարդու գրական հիսնամյա վաստակը։

Համաստեղը արևմտահայ մեր նորագույն գրականության պայծառ դեմքերից մեկն է, աննահանջ նվիրյալը, որի գրական ժառանգությունը անմեռ կմնա հայ գրականության պատմության մեջ։

Մեր գրասեր հասարակությունը, մեր մամուլն ու գրական շրջանակները իրենց երախտագիտության, հարգանքի և սիրո տուրքը կբերեն մեծ գրողին, նրա գրական գործունեության հիսնամյակի և ծննդյան յոթանասնամյակի ուրախ առիթով։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, սիրով ընդառաջելով հոբելյանական հանձնաժողովի խնդրանքին, իր ողջույնի և օրհնության խոսքն է ուղղել հարգելի հոբելյարին հետևյալ ջերմ գրությամբ.

ՈՂՋՈՒՅՆ ՀԱՄԱՍՏԵՂԻՆ

Ինչքա՜ն նշանակալից և ինչքա՜ն մխիթարական է ամենուս համար, մեր ազգային մեծ եղեռնի հիսնամյակեն անմիջապես հետո, տոնել հիսուն տարիները՝ բոլորիս սիրելի Համաստեղի գրական ստեղծագործության։

Հիրավի, այն անավոր օրերուն, երբ մեր ազգը կմեռներ ու անոր կյանքին լույսը կմարեր, ծնավ և շողալ սկսավ Համաստեղի հոգին։

Ու այնուհետև, հիսուն տարիներ շարունակ, այդ հոգին ապրեցավ և լուսավորեց, նահատակ ամբողջ ժողովուրդի մը վիշտը իր մեջ առած, պայծառ տեսիլքով Մայր Հայաստանի վերածնունդին։

Այդ տեսիլքով և իր ամբողջ կյանքով ու գործով, Համաստեղ ինք ևս հանդիսացավ իրավ մեկ վկայությունը հայ ժողովուրդի գոյատևելու և ստեղծագործելու անմահ ուժերուն։

Ան պատմեց մեր սերունդին, ինչպես ոչ ոք, օրորի մը պես անուշ և խաղաղ ու իր հյութեղ խոսքի վրձինով, պատկերեց վճիտ ու գունագեղ՝ իր հեռավոր մանկության գյուղը հայրենի, որ այսօր երազ է միայն։

Պիտի անցնին տարիներ, պիտի գան նոր ժամանակներ, բայց Համաստեղ նույն քաղցրությամբ և նույն թարմությամբ պիտի պատմե ոսկի երազը իր հոգիին, գալիք բոլոր սերունդներուն։

Հայ գրականության երկնակամարին վրա, Համաստեղ միշտ բարձրացող աստղ մնն է։

Հայոց Մայր Հողեն, Ս. Էջմիածնեն, Օշականի Մեծ Վարդապետեն և Մեր սրտեն՝ ողջույն և օրհնություն Համաստեղին, մեր ժողովուրդի հարազատ զավկին ու անոր գրական վաստակին։

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

11 մարտ 1966
ԷՋՄԻԱԾԻՆ

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սրտագին շնորհավորում է տաղանդավոր հոբելյարին, բարեմաղթելով նրան ստեղծագործական նոր նվաճումներ՝ ի փառս հայ մշակույթի։



Ա. ԱԼԻՔՅԱՆ

ՀԱՅ ԳՅՈՒՂԻ ԱՆՆՄԱՆ ՍՐՆԳԱՀԱՐԸ

Համաստեղի ծննդյան յոթանասնամյակին և գրական գործունեության հինսամյակին նվիրված այս գրությունը ուզում եմ ծերունազարդ հուշագիրների ձևով ու հոգեբանությամբ սկսել։

Հազիվ պատանի էի դեռ։ Ունեի մի դրասեր ազգական, որ նաև բանաստեղծություններ էր գրում։ Նա սովորություն ուներ գիրք կարդալու, նստած իր գյուղական տան բակի սահատ թթենու տակ։ Ես էլ սովորություն էի դարձրել մոտենալ նրան և, հակվելով ու պպզելով, կարդալ նրա բաց գրքի խորագիրը և հեղինակի անունը։ Առաջին անգամ այս ձևով եմ կարդացել Միսակ Մեծարենցի «Միածանո»-ը, «Նոր տաղեր»-ը և քերթվածները, Մատթեոս Զարիֆյանի «Տրտմության և խաղաղության երգեր»-ը։ Մի օր էլ նույն այս դիրքով ճգնում էի վերծանել մի հաստկեկ հատորի թռչնագիր խորագիրը, երբ ազգականս հանկարծ փակեց գիրքը ու ինձ երկարելով այն՝ սրախոսեց.

— Ա՛ռ, կարդա՛։ Համաստեղ։ Հա՛մ կա այստեղ։

Վերցրի։ Համաստեղի «Անձրև»-ն էր։ Կարդացի։ Եվ այդ օրվանից մեր գյուղն ավելի կենդանացավ աչքիս, առարկաներն ու արարածները խորհրդանշական իմաստներ ստացան, և ես չհասկացա՝ գի՞րքը խառնվեց, նույնացավ գյուղի հետ, թե՞ հակառակը տեղի ունեցավ։ Այն ժամանակ ես այդ հանկարծական փոփոխությամբ հասկացա ու բացատրեցի ազգականիս «Հա՛մ կա այստեղ» արտահայտությունը։ Եվ, տարօրինակ է, նույնիսկ հիմա՝ Համաստեղին ավելի բաղմակողմանի ըմբռնելուց հետո էլ, ուրիշ բացատրություն չունեմ ազգականիս այդ խոսքին։

Արևմտահայ գյուղագրությունը (Թլկատինցի, Ռ Ջարդարյան, Մշո Գեղամ) իր աղնվագույն և համամարդկային արտահայտությունը գտավ հանձին Համաստեղի։ Բացի տաղանդից, այստեղ ճակատագրական դեր խաղաց նաև հանգամանքը, որ մինչ մեր մյուս գյուղագիրներն իրենց հայրենի տան մնջ կամ կարելի հեռավորության վրա նկարագրեցին իրենց գոյություն ունեցող գյուղն ու նրա առօրյան, Համաստեղն իր անբուժելի, անդարմանելի կարոտի միջից վերարտադրեց, իր հիշատակների տեսությամբ վերակառուցեց ու տվեց գյուղակարոտ վերապրողներին։ Առաջին հերթին հարկավոր է այս պարագան շեշտել, որովհետև այդ անելանելի կատարն էր, որ ծայր աստիճան սրեց Համաստեղի զգայարանները և կորստի ցավը գեղարվեստորեն հատուցելու պահանջի վերածվեց նրա մեջ։ Միջոներն ու Ջալոները, կամ Ամուներն ու Տափան Մարդարները կենդանացան, ահագնացան և իրենց ապրելու, տևելու իրավունքն աղերսեցին, և Համաստեղը ունկնդրեց նրանց իր բնածին տաղանդի ամենայն ջերմությամբ ու կարոտաբաղձությամբ։ Հեռավոր ու աղմկոտ Ամերիկան չկարողացավ խլացնել այս ձայները, ընդհակառակը, ինչպես հողմակոծ ծովն է շեշտում ժայռերի ինքնամփոփումը, այդպես էլ նա ավելի ու ավելի բորբոքեց Համաստեղյան երևակայությունը, սևեռեց հայրենի գյուղին։ Եվ ահա հիսուն տարվա ընթացքում մեկը մյուսի ետևից հրապարակ նետվեցին այնքա՞ն տոհմիկ «Գյուղը» և «Անձրև»-ը, տարոնաշունչ «Սպիտակ ձիավորը», իմաստուն «Քաջն Նազար և 13 պատմվածքներ»-ը, Համաստեղյան դրականության հավատո հանգանակ «Աղոթարան»-ը և միամիտ, սրամիտ, բայց խորունկ «Այծետոմար և ուրիշ բանաստեղծություններ»-ը, որոնք նույն անհատականության ծիրով պարուրված անկորնչելի համաստեղություն են արդեն հայ դրականության երկնակամարում։

Անտարակույս, Համաստեղի ամենարնորոշ հատկանիշը բնականությունն է։ Այս հատկանիշից են մեկնում և նրան են հանդում «Գյուղ»-ի և «Անձրև»-ի հեղինակի մյուս արժանիքները, որոնցից յուրաքանչյուրը (այնքա՞ն որ մեծ են նրանք) ի վիճակի է փրկելու որևէ արձակագրի կամ բանաստեղծի։ Կարծես ո՛չ մեկ նախապատրաստություն, ո՛չ մեկ ճիգ պատմվածք կառուցելու, նկարագիրներ և անձնավորություններ քանդակելու, ո՛չ մեկ ջանք բնանկարներ և հորիզոններ ուրվագծելու։ Ամեն ինչ կատարվում է այն բնականությամբ, հարազատությամբ ու կենդանությամբ, ինչ կենդանությամբ որ «Ճաղատ, գիժ երեսով բանչարեղեններուն մեջ դեռ նոր իջած արագիլ մը իր թևերը կծալլե, իսկ խրտվիլակի շուրին մոտ պարտիզպանին էշը իր վիզը անընդհատ ծառին վրա կքերե...»։ Եվ թվում է, թե այս բնականության գաղտնիքներից մեկն էլ այն է, որ Համաստեղի յուրաքանչյուր պատմվածքում ամբողջ գյուղն է ոտքի վրա, ամբողջ գյուղն է տագնապում, հրճվում կամ թախծում իր մեջ կատարվող թեկուզ ամենադույզն դեպքի առնչությամբ։ Միջոյի, Կարո Մարսուպի («Համբույրը»), Թորիկ Ղուկասի («Անձրևը»), Թորիկ Պետոյի («Աղջի Եղսիկ») կամ մյուս պատմվածքների հերոսների ողբերգությունը մի սոսկական երդիկի տակ և միայն առանձին հոգիների մեջ տեղի չի ունենում, այլ գյուղի արձակ երկնքի ներքև, մարդկանց անմիջական վերաբերմունքի մթնոլորտում։ Այս ձևով գյուղն ու գյուղական բնությունը մի հավաքական կերպար են դառնում և ավելի ու ավելի են բացահայտում, ընդգծում անհատների արարքներն ու նրանց դիմագծերը, հոգին։ Պատմվածքից պատմվածք նույն գյուղը նոր երանգներ է ստանում, լցվում է նոր մարդկանցով ու կենդանիներով, իսկ բնությունն իր միշտ թարմ ու անկրկնելի գեղեցկություններով է տողանցում, անդգալարար հորինելով մի ամբողջ աշխարհ, ուր ո՛չ թե մի գյուղի բնակիչները, այլ բովանդակ մարդկությունն է սիրում, ատում, տքնում, տառապում, ուրախանում ու տխրում։ Համաստեղի բնականությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ սահմանագիծ գոյություն չունի նրա պատմվածքների հերոսների միջև, լինեն նրանք մարդ, կենդանի թե անշունչ առարկա։ Մի՞թե հասարակաց կծեր չկան Ջալոյի և Միջոյի, Ջալոյի ու Փիլիկ աղբարի ողբերգության միջև։ Մի՞թե նապաստակի աչքերով դիտված գյուղը, նրա բնությունն ու կյանքը («Նապաստակի մը օրագիրը») նվազ շահեկան են ու ամբողջական, քան «Ուստղկան սայլը» հեքիաթի ձկնորսը։ Կամ մի՞թե Պալիկ հորքուրի տունը («Տունը»), Մնուշի ջրհորդանը («Երնեկ այն օրերուն») նույն տիպականացմամբ և կենդանությամբ չեն անցնում պատմվածքների ամբողջ ուռղության ընթացքում, ինչպես Տոփան Մարդարի գոմեշները։ Բայց Համաստեղի, ինչպես ամեն ճշմարիտ արվեստագետի համար, մարդկանց, կենդանիների և իրերի փոխհարաբերությամբ, դրացնությամբ է պայմանավորված ամեն ինչ։ Նրանք իրար լրացնելով, իրար զարգացնելով է որ լավագույնս բացահայտում են իրենց ներքին էությունը և պատմվածքի ավարտման համընթաց ցցվում, խոյանում են մեր առջև, ինչպես խարտիները տեղատվության ժամանակ։

Համաստեղի երևութապես հանդարտ, հեղասահ ու անշշուկ պատմվածքների մեջ ուժ կա, խլրտում և շարժում։ Նրանք լարված զսպանակների տպավորություն են գործում՝ պիրկ ու գալարուն։ Առաջին իսկ նախադասությունը կարծես այն լծակն է, որով հեղինակը շարժման մեջ է դնում մի ամբողջ սարք, մի հսկայական մեքենա։ Եվ քիչ են այնպիսի հեղինակներ, որոնք այնքան զգեցիկ, իրենց տվյալ գործի համար այնքան ճակատագրական սկզբնավորություն ունենան, ինչպես Համաստեղը։ Կարող է պատահել, և Համաստեղն ունի այդպիսի գործեր, որոնց ընթացքում դանդաղում է գործողությունը, հոսանքը մի փոսի, խոռոչի է հանդիպում իր ճանապարհին, բայց անկարելի է, որ այդ հոսանքը գահավեժ ժայթքով չսկսի իր ճամբան և սրընթաց չավարտվի։ Անկասկած, պատմվածք սկսելու և ավարտելու վարպետ է Համաստեղը։ Սակայն ի՞նչ կարժեին պատմվածքի սկիզբն ու վերջը, եթե հոգեբանական կուռ օղակներով չզոդվեին իրար։ Եվ իրոք, Համաստեղի լավագույն ստեղծագործությունների սկիզբը, վերջը և նրանց միջև ընկած տարածությունն այնպես են շաղկապված իրար, որ ամենաանշան մանրամասնության անտեսումն իսկ կարող է խախտել նրանց ներդաշնակությունն ու բնաղանցական կառույցը։

Երևակայությունը, երազն ու հեքիաթայինը, որ իրականության հետ շփոթվելու աստիճան խարուսիկ են, կազմում են Համաստեղի ողջ գրականության նախատարրերը։ Նա, իր երազին տրամագծորեն հակոտնյա մի աշխարհում նստած, գուցե ա՛յդ իսկ պատճառով, այնպես վերստեղծեց իր գյուղը, նրա սովորությունները, կենցաղն ու համայնապատկերը, այնպես տարածեց իր բարությունն ու կենսասիրությունը նրանց վրա,

որ ասունը, անասունն ու իրերը նոր կյանքով վերապրեցին ու իրե՛նց իսկ անծանոթ պատգամներով ու կոչումով ի հայտ եկան։ Իր երազից ու երևակայությունից՝ իր գյուղի միջավայրից կտրվելու ամեն փորձ, իր շուրջի իրականությանը միախառնվելու ամեն միտում ձախողության սանդղամատեր եղան Համաստեղի համար։ Այս եզրակացության է հանգում մարդ, երբ բուն Համաստեղին բնորոշող որևէ պատմվածքից հետո ընթերցում է դուտ ամերիկյան կյանքից ներշնչված նրա թեկուզ ամենահաջող գործերը («Պուպրիկը», «Ցուցատախտակը»)։ Իհարկե «Գյուղը» և «Անձրև» հատորների պատմվածքների գերազանց լափանիշն է մեզավորն այս ստեղծագործությունների հանդեպ ընթերցողի ունեցած դժվարահաճության մեջ, այլապես այստեղ էլ ներկա են Համաստեղի տաղանդի անուրանալի հատկանիշներից ոմանք՝ դիտողականություն, ընդհանրացնելու և պատկերացնելու ուժ, քնարականություն, բայց չկա էականը՝ Համաստեղյան բնականությունն ու անբռնազբոսությունը։ Մի տեսակ ուսուցողական ձգտում, փիլիսոփայելու, շուրջի իրականության հանդեպ գործուն վերաբերմունք ցույց տալու թեկուզ անգիտակից կանխորոշումն իսկ պաղ քամու նման թևածում է այս պատմվածքների ոլորտում։ Տարօրինակ ձևով լեզուն էլ զրկվում է այն պսպղուն ավիշից, որը հոսում ու խոխոջում է գյուղական պատմվածքների տողերում, ինչպես գարնանը կակղած արմատների մեջ։ Եվ այս բոլորն ա՛յն պատճառով, որ հեղինակի նպատակը չի հածում երազով, կարոտով ու երևակայությամբ այլակերպված հարազատ իրականության մեջ, այլ պարզապես տեսնում է, իսկ հաճախ հազիվ է նկատում։

Բայց Համաստեղը խորունկ դիտակցությունն ունի իր տարբերքի։ Թվում էր, թե «Գյուղը» և «Անձրև» հատորների միջև ընկած տասնամյակում նա լրիվ քամել է իր անցյալ հիշատակներն ու այդ հիշատակներով սնվող ներքին թռիչքը, բայց ահա նա իրար ետևից հանդես է գալիս «Սպիտակ ձիավոր»-ի երկու հատորով, «Քաջ Նազար»-ով և այն պատմվածքներով, որոնք դարձյալ գյուղն ունեն որպես մթնոլորտ ու հոգեբանություն։

«Սպիտակ ձիավոր»-ը, որ մեր ազատագրական պայքարի տարբեր փուլերը, նրա մարդնթացությունները ու տեղատվությունները, նրա հերոսներին խորհրդանշանորեն պատկերելու էր կոչված, Համաստեղի ամենից հակասական, ամենից դուտ երևակայական ստեղծագործությունն է, եթե հաշվի չառնենք այն հատվածները, ուր իրականության զգացողությունը, երազին ձուլված, ոգեկոչում է բուն Համաստեղին։ Այս վեպը, Ինտրայի բառերով, հեղինակի «գաղափարի անկումն է»։ Ազնիվ ու հայրենանվեր մտահղացում, որը սակայն հազիվ կարողացավ ջերմացնել վեպի առաջին հատորը։ Առասպելն ու արկածային, հեքիաթն ու ժողովրդական պատումը, իրար հյուսված, իրենց ջրապտույտի մեջ են առնում հեղինակին ու տանում են նրան անհավատալի հնոտներ։ Մերթ թվում է, թե Համաստեղը, հոգնած իրեն շրջապատող անհարազատ կյանքից, երանավետ մի աշխարհ է ստեղծում միայն ի՛ր օրորման համար։ Բայց այս աշխարհը, ա՜յն՝ թեկուզ դարձյալ երևակայական, աշխարհը չէ արդեն, ուր Փեսա Օվանեսն ու Տոփան Մարդարները, Մարուշներն ու Մնուշներն էին շրջում ավելի՛ իրական, քան բուն կյանքում։ «Սպիտակ ձիավոր»-ը փոխնիփոխ վեպի և հրաշապատումի սահմանները քերող մի ստեղծագործություն է, ուր կան Համաստեղի գրեթե բոլոր արժանիքները, սակայն ցրիվ, լույծ, որով և ո՛չ միշտ ցցուն։

Բայց «Սպիտակ ձիավոր»-ի նման Համաստեղի «Քաջ Նազար»-ն էլ իրական կյանքից դեպի հեքիաթի կալվածն ընկնող պատմությունների մի շարան է, սակայն այստեղ հեղինակը փրկում է իր հերոսին, նրան օժտելով մարդկային այնպիսի արժանիքներով ու բնավորության գծերով, որոնք նրան դարձնում են շոշափելի, ճշմարիտ, հեքիաթունակ, բայց համոզկեր։ Քաջ Նազարի իմաստությանը ոստնակ է ծառայում մարդկային ամբողջ փորձառությունը, ունայնամտությունն ու սնափառությունը։

«Սպիտակ ձիավոր»-ն ու «Քաջ Նազար»-ը հատկանշական են նրանով, որ Համաստեղն ամերիկյան պատմվածքների առընթեր՝ դարձյալ իր հարազատ միջավայրում է՝ գյուղում, շրջապատված գեղջկական նիստուկացով, հավատալիքներով, մարդկանցով ու բնությամբ։ Եթե առաջին ստեղծագործության մեջ Համաստեղի այնքա՜ն ապնիվ նպատակն անհաջողության մատնվեց, ապա այդ ո՛չ թե նրանից էր, որ հեղինակին դավաճանեց գյուղի իր անդուգական զգացողությունը. ո՛չ։ Իր հերոսների գաղափարական առաքելությունն էր, որ խոչընդոտ հանդիսացավ իրեն։ Համաստեղի երևակայությունն աննման է այնտեղ, որտեղ իրական, գեթ որոշ չափով ապրված կոլան ունի որպես հենք։ Իսկ հեղափոխական շարժումը մուտք չէր գտել Խարբերդի Փերշենճ գյուղը՝ Համաստեղի ծննդավայրը, ուստի

հեղինակն անծանոթ էր իր ոտքի հանած ղլխավոր անձնավորությունների բուն էությանը։ Ահա այս դեպքում է, որ ճշմարիտ է հնչում Պասկալի արտահայտությունը՝ «Երևակայությունը մայրն է մոլորությանց»։

Իր ներքին իմաստով և հանրային ընդհանուր առանձնահատկություններով «Քաջ Նազարե»-ի հետ ազգակցական կապեր ունի «Այծեռոմարտ»-ը, որի գործողության վայրը, Համաստեղի բառերով, «բեմը կարելի էր կապել աշխարհի որևէ հողամասին վրա և ոգիներու աշխարհին մեջ և սակայն Արվեստը իր անկեղծ խոսքով ինձի թելադրեց այս բեմը կապել իմ կալվածին մեջ», այսինքն գյուղի։ Իր գրքի առաջաբանում հեղինակը հաստատում է, թե ոգիների խաղն է «Այծեռոմարտ»-ը։ Եվ իրոք, ոգիների՝ մարդկային ընազդների հավիտենական հաղթանակին է նվիրված Համաստեղի խորունկ հեգնական այս գործը։ Պարտվում են հոգեկան, իդեալական ըմբռնումների կողմնակից Տեր Մարուքեն և բիրտ ուժ, կռիվ ու քաջություն միայն դավանող ջորեպան Թաթոսը, որոնք որպես մարդ ճղճիմ են, ծիծաղելի ու նսապաշտ։ Նրանք և գյուղի իմաստունը՝ Մակարը մարմնացումն են մարդկային ամենասրբազան զգացմունքների, որոնք սակայն եղել են, կան ու կմնան գեղեցիկ խոսքեր, որովհետև մարդու մեջ գործում է դևը, ինչպես լավան հրաբխային լեռների ընդերքում։ Համաստեղի գրոտեսկի հասնող ծաղրը, հակառակ որոշ լուսավոր շեշտերի, մռայլ է ու հոռետեսական։

«Աղոթարան»-ի բերած աշխարհը նորություն չէ Համաստեղի գրականության մեջ։ Թվում է, թե այս գրքույկը «Քաջ Նազարե»-ի, բայց մանավանդ «Այծեռոմարտ»-ի հակադեցության տակ կատարված մի վերադարձ է դեպի հեղինակի ակնաղբյուրը, դեպի այն կետը, որտեղից մեկնել էր նա ու հասել իր էությանը հակասող մտահանգումների։ Ի բնե բարի, բնութենապաշտ, կյանքի զգլխանքը միայն զգայարաններով ըմբռնող Համաստեղը «Գյուղ»-ի, «Անձրև»-ի և մասամբ «Սպիտակ ձիավոր»-ի մթնոլորտի փառաբանումն է անում իր «Աղոթարան»-ով։ Ա՛յս է հարազատը Համաստեղի համար, մյուսները օտարամուտ էին, առածու Արձակ բանաստեղծություններով ձևով հորինված այս փոքրիկ գրվածքներով, որոնք մեկ տրամադրության ճյուղավորումներն են կարծես, Համաստեղը եկավ միանդամընդմիշտ ապացուցելու, թե ինքը ո՛չ միայն գիտակից է իր գյուղական պատմվածքների բնազանցական ոլորտին ու ապրումներին, այլ նաև ընդունակ է հաղորդվելու մարդկային գերագույն հոգեվիճակներին։ «Աղոթարան»-ը մեծ վկայություն է Համաստեղ մարդու մասին, մի տեսակ ներքին ինքնակենսագրություն։ Ահա ա՛յս է նրա բուն արժեքը։

Եթե Թլկատինցին իր հայրենի գյուղի սահմաններով ու ճանաչողությամբ պայմանավորեց հաստատ իր գրականության հաղորդականությունը, եթե Ռ. Զարդարյանը երբեմն շատ խճողեց իր պատմվածքները գեղագիտական տարրերով, որոնք ծանրացնում են նրանց թևերը, ապա Համաստեղը ներքին անսխալական հայտնատեսությամբ գտավ այն ոսկի միջինը, որ արվեստը տանում է համամարդկայինի։ Այս իմաստով նա դադարեց մեր գավառական գրականության թեկուզ ամենատաղանդավոր ներկայացուցիչը լինելուց։ Ինչ կարևոր են նյութն ու միջավայրը, երբ Համաստեղի ստեղծած կերպարներն ամենուր են և բոլոր ժամանակների սեփականությունը։ Նրա լավագույն պատմվածքները նման են փոքրիկ աշխարհների, ուր ներկա են մարդկության բոլոր հասակները։ Մեր գրականության մեջ Համաստեղն ապգայինով միջազգային դարձած հեղինակի դասական տիպար է։

Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒԶԱՆԴԱՑՈՒ «ԲԱՌԱԳԻՐՔ ՍՏՈՐԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ մշակույթի, գրականության ու լեզվի դանազան հարցերի ուսումնասիրությամբ շատ-շատերն են զբաղվել, բայց նրանց մեջ շատ քչերն են իրենց գործունեության հենց սկզբնական շրջանից լույս աշխարհ հանած առաջին իսկ աշխատություններից աչքի ընկել։ Այդ եզակի մարդկանցից է եղել հայ գրականության ու լեզվի ներհուն մասնագետ, խոր գիտելիքների տեր ու բազմաթիվ լեզուների տիրապետած Նորայր Բյուզանդացին։

Անցյալ դարի 2-րդ կեսին, այն է 1880 թվականին, Կոստանդնուպոլսում հրատարակվում է Նորայր Բյուզանդացու «Հայկական բառաֆեռնութիւն (ուղղութիւնք ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց և նշանակութեան բառից ինչ)» խորագիրը կրող արժեքավոր աշխատությունը։ Իսկ 1884 թվականին, դարձյալ Պոլսում, լույս է տեսնում հայ կլասիկ բառարանագրության անզուգական գործերից մեկը՝ Նորայր Բյուզանդացու «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն» մեծածավալ աշխատությունը։ Այդ բառարանի վրա հեղինակը աշխատել էր 14 տարի։ Սակայն երկար տարիների աշխատանքը իզուր չէր անցել ոչ հեղինակի, և ոչ էլ հայ ժողովրդի համար։ Նա իր այդ աշխատանքով ոչ միայն հարստացնում է բազմադարյան պատմություն ունեցող հայ բառարանագրությունը, մի նոր, իրոք, դլուխ-գործոց համարվող աշխատությամբ, այլև իր վրա է բևեռում հայագիտությամբ զբաղվող հայ և օտարազգի գիտնականների ուշադրությունը։ Այդ բառարանը, որ ավելի քան 1300 մեծագիր, երկսյուն էջերից է կազմված, ուշագրավ երևույթ էր ինչպես ֆրանսերեն բառերն ու ոճերը ճշգրտությամբ թարգմանելու, նույնպես և հայոց լեզվի հարուստ բառապաշարը վարպետորեն օգտագործելու, նորակերտ բառեր կազմելու, հայերենի բառակազմական օրենքները խստորեն պահպանելու տեսակետից։ Այդ բառարանում առաջին անգամ քննության է ներկայացված միջնադարյան հայ գունագեղ գրականության մեջ գործածված մի քանի հազար բառ և բառակապակցություններ՝ համապատասխան վկայություններով։

Այդ ուշագրավ բառարանը լույս տեսնելուց 16 տարի հետո, 1900 թվականին, Թիֆլիսում տպագրվում է Նորայր Բյուզանդացու մի այլ՝ «Նորին վարդապետ և նորին բարգմանութիւնք» հետաքրքրությունը, որը նոր խոսք էր հայագիտության պատմության մեջ։ Այդ բարձրարժեք ուսումնասիրության էջերում լեզվական մանրակրկիտ տեղեկությունների հիման վրա, հեղինակը որոշում է Ե դարի հայ տարբեր մատենագիրների ոճի առանձնահատկությունները, հաստատում, որ իրենց ոճական առանձնահատկություններով Ե դարի հայ մատենագիրների ստեղծագործությունները կարելի է բաժանել չորս՝ Եղնիկյան, Եփրեմյան, Կյուրեղյան, Կորյունյան դասերի, ապա համեմատում է Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը Ագաթանգեղոսի, Բյուզանդի, Մակարայեցվոց գրքերի և Եվթաղի գործերի հետ և հանգում միանգամայն անժխտելի եզրակացությունների՝ այդ երկերի ստեղծման հանգամանքների ու առնչակցությունների մասին։

Միևնույն ժամանակ հիշատակենք, որ հիշյալ սպառիչ աշխատություններից բացի, Նորայր Բյուզանդացին պարբերաբար հանդես է եկել ժամանակի հայագիտական կենսոտ հարցերին նվիրված մի շարք եղակի արժեք ներկայացնող հոդվածներով, որոնք լույս են ընծայվել «Հանդէս ամսօրեայ», «Փորձ», «Քննասէր», «Մշակ», «Բանասէր» և այլ պարբերական հրատարակություններում։ Դրանցից միայն նշենք հետևյալները. «Իմ կարծիք զկիրին հայ թարգմանութեանց նիկեղեցական պատմութեան Սոկրատայ Սքոլաստիկոսի և զնոցին թարգմանչաց» («Հանդէս ամսօրեայ», 1893 թ.), «Տեղեկութիւն ի գիրս Պատմութեան Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողիկ կոչեցելոյ» («Հանդէս գրական և պատմական», 1889 թ.), «Գրիգոր Մագիստրոսի Գամատական Թղթին մեկնութիւն ի նմին իսկ ի Մագիստրոսէ» («Բանասէր», 1900 թ.), «Քննադատութիւն Հայբուսակի» («Հանդէս ամսօրեայ», 1921—1926) և այլ հայագիտական կարևոր աշխատություններ։

Սակայն ինքնին արժեքավոր այդ գործերը մեծ չափով գիտում են Բյուզանդացու այն հետազոտություններին, որոնք դեռևս մնում են չտպագրված և գիտական աշխարհին անհայտ։ Հայտնի է, որ Նորայր Բյուզանդացին իր գիտական գործունեությունը սկսում է շատ վաղուց, դեռևս ուսումնառության շրջանում. նա երկար տարիների ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկում հայ հին և միջնադարյան ծովածավալ գրականությունը, ուսումնասիրում հայ մատենագիրների երկերում գրիչների կողմից մտցված փոփոխությունները, ուղղում նրանց կատարած սխալները, վերականգնում բազմաթիվ տեքստեր և, ամենից դիտավորը, կազմում միջին հայերենի բառարանը[1], որը, ինչպես հրևում է «Էջմիածին» ամսագրի 1949 թվականի № 3—4-ում տպագրված նյութերից, մոռացության էր մատնվել և միայն պատահաբար էր հայտնաբերվել, նրա հեղինակի մահվանից մոտավորապես 30 տարի հետո, 1945 թվականին։ Եթե սակայն Նորայր Բյուզանդացին ապրեր և գործեր իր հարազատ ժողովրդի մեջ, հայկական միջավայրում, այդպիսի բախտի չէին արժանանա նրա այդ և շատ այլ կարևոր աշխատություններ[1], բայց նա, իրեն համար ստեղծված պայմանների հետևանքով, գործել է հայրենիքից հեռու, Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում, որտեղ, հավանաբար, միակն է եղել, որ մտածել է հայերեն և անխոնջ աշխատել է հայ մագաղաթյա մատյանների վրա, չենթադրելով անգամ, որ իր տարիների մեղվային աշխատանքի արդյունքը կարող էր կույր պատահականության զոհ դառնալ, կորչել, կամ հավետ մոռացության մատնվել։

* * *

Նորայր Բյուզանդացին (Ստեփան Գաղեղյան—Ճիդմեճյան—Թերզյան) ծնվել է 1845 թվականի մարտի 4-ին, Պոլսի Բերա արվարձանում։ Իր կրթությունն ստացել է Վենետիկի Ս. Ղազար վանքի դպրոցում, ուր աշակերտել է Հ. Ղ. Ալիշանին։ 1866 թվականի ապրիլի 8-ին ձեռնադրվել է քահանա և նույն թվականին նշանակվել է ուսուցիչ Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում։ 1867 թվականին ստանձնել է «Բաղդամվէպ»-ի, իսկ 1868—1869 թվականներին՝ միաբանության մատենադարանի տեսչությունը, սակայն գժտվելով Մխիթարյան միաբանների հետ, 1873 թվականին հեռացել է Վենետիկից ու վերադարձել հայրենի քաղաքը՝ Պոլիս, որտեղ մի քանի տարի ապրել է շվեդուհի Սելմա Յակոբսոնի հետ և 1882 թվականին փոխադրվել Ստոկհոլմ, ուր անց է կացրել ստեղծագործական հզացումներով լի իր կյանքի մեծ մասը։ Այստեղ, անցյալ դարի 80-ական թվականներին, նրա խմբագրությամբ լույս է ընծայվում «Քննասէր» հայագիտական պարբերականը, որի հրատարակությունը, չնայած իր կարճատև գոյության (լույս է տեսել միայն 2 անգամ), անանխնթաց մի իրադարձություն էր ողջ Սկանդինավյան թերակղզում։ «Քննասէր»-ի

[1] Դեռևս 1873 թվականին Բյուզանդացին այն կարծիքն է հայտնել, «...որ երկնատոր Հայկազեան բառարանի ստուարութեամբ ստորին հայերէնի այ բառարան մը կրնայ կազմուիլ, այնչափ ճոխ է այս լեզուն բառերու, ոճերու և ասացուածոց մասամբ» («Փորձ», 1879 թ., № 7—8, էջ 247)։

[1] «Նիդեկի Կողբացի, Աւետեաց Սիւնեցւոյ տաղաչափութիւնք, Վրիպակք Լաստիվերտայ գիրս, Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Արբրահամ Երեց, Հայ բուսակ կամ Հայկական բուսականութիւն (նոյնանոր ուղղումներով ու վարիանտներով), Ամիրդովլաթ.— Օղուտ բժշկութեան, Ամիրդովլաթ.— Անգիտաց անպէտ, Պատմութիւն Աղուանից (4 հատորից կազմված), Մովսէս Խորենացի և առաջին թարգմանիչք, Բուրսեղ Կեսարացի, Յակոբայ Արճեցւոյ ճառք, Բառարան արդի հայերէնի (գավառական հայերենի), Հնագոյնագոյն տաղարան հայ բանաստեղծութեանց ի դարուց ԺԲ—ԺԷ, Յաւելուած տաղից Նարեկացի Քուչակի, Յովհաննէս Երզնկացւոյ և այլոց, Հայ Պարտէզ և բազմաթիվ այլ աշխատություններ։

առաջին պրակը լույս է տեսնում 1887 թվականի մայիսի 15-ին, իսկ երկրորդը՝ դեկտեմբերի 3-ին։

Նորայր Բյուզանդացին մահացել է 70 տարեկան հասակում՝ 1915 թվականին Վենետիկում, Հանձնված իբրև ժամանակի ականավոր հայագետներից մեկը։ Նրա աճյունը, մահվանից 9 տարի հետո, 1924 թվականին, փոխադրվում է Ստոկհոլմ և թաղվում տեղի գերեզմանոցներից մեկում։

Բյուզանդացու ամբողջ ունեցվածքը, գրադարանն ու ձեռագրերը, համաձայն իր կտակի, անցնում են շվեդական «Ֆրեդրիկա-Բրեմեր-Ֆորբունդետ» կանանց բարեգործական ընկերությանը, որը հաճույքով տեր է դառնում ամենից առաջ նրա 125 000 շվեդական կրոնին, իսկ ձեռագրերը, որոնք տասնապատիկ անգամ ավելի շատ կրոններ արժեին, 1915 թվականից մինչև 1923 թվականը գցվում են ընկերության, ապա մինչև 1946 թվականը՝ Գյոտեբորգ քաղաքի գրադարանի նկուղները՝ միանգամայն անմխիթար վիճակում։ 1946 թվականից Բյուզանդացու արխիվը փոխադրվում է Ուպսալայի համալսարանը, որտեղ էլ նկարահանվել և Սովետական Հայաստան են ուղարկվել մեծավաստակ հայագետի մի շարք ձեռագրերի մանրալուսանկարները, որոնց մեջ ամենաարժեքավորը նրա «Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ—ԺԷ դարուց» ստվարածավալ երկն է, որի վերջին հատորը կամ հատորները պակասում են։

Հայաստանի Պետական մատենադարանին ուղարկված այդ աշխատության մանրալուսանկարներն ամփոփված են հինգ կոճերի մեջ, որոնցից առաջին կոճը ընդգրկում է Ա—Գ տառերը և կազմում է 1038 էջ, երկրորդը՝ Դ—Լ տառերը, 1157 էջ, երրորդը՝ Խ—Հ տառերը, 1478 էջ, չորրորդը՝ Ձ—Շ տառերը, 1461 էջ և հինգերորդը՝ Ո—Ջ տառերը լրիվ և Պ տառը մինչև Պետրոս բառը, 738 էջ։

Այս տվյալները համապատասխանում են 1949 թվականի «Էջմիածին» ամսագրի վերոհիշյալ համարում տպագրված հատվածում այդ բառարանի մասին հաղորդված տեղեկություններին։ Այդ տվյալների համեմատությունից երևում է, որ այդ արժեքավոր աշխատության վերջին հատորները կա՛մ չեն գտնվել, կա՛մ նկարիչը ծանոթ չի եղել Բյուզանդացու արխիվին և չի կարողացել գտնել և նկարահանել այդ աշխատության վերջին մասերը։

Մենք չենք կասկածում, որ այդ բառարանը այն ձևով, ինչ ձևով նկարահանված է, ավարտված է եղել և եթե մինչև այժմ մենք նրա մնացած մասերին ծանոթ չենք, կամ հայտնի չեն, ապա այդ միայն նրա համար, որ Բյուզանդացու արխիվը կարգի բերված չէ, իսկ եթե նույնիսկ կարգի է բերված և հաշվի են առնված նրա ձեռագիր աշխատությունները ու դրանց մեջ չի հայտնաբերվել այդ բառարանի վերջին հատորը, կամ հատորները, ապա պետք է ենթադրել, որ այդ աշխատության մնացած հատորները կա՛մ գտնվում են հիշյալ բարեգործական ընկերության նկուղում, կա՛մ Գյոտեբորգ քաղաքի գրադարանի գրապահեստում, որտեղ երկար ժամանակ պահված են եղել Բյուզանդացու ձեռագրերը, կամ Վենետիկում, ուր փոխադրվել էր նա իր կնոջ մահվանից հետո և մինչև 1915 թվականը ապրել ու աշխատել էր այնտեղ։ Նա Վենետիկում, թերևս, աշխատել է հենց այդ բառարանի վրա և ուզեցել է ավարտել, ավելի ճիշտ տպագրության համար պատրաստել 1884 թվականին սկսած այդ մեծածավալ գործը, որին նա շատ մեծ նշանակություն է տվել։ Այս ենթադրություններից ոչ մեկը այժմ ստույգ համարել մենք չենք կարող։ Նորայր Բյուզանդացին այն բացառիկ գիտնականներից էր, որի յուրաքանչյուր աշխատության փաստական ճշգրտության վրա, ինչպես ասում է բազմավաստակ հայագետ Հ. Աճառյանը, կարելի է չկասկածել։ Իսկ «Բառագիրք ստորին հայերէնի» երկի վրա նա աշխատել է մոտավորապես 30 տարի և բազմաթիվ անգամ է առիթ ունեցել ստուգել ու վերստուգել իր հավաքած փաստերը, ուղղելու աղբյուրների մեջ գրչագիրների կողմից թույլ տրված սխալները, նշել դրանց առաջացման պատճառները և իր աշխատության մեջ բերել միայն հավաստին։

Այդ աշխատության 5 հատորներում ընդգրկված են մոտավորապես 20 000 բառահոդվածներ, որոնցից յուրաքանչյուրն իր մշակվածությամբ գիտական մեծ արժեք է ներկայացնում։ Այսպես, օրինակ, Պացխուն բառին նվիրված բառահոդվածում հեղինակը նախ տալիս է բառը, նշում նրա քերականական կարգը, որոշում նրա սկզբնական ձևը (պատասխուն[ի] բառի աղավաղված տարատեսակը), նշում աղբյուրը («Նորա պացխուն ի՞նչ բերեմ, եր կանաչ ծառն որ չորանայ»—Տաղ սիրոյ, 64) և միջին դարերում գործածված նույն բառի այլ տարատեսակը՝ պատասխուն—համապատասխան վկայությամբ, ապա բացատրում, որ միջին դարերի գրական լեզվում շատ հաճախ են զանազան կարգի հնչյունափոխություններ և հնչյունների անկումներ, որոնց հետևանքն էլ եղել է պատասխան բառի պացխուն ձևը։

Այս բառարանի յուրաքանչյուր բառահոդվածի կազմությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Վերնագրային բառից հետո տրվում են հնչման և խոնարհման ձևերը, նշվում է բերականական կարգը, այնուհետև, եթե բառը փոխառնված է, տրվում է օտար աղբյուրը, ապա բացատրվում է բառը և միջնադարյան հայ մատենագրությունից բերվում են վկայություններ՝ բառի յուրաքանչյուր իմաստը և իմաստային նրբերանգը հաստատելու համար։ Օրինակ.

Ա.յգեակ.—եկան, գ., «փոքր այգի»։

«Եղբայր, գիշերս յերագիս
Փոքրիկ այգի մի եմ տեսեր,
Օրքրիկ այգեկան միջին՝
Փոքրիկ հնձան մի եմ տեսեր.
Փոքրիկ հնձանին միջին՝
Բարակ աուակ մի եմ տեսեր»։

Տաղ, «Պետրոս երազ էր տեսեր», տաղարան, Ա 593 (Տաղարանի 568—620 երեսքն գրեալք են ի թուին ՌՃԴ—1655)։

Մի այլ օրինակ՝ Ամբար, որ և ամպար, համպար, հանպար, —ի, գ., «նիւթ ինչ անուշահոտ ելեալ ի ծովէն». արաբ. պրս. Այնպէր, Անպէր, զղ. Ambre gris, իտալ. Amba oborosa, կամ Ampre grigia, կամ Ամպար. է նիւթ ինչ չոր, քաղցրահոտ և կարծր, որպէս գրաբ, անպէր, Քախչ. բոդ. իտ.—հայ, նորահնար բառիւ ասի հայերէն բուրկէնս, և այլն։

Բառարանի հեղինակը նույնիսկ հաճախ դուրս է եկել սովորական բառարանի սահմաններից և յուրաքանչյուր բառահոդվածը կազմելիս տվել է ինչպես բառի բացատրությունը, նույնպես և երբեմն բառի ստուգաբանությունը, սխալ գրչությունները, բարբառային ձևերը և այլն։ Սակայն ոչ բոլոր բառերն են բացատրված կամ վկայություններով հաստատված, համենայն դեպս այն, ինչ որ կարելի է, կամ պատասխանել է Բյուզանդացին, հայագիտության համար մեծ արժեք ունի։

Նոր Հայկազյան բառարանի օրգանական շարունակությունը կազմող այս աշխատության խոշորագույն կարևորությունը պահանջում է ավելի ուշադիր վերաբերմունք հայագիտության գլուխ-գործոցներից մեկի նկատմամբ և ընդհանրապես նորայր Բյուզանդացու թողած գիտական ժառանգության պահպանման, ավելի ճիշտ, կորստից փրկելու և նրա միակ օրինական ժառանգորդին՝ հայ հասարակությանը մատչելի դարձնելու գործին։



Գ. ԴՐԻԳՈՐՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱՒԵՑԻՆ ԵՎ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

ԺԹ դարի առաջին քառորդում հայ ժողովուրդը շարունակում էր հեծել արևելյան երկու հետամնաց պետությունների՝ շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ։ Անասելի ծանր էր նրա տնտեսական, իրավական և մշակութային կյանքը։ Քրիստոնյա բնակչությունը, առանձնապես հայերը, այդ պետությունների իշխանության տակ գտնված երկրներում զրկված էին տարրական իրավունքներից։

Հայ ժողովրդի տխուր կյանքի այդ շրջանը ճշմարտացի կերպով պատկերել են մեր մշակութային կյանքի նոր զարթոնքի խոշոր ներկայացուցիչ Մեսրոպ Թաղիադյանը և մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը։

Անվերջ կոտորածների ու ավերածությունների հետևանքով հայ ժողովրդի արտագաղթը ԺԷ—ԺԸ դարերում բավական խոշոր չափերի է հասնում։

Մայր երկիրը լքող բնակչության արտագաղթի հետևանքով, աշխարհի տարբեր մասերում առաջանում են հայկական գաղթօջախներ։

Իր մայր երկրում զրկված լինելով վաղընջուց ժառանգած իր հոգևոր, մշակութային արժեքները պահպանելու և զարգացնելու հնարավորություններից, հայ ժողովրդի այդ բեկորները գաղութներում է, որ ժամանակի ընթացքում, շնորհիվ իրենց ընդունակության և աշխատասիրության, կարողանում են համախմբվել, ամրապնդվել, պահպանել ու զարգացնել իրենց մշակույթի մեծ արժեքները։

Հայկական մշակույթի խոշոր կենտրոններ են դառնում Թիֆլիսը, Կոստանդնուպոլիսը, Թեոդոսիան, Լվովը, Ամստերդամը, Աստրախանը, Մոսկվան, Նոր Նախիջևանը, Երուսաղեմը, Վենետիկը, Կալկաթան և այլ վայրեր։

1801 թվականին, երբ ռուսները գրավեցին Արևելյան Վրաստանը, Թիֆլիսը դեռ չէր բուժվել Աղա Մահմադ խանի հասցրած ծանր վերքերից, դեռ կրում էր այդ հարվածի դառն հետևանքները, բնակչությունն աղքատացել էր, առևտուրն ընկել, կյանքը թանկացել։ Չկային դպրոցներ ո՛չ վրացիների, ո՛չ հայերի համար։

1802 թվականի սեպտեմբերի 22-ին, ռուսական կառավարության բարձրագույն հրամանով, Թիֆլիսում վրաց քարձր դասակարգի ազնվականների որդիների համար բացվում է մի դպրոց երկու ռուս ղրաղիր-ուսուցիչներով, որոնք ոչ սովորողների լեզուն էին հասկանում, և ոչ էլ սովորողները նրանցը։ Այդ դպրոցը գործում է շատ անկանոն, մեծ բացերով, և 1830 թվականից վեր է ածվում գիմնազիայի։

Նախանձելի չէր և Թիֆլիսի հայ բնակչության մշակութային կյանքը։ Ամբողջ քաղաքում հայերեն լավ իմացողի համարավ ուներ միայն Նորաշեն եկեղեցու ժամկոչ Եղիազար Գալստյանը, որը եկեղեցուց քիչ հեռու վարձած մի խանութում կարդալ-գրել էր սովորեցնում 13 մոնթերի, ապագա քահանայացուների, օգնական ունենալով «գիալախկաա»-ն։

Հայկական դպրոցի բացման համար ԺԹ դարի երկրորդ տասնամյակում Թիֆլիսում նպաստավոր պայմաններ են ստեղծվում։ Հարկավոր էր մի հայրենասեր, ազդեցիկ, ձեռներեց և հեղինակավոր անձ, որ գլուխ կանգներ այդ մեծ գործին։

Եվ դոնվից այդ անձը, ԺԹ դարի առաջին կեսի հայ իրականության ամենաազդեցիկ հոգևոր և քաղաքական գործիչը՝ Ներսես Աշտարակեցին, մեծ ժողովրդականություն վայելող այդ հայրենասեր հոգևորականը, որը հեռատես աչքով, խորաթափանց հոգով դիտեց և ըմբռնեց ժամանակի հայ իրականության մտավոր պահանջները և այն իրականացնելու համար անհողդողդ կամքով, բացատրական-կազմակերպչական հմտաց, անդուլ աշխատանքով հիմքը դրեց Թիֆլիսի հայոց ուսումնարանի։

Ներսես Ե Աշտարակեցու միրտության անունն է եղել Թորոս՝ ի հիշատակ իր Թորոս պապի։ Ներսես անունը, ինչպես և Աշտարակեցի կոչումը, նա ստանում է հետագայում։ Աշտարակեցին ծնվել է 1870 թվականին Աշտարակ գյուղում, աշտարակեցի Հարություն Շահազիզյան քահանայի ընտանիքում։ Ութ տարեկան հասակում Թորոսի հնարահայր Գալուստ արքեպիսկոպոսը, ծնողների ուխտի համաձայն, երեխային տանում է էջմիածին և տալիս Սիմեոն կաթողիկոս Երևանցու բաց արած ժառանգավորաց դպրոցը, ուր նա մնում է շուրջ 13 տարի։ Ինչպես վկայել են ժամանակակիցները, Թորոսը փոքր հասակում եղել է վտիտ, բայց շատ աշխույժ, համարձակ, սրամիտ, աշխատասեր, ընթերցասեր, ընկերասեր, հայրենասեր, զարմանալի հիշողության տեր մի տղա։ Իր արտակարգ ընդունակությունների շնորհիվ, Թորոսը շուտով աչքի է ընկնում և արագորեն առաջադիմում։ 21 տարեկան հասակում նա ձեռնադրվում է ավագ սարկավագ, 24 տարեկան հասակում (1794 թ.)՝ վարդապետ, վերանվանելով Ներսես։

Կրոնական-եկեղեցական գործերով Ներսեսն այնուհետև շրջում է դանդաղ երկրներ՝ Մոլդովա, Վալաքիա, Հունաստան, Պոլիս, Զմյուռնիա, Օդեսա, Բեսարաբիա և Նոր Նախիջևան։ Այս ճանապարհորդությունների ընթացքում ավելի է ընդլայնվում, հարստանում նրա աշխարհայացքը։ Դեռևս իր ճանապարհորդությունների ընթացքում Ներսեսը որոշում է բանալ մի մեծ դպրոց հայ ժողովրդի լուսավորության համար։

1807 թվականին, Նոր Նախիջևանում առաջնորդական փոխանորդի պաշտոնը վարելիս, Ներսեսը որոշում է հայաբնակ այդ քաղաքում բաց անել մեծ ուսումնարան։ Մոսկվայի հայ նշանավոր հարուստ Հովհաննես ագա Լազարյանը մահանալիս, 1801 թվականին, 200 000 ռուբլի դրամ էր կտակել, հայաշատ կենտրոնական մի վայրում չքավոր երեխաների ուսուցման համար ուսումնարան կառուցելու համար։ Կտակատար Հովակիմ ագա Լազարյանը (Հովհաննես Լազարյանի եղբայրը), ժամանակի խառնակության պատճառով, դժվարանում էր որոշել այդ ուսումնարանի կառուցման հարմարագույն վայրը։

Ներսեսը, ինչպես և նորնախիջևանցիք, աշխատում են այդ դպրոցը բաց անել իրենց մոտ, որի համար մի խնդրագիր են ուղղում Լազարյանին և միաժամանակ այդ նպատակով դրամական հանգանակության ցուցակագրություն են սկսում իրենց մեջ։

Ներսես Աշտարակեցին էլ այդ բացվելիք ուսումնարանի համար մի կանոնագրություն է մշակում, որից երևում է նրա ողջ մտահոգությունը ուսուցման և առհասարակ մանկավարժության նկատմամբ, թե ի՞նչ էր նա պահանջում ազգային ուսումնարանից, ինչ տեսակ կրթություն էր ցանկանում տալ հայ մանուկներին։

Այդ կանոնագրության մեջ Աշտարակեցին խոսում է ուսման անհրաժեշտության, նրա տևողության, ուսուցիչների պարտականությունների, աշակերտի վարքի և այլ կարևոր խնդիրների մասին։

Այսպես, առաջաբանում հայտնում է, թե ինչպես առանց ժամանակի անհրաժեշտ տևողության, հնարավոր չէ փոքրիկ մանկան միանգամից մեծ, կատարյալ մարդ դառնալը, այնպես էլ անհնար է, որ այդ անգրագետ, ոչինչ չիմացող մանուկը միանգամից, առանց ժամանակի որոշ տևողության, հասուն, գիտուն մարդ դառնա։ Եթե նույնիսկ այդ փոքրիկ մանուկը օժտված լինի փայլուն, զորավոր մտքով, բայց չունենա խելոք, պատրաստված ուսուցանողներ, կամ այդպիսիք լինեն անփույթ, թերանան իրենց ուսուցանելու գործում, ապա այդ մանկիկը չի կարող զարգանալ, առաջադիմել մտքով։ Ուսուցչին նա համեմատում է հմուտ ոսկեգործի հետ, ասելով, որ եթե մանկան միտքը հանդիսանա մաքուր, փայլուն ոսկու նյութ, բայց չունենա վարպետ ոսկեգործ, ո՞վ կարող է նրանից գեղեցիկ պսակ պատրաստել, և եթե լինի հմուտ ոսկեգործ, բայց չունենա համապատասխան գործիքներ, ինչպե՞ս նա կարող է աշխատել։

Այնուհետև, խոսելով ուսման տևողության մասին, հայտնում է, որ տառաճանաչությունը նոր սովորող երեխաները դպրոց պետք է ընդունվեն 8—9 տարեկանից և սո-

վորեն դպրոցում մինչև 16 տարեկան հասակը։ Ուսումնարան ընդունվող բոլոր երեխաները, հարուստ թե աղքատ, ուսման ամբողջ ընթացքում հավասարապես պետք է ենթարկվեն դպրոցի բոլոր կանոնների, պարտավոր են շաբաթվա բոլոր օրերը հաճախել դպրոց, բացի կիրակի և հանդիսավոր օրերից, որ ծնողները իրավունք չունեն ինքնակամ, ժամանակից շուտ երեխաներին հանել դպրոցից (նման ծնողներին ենթարկել տուգանքի կամ հասարակական պարսավանքի)։

Խոսելով ուսուցիչների մասին, հայտնում է, որ նրանք ուսուցման գործում պետք է լինեն ուժեղ ու աշխույժ, ամբողջ եռանդով, կարողությամբ ու սիրով նվիրվեն երեխաների ուսուցման գործին։ Առաջարկում է ուսման սկզբնական շրջանում ստուգել բոլոր սովորողների մտավոր կարողությունները, նրանց սրամտությունն ու ուշիմությունը՝ կարդալ չիմացողներին երկու տարվա, իսկ իմացողներին վեց ամսվա ընթացքում և պակասավոր, անընդունակ երեխաներ հայտնաբերելու դեպքում խորհուրդ տալ նրանց ծնողներին՝ այդպիսիներին դպրոցից հանելու և որևէ արհեստի տալու։ Ուսուցիչները ո՞չ մի տարբերություն չպետք է դնեն հարուստ և աղքատ աշակերտների միջև, բոլորին ուսուցանեն հայրաբար, սիրով և ոչ կոպտությամբ։

Այնուհետև Աշտարակեցին այդ կանոնագրության մեջ խոսում է աշակերտների վարքի կանոնների մասին դպրոցում, տուն վերադառնալիս և տանը։

Սակայն Աշտարակեցին շտապ կանչվում է Էջմիածին, որով և անկատար է մնում նոր նախիջևանում դպրոց բանալու նրա ցանկությունը։

Հովակիմ աղա Լազարյանն էլ հետագայում որոշում է իր դպրոցը կառուցել Մոսկվայում։

Վերադառնալով Էջմիածին, 1808 թվականին Աշտարակեցին Դանիել կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրվում է եպիսկոպոս։ Մինչև 1814 թվականը նա գործում է Մայր Աթոռում, որպես Սինոդի անդամ և հանդիսանում է կաթողիկոսի աջ բազուկը։

1813 թվականին Աշտարակեցին էջմիածնում կառուցում է ուսումնական մի փոքր շենք մոտ 50 երեխայի համար, մտադիր լինելով հետագայում այն ընդարձակել, դարձնել մոտ 200 սովորողների համար։

1814 թվականին Աշտարակեցին, 44 տարեկան հասակում, նշանակվում է Վրաստանի ու Իմերեթիայի թեմի առաջնորդ։ Վրաստանի թեմն ընտրելու նրա առաջին նպատակը հենց այն է եղել, որ իրագործի վաղուց ունեցած իր ցանկությունը՝ ազգային դպրոցի բացումը։

Բլուդով նախարարին 1838 թվականին ուղղած իր մի նամակում ահա թե ի՞նչ է գրում այդ մասին.

«...Չի ես ի ժամանակաց 20-ամեայ հասակի իմոյ տեսանելով և լսելով ի մերազնեայս սակաւ յոյժ գիտնական անձինս և զգալով զայնպիսի համազգական ապարախտութիւն իմում հայրենի ազգի առ գոլոյ ուսումնարանաց, միշտ միտք իմ և խորհուրդք տառապեցուցանէին զիս խոկալ վասն կարևոր հնարից ազգական ուսումնարանաց՝ ունելով ի նպատակի մտաց զմխիթար վարդապետ Սեբաստացի... անագան ուրեմն յամի 1813, յաւուրս պատրիարգութեան Եփրեմայ՝ հաճութեամբ նորին և Սինոդի եռաւ կանգնել գառաջինն անդէն յէջմիածին սակաւ ծախիւք Աթոռոյն զփոքրիկ շինուած ըստ չափու 50 մանկանց՝ որպէս ստուեր իմն յիմում խորհրդեան նախատպաւորեալ ուսումնարանի վայելչական այնմ ընդհանրական Պատրիարգական Աթոռոյ ամենայն հայոց...»[1]։

Ներսեսը Վրաստանի թեմի գործերը գտնում է վերին աստիճանի անարեկարգ վիճակում. եկեղեցիները աղքատ, թալանված, հոգևորականությունն ինքը տառապում էր խավարի մեջ։ Հայ քահանաների զգալի մասը գրել-կարդալ չգիտեր։ Ժամասացությունը նրանք սովորել էին միմյանցից բերանացի լսելով։ Շատերը հազիվ կարողանում էին իրենց ազգանունները մի կերպ ստորագրել։ Քաղաքի հայ բնակչության մեծ մասը վրացախոս էր, բոլոր գրությունները կատարվում էին վրացերեն և միայն ժամասացությունն էր հիշեցնում հայերենը։

Այդ միջավայրում ահա պիտի աշխատեր Ներսեսը, կարգավորեր բոլոր գործերը։ Եվ նա եռանդուն գործունեություն է ծավալում այստեղ, սկսելով առաջնորդարանի, եկեղեցիների բարեկարգումից։

Մեծ դժվարությունների գնով, երբեմն բարձրագույն իշխանության միջամտությամբ, Ներսեսին հաղիվ է հաջողվում մինչև 1818 թվականը կարգավորել եկեղեցիների տնտեսական վիճակը, եկեղեցական կառավարությունն ենթարկել արքեպիսկոպոսական տեսչությանը, զսպել քահանաների ու վարդապետների անզուսպ կենցաղավարությունն ու ընչաքաղցությունը։ «...Առանց բարձրագույն տնօրինութեանց չկարողացաք մեք կարճել դանսահման կենցաղավարու-

[1] Հայկական ՍՍՌ պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 56, գործ 2, թուղթ 140։

Թիֆլիս քահանայից մերոց և այլոց եկեղեցականաց, և ոչ եղն հնար բարեկարդելոյ զեկեղեցիս և զեկեղեցականսն մերս։

Սակայն Ներսեսի ուշադրության կենտրոնը, հիմնական նպատակը մի կանոնավոր ուսումնարանի բացումը, նրան եկամտի հաստատուն աղբյուրներով ապահովելն էր, որին և ձեռնամուխ է լինում նա իր ամբողջ եռանդով։

Այդ շրջանում ուսումնարաններ են բացվում հայաշատ մի շարք քաղաքներում։ Այսպես, 1810 թվականին Ազարաբյան եղբայրները առաջին անգամ Աստրախանում բացում են մի դպրոց, որ իրենց անունով էլ կոչվել է Ազարաբյան դպրոց։ 1815 թվականին Հովհաննես և Հովսեփ Լազարյան եղբայրների կողմից Մոսկվայում բացվում է Լազարյան ճեմարանը։

Սակայն այդ, ինչպես և հետագայում այլ անգներում բացված դպրոցները բավական հեռավորության վրա կտրված լինելով մայր երկրից, չէին կարող այն հսկայական դերն ու նշանակությունն ունենալ, ինչ կարող էր ունենալ իր կամ հարևան երկրի մեջ բացված դպրոցը։

Մոտավոր հաշվումներով նա ենթադրում է, որ իր մտահղացած ուսումնարանի կառուցման համար կպահանջվի մոտ 30 000 ռուբլի։ Ներսեսը մտածում է, որ եթե իր խնամքին հանձնված Վրաստանի թեմի ավելի քան 12 000 ընտանիքից յուրաքանչյուրն այդ նպատակի համար նվիրի մեկական ռուբլի, կստացվի 12 000 ռուբլի, մնացած գումարը նա հնարավորությամբ կհավաքի մյուս թեմերից և դրսից։

Ոգևորված այդ մտքով՝ Ներսեսը 1814 թվականի վերջերին իր մոտ խորհրդակցության է հրավիրում Թիֆլիսի հայ հասարակության աչքի ընկած ներկայացուցիչներին՝ ազնվականներին, իշխաններին, առևտրականներին, խոսում հայ ժողովրդի տխուր ներկայի, նրա մտավոր խավարի մասին, հայտնում նրան այդ վիճակից հանելու իր մտահղացման, համապգային բարիքների աղբյուր հանդիսացող մի մեծ ուսումնարանի հիմնադրման մասին, ծանոթացնում իր նախատեսած այդ դպրոցի նախագծին, դրա կառուցման համար անհրաժեշտ գումարին, այդ դրամը հավաքելու իր ծրագրին և առաջարկում անցնել նվիրատվությունների ցուցակագրմանը։

Հավաքված հայ մեծամեծները, որ իրենց կյանքում ժամկոչ եղիազարի դուրան-վարժատնից բացի բարեկեցիկ ուսումնարանի մասին հասկացողություն չունեին, լսելով Ներսեսի ներկայացրած ահագին ուսումնարանի հոյակապ նախագծի և այդ նպատակի համար պահանջվող 30 000 ռուբլի գումարի մասին, դարմանում, ապշում են, գտնում այդ անիրագործելի և ծիծաղելով ցրվում, իրար ականջի փսփսալով, թե «վարդապետը բանկ է ուզում շինել»։

Սակայն Ներսեսը չի հուսահատվում և համառ ու անխոնջ եռանդով գործի է անցնում։

1815 թվականին, վանքի խցերից մեկում, նա ժամանակավորապես մի փոքրիկ դպրոց է բացում, ուր մոտ 20-ի չափ երեխաներ, գլխավորապես հոգևոր դասից, գրել-կարդալ են սովորում նախ վաղարշապատցի Տեր-Հովհան ավագ քահանայի, ապա գիտնականի ու հայկաբանի համբավ վայելող զարդազգի Պողոս վարդապետի մոտ։

Ներսեսի այդ շինարարական ձեռնարկումները, չնայած սկզբում անհրաժեշտ արձագանք չեն գտնում Թիֆլիսի հայ հասարակության վերին խավերում, սակայն շուտով բոլորը, նույնիսկ նրա հակառակորդները, տեսնելով նրա ձեռնարկած բարեհորոշչական և շինարարական մեծ աշխատանքները, համախմբվում են նրա շուրջը, իրենց պատրաստակամությունը հայտնում որևէ գործով օգնելու նրան, նպաստելու նրա կատարած աղդոգուտ խոշոր գործին։

Ներսեսի այդ լուսամիտ աշխատանքը խրախուսվում, օժանդակություն էր ստանում ոչ միայն հայերի, այլև նրանց հարևանների՝ վրացիների, ադրբեջանցիների և ուրիշների կողմից։

Ուսումնարանի շինության օգտին Թիֆլիսի հայ հասարակության մեջ սկսվում է դրամական, շարժական և անշարժ կալքերի, մեծ ու փոքր նվիրատվությունների մի լայն շարժում։

1816 թվականին Վրաստանի հայ ազնվական Սարգիս Եսայան Լոռիս Մելիքյանցը Պետերբուրգից լսելով Ներսես արքեպիսկոպոսի կողմից ուսումնարանի կառուցման ազդոգուտ գործին մասնակցելու հրավերը, նրան է ուղարկում այդ նպատակի համար առաջին նվերը՝ 500 ռուբլի թղթադրամ, ազնվասաղով խնդրելով ընդունել այդ գումարը, համարելով նրա ձեռնարկումը որպես «ազգիս ամենայն բարեաց առաջնոց և վերջնոց աղգի հայոց»։ Մի քանի օրից հետ վանքի եկեղեցու ավագ քահանա, ծերունի Տեր Ղազար Լազարյանը Ներսեսին է ներկայացնում 3 000 ռուբլի մի մուրհակ, որով Հովհաննես Լազարյանը 1801 թվականին մահանալիս կտակել էր այդ գումարն ստանալ իր ժառանգներից՝ որևէ բարեգործական-ուսումնական նպատակի համար։ Կտակողի ժառանգը՝ Հովսեփ Լազարյանը, 1818

թվականին այդ գումարը վճարում է տոկոսով՝ 5 000 ռուբլի թղթադրամով, բացի դրանից, նույն նպատակի համար 1820 թվականին լրացուցիչ վճարում է ևս 2 000 ռուբլի թղթադրամ։

Թիֆլիսեցի Թովմաս Հովհաննիսյան Դավթյանցը երիտասարդ հասակում Աստրախանում մահանալիս, հայոց ազգի բարեգործության օգտին կտակել էր 20 000 ռուբլի, որից 2 800 թղթադրամ ռուբլին նրա հարազատները հատկացնում են Ներսեսի կողմից կառուցվելիք ուսումնարանի օգտին։ Խոսրով խան Ղայթմազյանի կողմից այդ նպատակի համար հատկացվում է 4 000 ռուբլի։ Այդ ազգօգուտ գործից ետ չի մնում և քաղաքի կանանց դասը, որը գրամական ցուցակագրություն է անցկացնում իրենց մեջ։

Նյութապես օժանդակողներին զուգընթաց, Ներսեսն ուներ նաև բարոյապես ոգևորող օժանդակողներ, որոնք տարբեր տեղերից՝ ներսից ու դրսից (Հնդկաստանից) քաջալերում, ոգևորում էին նրա այդ լուսավոր միտքը և խորհուրդ տալիս որքան հնարավոր է շուտ սկսել նրա գործադրումը։ Այդ մարդկանցից մեկը հենց Հովակիմ Լազարյանն էր, որը 1820 թվականի դեկտեմբերի 10-ին Ներսեսին ուղղած նամակում իր հոգու հրճվանքն է հայտնում նրա ազգասիրության ու իմաստախոհության համար, որի դլխավորագույնն ուսումնարանի սկզբնավորումն է։ Լազարյանը խորհուրդ է տալիս որքան կարելի է շուտ սկսել ուսումնարանի կառուցումը, որովհետև ցավոք սրտի պիտի նշել հայ մանուկների տակավին զուրկ լինելը մայրենի լեզվագիտությունից և վարժ լինելը ռուսաց և վրաց լեզուներին. «... մանաւանդ զի ցաւեցմամբ սրտի տեսանեմ զմանկտիս այտի առաջնոց անձանց և ժողովրդականաց տակաւին զուրկ ի մայրենի իւրեանց լեզուագիտութենէ և վարժ ի լեզվի վրաց և ռուսաց»։

Քաջալերված այս նվիրատվություններով, Ներսեսը ձեռնամուխ է լինում ուսումնարանի կառուցման գործին։ Նախ, որպես եկամտի հիմնական աղբյուր, շինել է տալիս 32 կամարակապ խանութներ, քաղաքի զանազան մասերում գնում եկեղեցապատկան տներ և միայն 1821 թվականի նոյեմբերի 21-ին սկիզբ դնում ուսումնարանի շինության («... սկիզբն արար բրելոյ զհիմունս ուսումնարանի»)։

Նկատի ունենալով տեղում հմուտ վարվարպետների պակասը, Ներսեսը Պարսկաստանից ևս բերել է տալիս հայ և պարսիկ որակյալ արհեստավորներ, վարպետներ։

1822 թվականի փետրվարի 7-ին Թիֆլիսի «Մայդատսկի բազար» կոչված հրապարակում, Ներսեսը հանդիսավոր կերպով կատարում է ուսումնարանի հիմնաքարը, ներկայությամբ Երմոլով կուսակալի, քաղաքի նշանավոր մարդկանց, հոգևորականների և ժողովրդի մեծ բազմության։ Հիմնաքարից հետո հյուրերի ու բանվորների համար կազմակերպվում է ճոխ ճաշկերույթ։

Շենքի կառուցմանը զուգընթաց շարունակվում են դրամական նվիրատվություններ, մեծագումար կտակներ։

Շենքի լրիվ ավարտումը չնայած կատարվում է 1829 թվականին, բայց դեռ 1824-ին, երկրորդ հարկը վերջացնելուց հետո, Պողոս վարդապետն իր աշակերտներով վանքի ժամանակավոր դպրոցից փոխադրվում է նոր շենք։

Թիֆլիսի հայոց ուսումնարանի պաշտոնական բացումը չնայած համարվում է 1824 թվականի դեկտեմբերի մեկը, սակայն 1831 թվականի հունիսի մեկին Թիֆլիսի հայկական ուսումնարանի կառուցման կոմիտեին ուղարկած Հարություն Այամդարյանի պատասխան գրությունից և այդ կոմիտեի կողմից Անդրկովկասյան ուսումնարանների տեսչության տված պատասխանից երևում է, որ այդ ուսումնարանը բացվել է 1825 թվականի հունվարի 1-ին[2]։

Իր ժամանակ այդ շենքը եղել է Թիֆլիսի առաջին հոյակապ կառույցը, որ գրավում էր բոլորի ուշադրությունը։ Այդ շենքի մասին գովասանքով են խոսել նաև եվրոպացի ճանապարհորդները։

Ըստ Ներսեսի վկայության, այդ շենքն արժեր ավելի քան 40 000 ռուբլի։ Հատկապես գեղեցիկ էր վերնահարկի ընդարձակ դահլիճը։

Եվ, այսպես, շնորհիվ դեպի հայրենի ազգի լուսավորությունն ունեցած անսահման սիրո, հաղթահարելով այդ ճանապարհի վրա եղած բոլոր դժվարությունները, Ներսեսը մի շարք կառուցումներից հետո ավարտում է ուսումնարանի շենքը, հենց սկզբից ապահովելով այն իր սեփական տպարանով։

Ներսեսի ամբողջ մեծությունը, բացառիկ կամքն ու դեպի ազգի լուսավորությունն ունեցած անսահման սերը պարզ կդառնա յուրաքանչյուրի համար, երբ աչքի առաջ ունենա այն ժամանակաշրջանը, միջավայրն ու պայմանները, որում ձեռնարկում էր նա իր դպրոցաշինարար և բարեհորոգչական այլ բազմաթիվ աշխատանքները։

Հայ ժողովրդի մտավոր խավարում, ինքնուրույնությունից զուրկ, նյութական-տնտե-

---

[2] Հայկական ՍՍՌ պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 2, ցուցակ 1, գործ 11, թուղթ 4)։

սական ծանր պայմաններում մի մեծ դպրոց ունենալու մտահղացումն այլ է, այն կյանքի կոչելու, նրա գոյությունն ու գործունեությունը անհրաժեշտ, հաստատուն աղբյուրներով ապահովելու մեծությունն այլ։ Պետությունը չէր, որ պիտի հոգար նրա կառուցման, սովորողների և ուսուցիչների պահպանման ծախսերը նրա գոյության ամբողջ ընթացքում։ Այդ պատասխանատվությունը, դժվարությունն ամբողջապես ընկնելու էր միայն ու միայն հայ ժողովրդի վրա, իսկ դա այնքան էլ հեշտ գործ չէր. դրա համար էլ անհրաժեշտ էին խոշոր գումարներ, մշտական, հաստատուն նյութական աղբյուրներ։

Այդ բոլորն ստեղծելու համար անհրաժեշտ էր համառ կամք, մեծ հեղինակություն, բացառիկ խոսքի մեծ ուժ, որպիսի հատկանիշներով օժտված էր Ներսեսը։ Եվ, իսկապես, նա ծավալում է կազմակերպչական մի այնպիսի եռանդուն աշխատանք, բացառիկ մի այնպիսի ուժեղ, ազդեցիկ խոսք, որ ամենուր սկսվում է դրամական, շարժական ու անշարժ գույքերի նվիրատվությունների մի մեծ հոսք, որը և հնարավորություն է տալիս Ներսեսին համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կենսագործելու իր մեծ ծրագիրը։

Անսահման մեծ էր Թիֆլիսի և մոտակա շրջանների հայ հասարակության ուրախությունն այդ դպրոցի բացմամբ։ Իր հիմնադրման օրից, այդ դպրոցը վայելել է ամբողջ հայ ժողովրդի սերն ու համակրանքը, եղել նրա ամենից ավելի սիրված, նրա ամենաազգատար հաստատությունը, որի ապահովման ու բարգավաճման համար նա ոչինչ չի խնայել։ Սիրնական շրջանում արված կտակներից մեկը (Բեժան Խատիսյանի) նշանավոր է նրանով, որ առաջին անգամ ուսումնական այդ հաստատությունն անվանվում է հիմնադրի անվամբ՝ «Ներսիսյան դպրոց», որով և անվանվում է այնուհետև (մինչև 1826 թվականը այն կոչվում էր Թիֆլիսի հայոց ուսումնարան կամ դպրոց, հաճախ ուղղակի «վանքի շկոլա»)։

Ներսեսի ցանկությունը միայն կրթված հոգևորականներ պատրաստելը չէր. նա ցանկանում էր ամբողջ հայ ազգը լուսավորել, զարգացնել սովորողների բարոյական ու մտավոր կարողությունները, գրագիտություն և լույս տարածել չքավոր ու անգետ ժողովրդի մեջ, որի համար և իր ուսումնարանի դռները լայնորեն բացում է սովորել ցանկացող բոլորի առջև։

Անվանի գրող Պերճ Պռոշյանը 1900 թվականին «Տարազ» շաբաթաթերթին (№ 2632) տված իր «Ներսես Ի Աշտարակեցի և Ներսիսյան դպրոց։ Այս Երկուսը միասին կազմում են անբաժան ձուլված մի ամբողջություն» խորագրով հոդվածում ահա թե ի՞նչ է գրում Ներսեսի մասին.

«...Միշտ աչքիս առաջ կենդանանում է ինքը՝ մեծ Ներսեսը, յուր ժամանակին Թիֆլիսի առաջին հոյակապ շենքի կարճահասակ, պատկառելի հիմնադիրը գլուխը վեր բռնած՝ յուր ձեռակերտը դիտելիս։

...Բայց եթե գիտենաք ի՞նչ մեծ հրճվանքով կանգնում էր նա դպրոցի նրբանցքի ծայրին և ժպիտն երեսին նայում երեխաներին, որոնք դասամիջոցներին խմբերով դուրս էին թափվում դասարաններից և շտապում հինգ բոպե ազատ շնչելու...

...Այո, Ներսես կաթողիկոսը յուր դպրոցի սաներին սրտանց սիրում էր։ Նա փառասիրության կամ այլ նպատակով չի հիմնել Ներսիսյան դպրոցը։ Նա հայ ազգի հարազատ և իմաստուն հայրն էր, նախօրոք հասկացել էր, որ ազգասեր հոր սուրբ պարտքը յուր զավակներին լուսավորելու ջանքն է։ Այդ դաղափարն էր, որ թելադրեց նրան վրաստանի առաջնորդության դեկն ստանձնած օրից մի լուսավորության տաճարի հիմք դնել, որտեղից կարող էր սփռվել Ավետարանի և քաղաքակրթության լույսը»։

* * *

Ներսես Աշտարակեցին իր ուսումնարանի կառուցման հենց առաջին օրերից մտահոգվում է այդ ուսումնարանն ապահովելու ձեռներեց, գիտուն, առաքինի ուսուցչական կազմով, լավ իմանալով, որ մի ուսումնական հաստատություն կարող է պարծենալ և հռչակվել ոչ միայն իր արտաքին գեղեցկությամբ, ճոխությամբ, այլև ամենից առաջ իր պատրաստված, բարեխիղճ մանկավարժական կազմով, իր տված ուսման բարձր որակով։ Իսկ գիտուն, ուսումնական մարդիկ՝ ուսուցիչներ այն ժամանակներում հազվագյուտ էին ճարվում։ Եվ ահա Ներսեսը այդ խնդրով հետաքրքրվում, գիմում է դանդաղ տեղեր իր բարեկամներին՝ Պոլիս, Զմյուռնիա, Փարիզ, Մոսկվա, Հնդկաստան։

Մոսկվայից նա 1824 թվականի աշնանը հրավիրում է հայ նոր քնարերգության հիմնադիրներից, ԺԹ դարի 20—30-ական թվականների լուսավորության շարժման առաջավոր ներկայացուցիչներից մեկին՝ Հարությունքահանա Ալամդարյանին, որին և նշանակում է իր նոր բացած դպրոցի ուսուցիչ և տեսուչ, Թավրիզից հրավիրում է պարսկերենի քաջ գիտակ Բենջեհեմ անունով մեկին, Փարիզից՝ Շահան-Ջրպետին։

Տեսուչ Հարություն Ալամդարյանն իր սկզբնական կրթությունն ստացել էր Աստրախանում նոր բացված Ազգարարյան դպրոցում, աշակերտել Հովակավոր գիտնական Սերովբե վարժապետ Պատկանյանին, ստացել հիմնավոր կրթություն հայոց լեզվից ու գրականությունից, և որպես լավագույն սովորող, դեռ դպրոցը չավարտած, նշանակվել նույն դպրոցում հայոց լեզվի ուսուցիչ։

1813 թվականին Ալամդարյանը, Հովակիմ Լազարյանի հրավերով, փոխադրվում է Մոսկվա, պաշտոնավարում Լազարյան ճեմարանում։ Այստեղ ինքնազարգացմամբ նա գիտական մեծ պատրաստականություն է ձեռք բերում։

Ալամդարյանը լավ կրթություն ստացած, գրական տաղանդով օժտված, համեստ, բարեխիղճ, գործունյա, կարող մի ուժ էր։ Ստանձնելով Ներսիսյան դպրոցի ուսուցչի և տեսչի պաշտոնները, Ալամդարյանի ուսումնական գործունեության համար բացվում է մի լայն ասպարեզ. նա ամբողջությամբ նվիրվում է ուսումնական գործին, Ներսեսին է ներկայացնում իր մշակած ծրագիրը աշակերտների կարգապահության և դպրոցի մեջ դասընթացի մասին, որի կետերից կարելի է նշել մի քանիսը. ա) Ուսումնարան կարող են ընդունվել սովորել ցանկացող բոլորը՝ 8 տարեկանից սկսած մինչև վեր, առանց տարիքի տարբերության. բ) ուսումնարանում սովորելու երկու ժամկետ է սահմանվում՝ կարճ—երեք տարով և երկար—տասն տարով. գ) յուրաքանչյուր աշակերտ պարտավոր է սովորել երեք լեզու՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն կամ պարսկերեն (այլ լեզուների ուսուցումն՝ ըստ սովորողների ընտրության ու հոժարության). դ) մինչև երեք տարին լրանալը, աշակերտները պարտավոր են սովորել այդ երեք լեզուների գրավարժությունը, բառագիտությունն ու քերականությունը, ապա անցնում էին քրիստոնեական վարդապետություն, թվաբանության սկզբունքները, հանրահաշիվ, երկրաչափություն, ֆիզիկա, ճարտասանություն, տրամաբանություն, գրականություն, պատմություն, աշխարհագրություն, նկարչություն. ե) ամիսը մեկ անգամ հրավիրել մանկավարժական ժողով, որին, ուսուցիչներից բացի, պետք է մասնակցեն քաղաքի նշանավոր մարդիկ՝ աշխարհական կամ հոգևորական։

Մի քանի առարկաները ուսուցիչներն անցնում էին գրաբար լեզվով, մյուսները՝ աշխարհաբար։ Բոլոր առարկաները դասավանդվում էին հարց ու պատասխանի մեթոդով։

Աշակերտների թիվը դպրոցում օրեցօր ավելանում էր. եթե ուսումնական տարվա սկզբին՝ 1824 թվականի սկզբներին, նրանց թիվը հաշվվում էր 140՝ երեք դասարանով (ստորին, միջին և վերին), ապա 1825-ի սեպտեմբերին այն հասնում է 320-ի, 1826 թվականի մայիսին, երբ սովորողների թիվը հասնում է 360-ի, բացվում են նաև չորրորդ և հինգերորդ դասարանները։

Ուսման սկզբնական տարիներում դասերը օրական տեղի էին ունենում 8 ժամ (4-ը՝ առավոտյան, 4-ը՝ երեկոյան)։ Ուսուցիչների աշխատավարձը ամսական 5-ից մինչև 16 ռուբլի էր։

Ուսուցչական կազմը 1824—1825 ուսումնական տարում հինգ հոգի էր. ա) Հարություն քահանա Ալամդարյան՝ տեսուչ և դասատու հայոց, ռուսաց լեզուների, կրոնի և վայելչագրության, բ) Պողոս վարդապետ, որ պարապում էր ճարտասանություն և տրամաբանություն, գ) Ալեքսանդր Իվանիչ Զելինսկի, որ պարապում էր ռուսաց լեզու, թվաբանություն, դ) Թեթղեհեմ (Պարսկաստանից եկած) պարսկերեն, ե) Ներսես Արարատյանց՝ հայոց, ռուսաց լեզուներ, վայելչագրություն։

Ալամդարյանը չնայած դեպի ուսուցչական կազմը տածում էր մեծ արժանապատվություն, համեստություն, սակայն ուսումնական գործում խստապահանջ էր, անգիջող։

Ալամդարյանը կազմում է հրահանգներ ուսուցչական ժողովների համար, ծրագրեր կարգապահության, անցնելիք դասընթացի և այլ աշխատանքների վերաբերյալ, որից և երևում է նրա դպրոցամոտ, մանկավարժական, մարդասիրական սկզբունքները։ Այսպես, ուսուցիչների համար կազմած հրահանգում նշում է, որ ուսուցիչը պարտավոր է աշակերտին առաջնորդել ուղիղ ճանապարհով, տանելով նրանց պարզից բարդը, հեշտից դժվարը, որ ուսուցիչը պետք է ոչ միայն հառնդով, որակով սովորեցնի, այլև իր վարք ու բարքով խոսուն, կենդանի օրինակ հանդիսանա առաքինության, սիրի բոլոր աշակերտներին հայրաբար, ոչ մի խտրություն չդնի հարուստ ու չքավոր սովորողների միջև, հեռու լինի կաշառքից, աշակերտին ինքնագլուխ դասից չհանի։ Արգելվում էր ծեծն ու կոպիտ վերաբերմունքը (հանցանքի դեպքում ստորին դասարաններում թույլ էր տրվում ծունկ չոքեցնել, երեսին մուր քսել կամ ճաշից զրկել)։ Այնուհետև մանրամասն խոսվում է աշակերտների դեպի ուսուցիչները և վերջիններիս դեպի աշակերտներն ունեցած փոխհարաբերության կանոնների մասին։

Որովհետև աշակերտներն ընդունվում էին առանց տարիքի և իմացության խտրության, ուստի և հաճախ միևնույն դասարանում սովորողները բաժանվում էին մի քանի խմբերի՝ ըստ իրենց իմացության աստիճանի։ Այս հանգամանքը, ինչպես և տպագրված դասագրքերի բացակայությունը (տպագրված կային միայն մի քանի դրքեր՝ այբբենարան, Ջամչյանի քերականությունը, Ագոնցի ճարտասանությունը և մի քանի կտորներ կրոնից, որպիսիք, սակայն, շատ քիչ էին, բավական թանկ և չքավոր սովորողներին խիստ անմատչելի), չնայած բավական դժվարացնում էին ուսուցման բնականոն ընթացքը (ուսուցիչներն իրենց անցնելիք դասն անցնում էին բերանացի կամ դրում տետրերում, որից աշակերտները արտագրում և սովորում էին), սակայն դպրոցի սեսչի և հիմնադրի անխոնջ աշխատանքի, ուսուցիչների սրտացավ, լարված աշխատանքի շնորհիվ վերանում էին այդ դժվարությունները, և ուսման որակը հետզհետե բարձրանում էր։

Ներսիսյան հայոց ուսումնարանում Ալամդարյանի պաշտոնավարած տարիները եղել են բավական բեղմնավոր և արդյունավետ։ Նա կառավարեց դպրոցը իր մշակած հրահանգներով մոտ 6 տարի, 1824 թվականի դեկտեմբերից մինչև 1830 թվականի օգոստոսը, լինելով ոչ միայն լավ ուսուցանող, այլև մի ձեռներից և արժանավոր տեսուչ։ Իր եռանդուն, հոգատար, անշահասեր և արդյունավետ գործունեության համար նա արժանանում է մեծ գովեստների։ Նրա պաշտոնավարման ընթացքում ուսումնարանը տալիս է հարյուրից ավելի շրջանավարտներ, որոնք գրական, լուսավորական, զինվորական, քաղաքական ասպարեզներում պատասխանատու աշխատանքների են անցնում։ Ալամդարյանի աշակերտներից են մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, որը միշտ էլ մեծ երախտիքով է խոսել սիրելի ուսուցչի մասին, «Հյուսիսափայլ»-ի խմբագիր Ստեփան Նազարյանը, Ա. Արարատյանցը, հայտնի նկարիչ Ստեփան Ներսիսյանը և շատ ուրիշներ։ Նրա աշակերտներից շատերը պաշտոնավարում էին ինչպես նույն դպրոցում, այնպես էլ Վրաստանի ու Հայաստանի զանազան քաղաքներում։

Ալամդարյանի տեսչության շրջանում այնքան է բարձրանում ուսումնարանի առաջադիմությունը, տարածվում նրա համբավը, որ այդ դպրոցը Թիֆլիսի պետական ազնվականական ուսումնարանից բարձր է համարվում, և վրաց ազնվականներից մի քանիսը իրենց որդիներին այդ դպրոցը տալու փոխարեն, հանձնում են Ալամդարյանի դպրոցը։ Օրինակ, Ալամդարյանի ուսումնարանում են իրենց սկզբնական կրթությունն ստանում Գեորգի Բագրատիոն Մուխրանսկին, իշխան Քայիխոսրո Օրբելյանը, իշխան Թարխան Մովսիսյանը և ուրիշներ։ Այդտեղ էին սովորում և մի քանի հոգի այլազգիներ՝ հույն, թուրք, հրեա։

1826 թվականին Ներսիսյան ուսումնարանը տալիս է իր անդրանիկ շրջանավարտները՝ 18 հոգի։ Այդ առթիվ ուսումնարանի մեծ դահլիճում հայ, վրացի, ռուս և այլ ազգերի բազմաթիվ նշանավոր հյուրերի ներկայությամբ, առաջին անգամ տեղի է ունենում պարգևաբաշխության փառավոր հանդես, ուր դպրոցի հիմնադիր Ներսես Աշտարակեցին գովասանական վկայագրերի հետ միասին իր ձեռքով ոսկեզօծ դրքեր էր նվիրում առաջին ուսումնավարտներին։ Պարգևատրվում են նաև ուսուցիչները դրամով և թանկարժեք կտորեղենով։

Այս անդրանիկ շրջանավարտներից են.

1. Արարատյանց Առաքել Աստվածատուրի, որն ավարտելուց հետո գառնում է նույն դպրոցի հայոց լեզվի ուսուցիչ, ապա ուսուցիչ գիմնազիայի, հեղինակ որոշ աշխատությունների։

2. Վարդանյանց Մովսես Հարությունի, ուսուցիչ նույն դպրոցում, ապա զինվորական.

3. Աբովյանց Խաչատուր Ավետիսի, հայ նոր գրականության անմահ հիմնադիրը և մեծ լուսավորիչ.

4. Նիկողայոսյանց Նիկողայոս Հովհաննեսի, ուսուցիչ նույն դպրոցում, ապա քաղաքացիական պաշտոնյա.

5. Նազարյանց Ստեփանոս Նասայի, «Հյուսիսափայլ» ամսագրի խմբագիրը, նույն դպրոցի տեսուչ.

6. Վարդանյանց (Շերմազանյան) Գալուստ Հարությունի, Թիֆլիսի քաղաքագլուխ, հեղինակ կենցաղային կատակերգությունների.

7. Հովնանյանց Հովհաննես Ստեփանի, վաճառական, Հովնանյան Օրիորդաց ուսումնարանի հիմնադիրը.

8. Մագաքյանց Պետրոս Հովսեփի, զինվորական, բանաստեղծ։

1827 թվականի փետրվարին, ուսումնարանի հիմնադիր Ներսես Աշտարակեցու և հյուրերի ներկայությամբ, տեղի է ունենում շրջանավարտներին նվիրված երկրորդ հանդես, ուր ուսումնարանն ավարտողների թիվը, հաշված և նախորդ տարվանից կամավոր մնացած 11 հոգին, հասնում է 30-ի։

Ներսիսյան դպրոցը հենց միայն առաջին երկու տարում (1826, 1827) տվել է 37 ու-

սումնավարտ, որոնք բոլորն էլ (բացառությամբ մի քանի հոգու) եղել են նշանավոր մարդիկ, հասարակական-քաղաքական մտքի և հայագիտության նշանավոր ներկայացուցիչներ, պատվավոր քաղաքացիներ, ուսուցիչներ, գրողներ, խմբագիրներ, զինվորականներ և այլն։

Ուսումնարանի զեկավարությունը չնայած ամբողջությամբ հանձնարարված էր Ալամդարյանին, որն ամենայն բարեխղճությամբ և օրինակելիությամբ վարում էր իր պարտականությունները, այնուամենայնիվ, դպրոցի ամենահոգատարն և մոտ կառավարիչը ինքը Ներսես Աշտարակեցին էր, նրա հիմնադիրը, որը նորաբաց դպրոցի աշխատանքներով այնքան էր հափշտակված, որ չնայած իր տարիքին (55—56 տարեկան հասակում) և բազմաթիվ աշխատանքներով խիստ ծանրաբեռնված լինելուն, գրեթե ամեն օր, օրը երկու անգամ, առավոտը և ճաշին, ոտքով գալիս էր դպրոց, ժամերով մնում այնտեղ, լսում դասեր, շատ անգամ ուսուցչի բերանից խլում դասավանդությունը և ինքը շարունակում, վերահսկում էր ուսումնարանի ամբողջ գործին, խրախուսում, քաջալերում, օրինակ ցույց տալիս թե՛ ուսուցիչներին և թե՛ աշակերտներին։

Ալամդարյանի տեսչության շրջանում բավական օգտակար աշխատանք է տարվում և դպրոցի ապարանում։ Այստեղ 1824-ից մինչև 1830 թվականը լույս են տեսնում ավելի քան 30 անուն մեծ ու փոքր գրքեր, ուսումնական ձեռնարկներ՝ «Այբուբենք հայոց», Զամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի», «Ներբող նուագերգութեանց», «Ողբ Եդեսիոյ», դպրոցի սաների գրական նախափորձերը՝ «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» վերնագրով, «Հեգաբան սաղմոսք», «Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան» հաղարավոր օրինակներով տետրեր, տոմսեր, ներբողներ, հրահանգներ, հայտարարություններ, օրացույցներ և շատ այլ գործեր։ Միաժամանակ Ալամդարյանը եռանդուն կերպով վարում է առաջնորդական կառավարության գործերը, շարունակում Ներսեսի թերի թողած աշխատանքը՝ շինում կրպակներ, տներ, եկեղեցիներին կից սենյակներ ուխտավորների համար, բավական մեծանում է եկեղեցիներից ստացվող եկամուտը։

Ալամդարյանի տեսչության շրջանը, 1824—1825 ուսումնական տարվանից մինչև 1830 թվականը, չնայած գոյություն ունեցող բավական դժվարություններին և որոշ մարդկանց կողմից անընդհատ նյութվող խոչընդոտներին, եղել են Ներսիսյան ուսումնարանի գոյության առաջին երկու տասնամյակների ամենաբեղմնավոր տարիները, որի համար և իրավամբ մեր բանաստեղծների կողմից այն կոչվել է «Դար Ալամդարյանի»։

Անհրաժեշտ է նշել, որ Ներսես Աշտարակեցին մինչև իր կյանքի վերջը, երբեք ուշադրությունից չի վրիպում այդ դպրոցը և անում է ամեն ինչ նրա բարգավաճման, ծաղկման համար։ Այսպես, 1827 թվականի ապրիլից սկսած, երբ Ներսեսը իր կազմակերպած հայ կամավորական ջոկատների դլուխն անցած, ռուսական առաջապահ զորամասերի հետ միասին մասնակցում էր Երևանյան արշավանքին, ռազմաճակատից նա շարունակ նամակներով խորհուրդներ, ցուցումներ էր տալիս դպրոցի վարչությանը, ամեն կերպ օգնում նրան։ Այնուհետև, Երևանյան արշավանքից հետո, երբ նա նշանակվում է Բեսարաբիայի թեմի առաջնորդ, որ յուրատեսակ մի աքսոր էր նրա համար, նա այդքան հեռավորությունից դարձյալ կապ էր պահպանում Թիֆլիսի իր համախոհների հետ, հետաքրքրվում դպրոցի կյանքով։

Լսելով դպրոցի հետագա աննախանձելի վիճակը, նրա հոգին խորապես վրդովվում է, և նա Բեսարաբիայից մի ծավալուն բողոքագիր է ներկայացնում Ռուսաստանի ներքին գործոց նախարարին, ուր մանրամասն խոսում է այդ դպրոցի վրա տածած իր հույսերի, նրա բարեկարգման ուղղությամբ իր եռանդուն աշխատանքների, դպրոցի նախկին նախանձելի վիճակի, այժմյան խղճուկ դրության և խիստ քննադատության ենթարկում Կարբեցու կողմից դպրոցը հոգևոր ճեմարանի վերածելու անհիմն պատճառաբանությունները։

Թիֆլիս որպես կաթողիկոս մուտք գործելիս, Ներսեսի առաջին գործն է լինում դպրոցի վիճակով հետաքրքրվել։ 1847 թվականի փետրվարի 5-ի կոնդակով, հավատարիմ աշխարհականներից նա մի հանձնաժողով է ընտրում՝ «Կոմիսիա վերաքննութեան տասնամեայ գործոց դպրոցին», որը քննելով դպրոցի և Թիֆլիսի կոնսիստորիայի տասնամյա գործունեությունը, բավական զանցառություններ է հայտնաբերում երկու հիմնարկներում ևս, աղատում տեսուչ Հակոբ Կարենյանցին և նրա հավաքագրած ուսուցիչներին, անիմաստ համարելով տվյալ ուսուցչական կազմով դպրոցի գործունեությունը՝ կարգադրում է այն փակել մինչև նոր ուսուցչական կազմի ընտրությունը, միաժամանակ պաշտոնից աղատում թեմի առաջնորդին և կոնսիստորիայի բոլոր անդամներին։

Այնուհետև, 1848 թվականին, Թիֆլիսի հայ հասարակության առաջադեմ ներկայացուցիչներից իր մոտ խորհրդակցություն է հրավիրում և աշխարհիկ ու հոգևոր անձերից ընտրում «խորհրդարան» կամ հոգաբարձություն անունով մի մարմին, որին և հանձնում է Ներսիսյան դպրոցի ամբողջ տնօրինությունը։

1848 թվականի սեպտեմբերի 5-ին ուսումնարանի վերստին բացման հանդիսավոր արարողության ստիպով, կոնսիստորիայի ավագ անդամ Կարապետ վարդապետ Շահնազարյանը հավաքվածներին է դիմում հետևյալ խոսքերով.

«Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք, գրէ Դեմոսթենէսն (հին ժամանակների հույն մեծագույն ճարտարախոսը, 384—322 մ. թ. ա.) Հայոց Եղիշէ, և յաւելու՝ Քանզի որ կոյրն է աչօք, գրկի միայն ի ճառագայթից արևու, իսկ կոյրն մտօք՝ ի լուսոյ աստուածգիտութեան և ի փրկական խորհրդոց կրօնի։

Չև է անցեալ դեռ քառորդ մի դարու, երբ երևեալ ի Վիրս յառաջանորդութիւն Հայոց Տէր Ներսէս Հինգերորդ և ընդհանրական գլուխ Հայկական Եկեղեցւոյ, որ կամեցեալ հանել զմատաղ մանկտին իւրոյ հոտին ի խաւարէ նախնի տգիտութեան՝ կառոյց բազմաշխատ ջանիւք զայս մեծակառոյց ազգային ուսումնարան սնհամեմատ համարեալ յիւրումն տեսակի ի Հայաստան և ի Վրաստան, ուստի լընթացս կարի փոքր միջոցի ել մեծ մասն այժմեան բոլոր գիտնականաց այսր և այլոց քաղաքաց, արծարծեցաւ ուսումնասիրութիւնն, ի լոյս եկն մաքուր հայերէնախօսութիւն, հանդիսացան լեզուագէտք, թարգմանք և բանաստեղծք և ամենայն օրեար հայ վառեցաւ յուսումն հայրենի բարբառոյ»։

1849 թվականին Ներսեսը դպրոցի կառավարության համար 4 հոգուց կազմված մի հոգաբարձություն է ընտրում, իսկ 1851 թվականի մարտի 8-ից հաստատում է նույակ հոգաբարձությունը, տալով նրան բոլոր լիազորությունները հսկելու, ղեկավարելու դպրոցի ուսումնա-դաստիարակչական և տնտեսական ամբողջ գործունեությունը։

1850-ական թվականները հոգաբարձության օրագրերի մեջ նշվում է որպես դպրոցի լավագույն շրջաններից մեկը, երբ երջանկահիշատակ ձերունի հիմնադիրը Թիֆլիսում եղած ժամանակ համարյա ամեն օր այցելում էր դասարանները և հոգով անսահման հրճվում, երբ վրախոս հայ մանուկների բերանից լսում էր պարզ հայերեն լեզուն։ Նրա աչքերը վառվում էին ներքին ուրախությամբ, սիրտը լցվում անհուն բերկրանքով՝ տեսնելով աշակերտների մաքուր հայերենով դրած շարադրությունները։ Այդպիսի այցելություններից մեկում, Շանշյանի տեսչության ժամանակ, լսելով երեխաներից մեկի դեկուցումը, Ներսես Աշտարակեցին հիացած դիմում է իր մոտ կանգնած Գեորգ Վեհապետյան եպիսկոպոսին.

— Զուրը թափվենք, Գեորգ եպիսկոպոս, ի՞նչ են ասում այս փոքրիկ տղերքը։— Ապա դառնալով Շանշյանին, ասում է. «Ա՜խ, Պետրե, եթե երեսուն տարի առաջ սկսել լինք այս բանս, ո՞րչափ հառաջ գնացած պիտի լիներ մեր ազգը»։

Վրաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, Ներսիսյան դպրոցը վերածվում է № 16 տեխնիկումի, փակագծերի մեջ պահելով՝ «նախկին Ներսիսյան դպրոց» անունը։

Եվ այսպես, Ներսես Աշտարակեցու հիմնադրած դպրոցը իր հարյուրամյա գոյության ընթացքում պատմական անգնահատելի ծառայություն է մատուցել մեր ժողովրդին, որպես լուսո մագնիսական բևեռ իրեն է ձգել մեր երկրի բոլոր կողմերից, նույնիսկ գրսից՝ Թուրքիայից, Պարսկաստանից, Ռուսաստանի հեռավոր հայաբնակ վայրերից հայ ուսումնածարավ պատանիներ, վառել նրանց մեջ կրթության, գիտության, մեր մշակույթի հուրը, հետզհետե լցրել մեր խոպան անդաստանը պիտանի, առաջադեմ մարդկանցով, որոնք անդուլ պայքարել են մտավոր խավարի դեմ, վճռական դեր խաղացել հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներում, մեր լեզուն, դպրությունը, պահել, աճեցրել, հասցրել են զարգացման բարձր աստիճանի։



Ս. ՔՈՒԱՆՋՅԱՆ

ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ*

8. ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԵՐԿԴԱՐՅԱ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱԾԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ (1715—1930 Թ. Թ.)

Տրանսիլվանիայի հայերի ավանդապահ զանգվածները ավելի քան երկու հարյուր տարի շարունակ համառ ու երկար պայքար են մղել Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսի իշխանությունից դուրս գալու, իրենց սեփական ազգային հայածես եպիսկոպոսությունը վերականգնելու և նրա միջոցով հայրենի ավանդությունները և հայոց լեզուն պահպանելու համար։

Տրանսիլվանիայի հայերի պատմության վաստակավոր ուսումնասիրող Հ. Գ. Գովրիկյանի կարծիքով, Ավստրիայի կայսր Կարոլոս Զ-ի 1733 թվականի օգոստոսի 11-ի հրովարտակով է միայն, որ Տրանսիլվանիայի հայերը անցել են լատին եպիսկոպոսի իրավասության տակ[173]*։ Սակայն ինչպես նշում են տրանսիլվանահայ պատմարաններ Խ. Լուքաչյանն ու Խ. Սոնկոտյանը, հիշյալ 1733 թվականից շատ առաջ, Վրդարյանի մահից (1715 թ.) քիչ հետո, սկսած 1716 թվականից, Տրանսիլվանիայի Մարտոնֆի Գեորգ լատին եպիսկոպոսը, որի նստավայրն Ալբա Յուլիա քաղաքն էր, ինքնակոչ կերպով և առանց ոչ ոքի հանձնարարության, շարունակ խառնվել է հայերի եկեղեցական ներքին գործերին։*

Լատին եպիսկոպոսը իբր կարծել է, թե Վրդարյան եպիսկոպոսը քանի որ իր ժամանակին իրավունք է ունեցել կառավարելու ամբողջ Տրանսիլվանիայի նաև ոչ հայ կաթոլիկ թեմը, ապա ինքը ևս այժմ իրավասություն ունի Տրանսիլվանիայի հայոց անհովիվ թեմը ղեկավարելու, մինչև Հռոմի կողմից հայերի համար նոր հովվի նշանակումը։ Սակայն հանուն ճշմարտության պետք է նշել, որ Վրդարյանը լատին եպիսկոպոսի կողմից իրավասություն էր ստացել նրան հաջորդելու, քանի որ լատին առաջնորդը վտարվել էր բողոքականներից, այնինչ Մարտոնֆին ոչ ոքից չէր ստացել հանձնարարություն հայ թեմը ղեկավարելու համար։ Մյուս կողմից, Վրդարյանը հնարավորություն է ունեցել խոսելու կաթոլիկ հավատացյալների լեզվով, քանի որ նա տիրապետում էր հայերենից բացի նաև լատիներենին, հունգարերենին և գերմաներենին և ծանոթ էր նաև լատին եկեղեցու ծիսակա-

---

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից, 1965 թվականի № Ա-ից և 1966 թվականի № Բ-ից, Գ-ից և Դ-ից։

[173] Հ. Գ. Գովրիկյան, «Դրանսիլվանիոյ հայոց մեր-յապոյիսը», էջ 88։

տարությանը, հակառակ սրան՝ Մարտոնֆին ոչ հայերեն գիտեր և ոչ էլ հայ ծեսին էր ծանոթ[174]։

Նշված 1733 թվականից առաջ, Տրանսիլվանիայի հայերի լատին եպիսկոպոսից կախման մեջ գտնվելու օգտին են խոսում նաև հետևյալ անառարկելի փաստերը։ Կարևոր է այն, որ Վենետիկից, դեռևս 1720 թվականին Գեղյա ուղևորվող Հովնան եպիսկոպոսը, իր հետ նաև հատուկ գրություններ էր տանում, ուղղված Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսին, որն ընդունելով Հովնանին, իրեն փոխանորդ կարգեց հայկական եկեղեցիների վրա և նույն ժամանակ նրան հրամայեց դրոշմի խորհուրդը կատարել միրոնությունից հետո և հռոմեական ձևով կառավարել նրանց[175]։ Դարձյալ նույն Հովնան եպիսկոպոսը 1721 թվականին Մխիթար աբբահոր գրած իր նամակում հայտնում էր, որ Հռոմի սուրբ ժողովը Տրանսիլվանիայի եպիսկոպոսին գրել էր այն մասին, որ «Ընդէ՞ր թոյլ տաս որ Տէր Մինասն խառնակէ զպահն հայոց։ ըստ սովորութեան եկեղեցւոյն իւրեանց զոր ունին, որովհետև են միացեալք հաւատով ընդ մեզ»։ Լատին եպիսկոպոսը, ժողով գումարելով Տրանսիլվանիայի չորս հայկական եկեղեցիների մեծերի ներկայությամբ, դատափետելով Տեր Մինասին, հետ վերցրեց նրանից այցարարի և տեղապահության դիրը և հեռացրեց նրան իր սուսշտոնից[176]։

Այս հարցի շուրջ կարևոր է նաև Բուխարեստի պետական արխիվում պահվող անտիպ մի փաստաթղթի սփռած լույսը։ Այն 1726 թվականին Կարոլոս Զ կայսրի կողմից Գեղյա հայաքաղաքին տրված հրամանագրի հայերեն թարգմանությունն է, որից մի անգամ ևս երևում է, որ այդ թվականից հիշյալ քաղաքի հայ եկեղեցին ենթարկվում էր Տրանսիլվանիայի եպիսկոպոսի իրավասությանը։ Հրամանագրի ժԳ հոդվածում ասված էր հետևյալը. «Կարենայ այս հայոց աղգը քահանայ իրեն ունենալու ի մէջ այսմիկ քաղաքին, ի ներքոյ Արտէալի եպիսկոպոսին ճնազանդութեանը (ընդգծումը մերն է— Ս. Ք.)»[177]։

Այսպիսով, վերոհիշյալ փաստերի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Գովրիկյանի կողմից նշված թվականից դեռ 14 տարի առաջ, Տրանսիլվանիայի հայերը արդեն իսկ գտնվում էին լատին եպիսկոպոսից կախման մեջ։ Մենք կարծում ենք, որ Գովրիկյանի հիշատակած 1733 թվականը վերաբերում է ոչ թե Տրանսիլվանիայի ամբողջ հայության կախվածությանը, որոնց վրա, ինչպես տեսանք, դեռ 1716 թվականին, Վրդաբյանի մահից անմիջապես հետո, անկոչ կերպով իր թաթը տարածել էր Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը, այլ միայն Եղիսաբեթուպոլսի հայությանը, քանի որ 1731 թվականին է, որ նրանք բռնի կաթոլիկացվեցին և դարձյալ 1733 թվականին Կարոլոս Զ կայսրի կողմից հիշյալ քաղաքին տրված հրամարտակում է, որ հայերին հրամայվում է ենթարկվել հիշյալ եպիսկոպոսին։ Փաստերը անվիճելի կերպով ապացուցում են, որ 1716 թվականից սկսյալ Տրանսիլվանիայի հայոց թեմի փաստական ղեկավարը դարձել էր լատին հունգարացի եպիսկոպոսը, իսկ Հռոմի Պրոպագանդան, ինչպես նաև Ավստրիայի կայսրը, որպես այդպիսին են նկատի ունեցել նրան։

Հետագա էջերում ցանկանում ենք կանգ առնել Տրանսիլվանիայի հայության կողմից ավելի քան երկու հարյուր տարի շարունակ իրենց ազգային եպիսկոպոսությունը վերականգնելու համար մղված հերոսական պայքարի հիշատակության արժանի առանձին դրվագների վրա, որոնք դեռևս անհրաժեշտ չափով ուշադրության չեն արժանացել ուսումնասիրողների կողմից։

Հայերի պայքարը իրենց իրավունքների վերականգնման համար դեռ շատ վաղուց է սկսվում։ Այդ մասին Գովրիկյանը գրում է, որ «Թեպետ եւսած են երբեմն երևելի մարդիկ, որ նորոգել ուզած են հայ եպիսկոպոսությունը Դրանսիլվանիո մեջ, բայց մեկ կողմանե ներքին անմիաբանությունը, մյուս կողմանե դերագույն իշխանությանց չեղոք դիրք բռնելը, բայց մանավանդ Հունգարիո կողմանե գրով, խոսքով ու գործով ցուցուցած սաստիկ հակառակությունն ու ընդդիմադրությունն[178] այն վիճակին հասցուցած են Դրանսիլվանիո Հայոց Եկեղեցվույն իրերն, որ կղերը բավական ժամանակ այս բանիս դեմ, հուսահատ պատերազմ մը մղելեն ետև՝ տեսնելով, թե ամեն բան անօգուտ է, ստիպ-

174 Chr. Lukacsi, „Historia„, էջ 74, 133: Szongott Kristóf, Szamosújvár, szab. kir. város, Monográfiája, 1700—1900, Szamosújvári, 1901, I. էջ 288—299.

175 Հ. Գ. Տայան, «Մայր դիան», էջ 22։

176 Նույն տեղում, էջ 24։

177 Հիշյալ հրամանագրի արտագրությունը մեզ տրամադրեց Բուխարեստից պր. Տ. Մելքոնյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։

178 Հայ ազգային եպիսկոպոսության վերականգնման դեմ ցույց տրված ընդդիմությունը պետք է նշել, որ հանդես էր եկել Ավստրո-Հունգարիայի իշխող շրջանների մոտ։

վեցավ լռել և լատին եպիսկոպոսին վերին իրավասությունն ընդունիլ»[179]։

Հայերի ձախողանքին նախ և առաջ պատճառ եղավ նրանց ներքին անմիաբանությունը։

Վրզարյան եպիսկոպոսի մահից անմիջապես հետո, 1715 թվականի մայիսի 20-ին, Գյորգեո Սենտ Իմրեում գումարված Տրանսիլվանիայի հայ մեծամեծների ընդհանուր ժողովը եպիսկոպոսի ընտրության հարցում չկարողացավ որևէ դրական որոշման հասնել։

Վրզարյան եպիսկոպոսը մահանալով 1715 թվականին, իր աթոռը կտակել էր կամենիցացի հայտնի մատենագիր Ստեփանոս Ստեփանյան Ռոշքային, սակայն հայերի անմիաբանության հետևանքով, Ստեփանոս Ռոշքայի թեկնածության շուրջ հնարավոր չեղավ համաձայնություն գոյացնել և այս վերջինս մնաց միայն իբրև Տրանսիլվանիայի հայերի այցարար։

1719 թվականին Մխիթար աբբահայրը Տրանսիլվանիա է ուղարկում իբրև այցարար Կարնեցի խաչատուր վարդապետին, որի մասին սակայն ժողովրդի մեջ շփոթ կարծիքներ ծագեցին, ըստ որի ոմանք կարծեցին, թե նա ցանկություն ունի դառնալու Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոս։ Մխիթար աբբայի կենսագրության մեջ այս մասին գրված է. «Հավատալով հայազգի դրանսիլվանիացի Մինաս քահանայի մը խոսքերուն, ժողովրդյան մեկ մասը մտածեց ուրիշ վարդապետ մը դնել իրենց առաջնորդ, վախնալով, թե միաբանությանս ձեռքը կանցնի մշտնջենապես այն պաշտոնը։ Մխիթար, տեսնելով ժողովրդյան տարաձայնությունը, խաչատուր վարդապետին կանչեց Վենետիկ[180]։ Հիշյալ Մինաս քահանան, պետք է կարծել, որ Նղիսարեթուպոլսում գործող և եպիսկոպոսության իբրև թեկնածու իրեն համարող Մինաս Խնկանոսյանն էր և ոչ Գեղայի Մինաս Թորոսյանը, քանի որ վերջինիս մասին Մխիթարյան գործիչների գրած նամակներում նպաստավոր տողեր ենք գտնում։ Ինչ վերաբերում է Վենետիկի Մխիթարյան միաբանության կողմից Տրանսիլվանիայի թեմի առաջնորդության մշտնջենական պաշտոնը իրեն սեփականացնելուն, ապա փաստերը հերքում են այդ։ Սակայն եթե հետագա դեպքերի դասավորմամբ իսկապես Վենետիկի իրավասության տակ անցած լիներ Տրանսիլվանիայի հայոց թեմը, Մխիթարյան ավանդապահ հայրերը ուծացման ամենի ալիքներից կկարողանային փրկել պատվական մի գաղութի շառավիղներին։

Դրականում հայերի կախումը լատին եպիսկոպոսից ժամանակավոր պետք է լիներ, սակայն այդ «ժամանակավոր» կոչված շրջանը տևեց ավելի քան երկու հարյուր տարի։

Ըստ Գովրիկյանի, հայերը նույնիսկ որոշել էին համակերպվել նրան, որին կուզարկի Հռոմը, սակայն պապը այնպես էլ ոչ ոքի չուղարկեց։

Թեև պետք է նշել, որ պապը Վրզարյանի մահից հետո հատկապես շատ էր մտահոգված Տրանսիլվանիայի հայերի ճակատագրով, ինքնին հասկանալի է, որ նրա մտահոգության առարկան էին դեռևս կաթոլիկության չհարած հայերը։ Ահա թե ինչո՞ւ «առաքելական դահը,— ինչպես գրում է Ըսպկարյանը,— ժամանակ ժամանակ այցելուներ կխավրեր, որոնք ուղղափառ հավատոն անարատ պահպանության վրա կհսկեին»[181]։ Ահա այդ այցելուների թվում նշանավոր էր, ինչպես ասացինք, Լեհաստանից եկած Ստեփանոս Ռոշքա հայ մատենագիրը։ Սակայն սրանից հետո Լվովի հայ կաթոլիկ արքեպիսկոպոսության իրավասությունը Տրանսիլվանիայի հայերի նկատմամբ հետզհետե թուլանում և աննշան է դառնում, եթե չհաշվենք երբեմն Տրանսիլվանիայից հայկական ձևով ձեռնադրվելու համար Լվով գնացող հայ հոգևորականներին, թեև պետք է ասել, որ ձեռնադրվելու նպատակով հաճախ գնում էին նաև Հռոմ, Վենետիկ ու Վիեննա։ Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը, որ մինչ այդ էլ, ինչպես նշվեց, կարևոր իրավասություններ ուներ տեղի հայերի նկատմամբ, այժմ Կարոլոս Զ կայսրը իր 1726 և 1733 թվականների հրովարտակներով երկու հայաքաղաքներին և հետևաբար Տրանսիլվանիայի բոլոր հայերին պաշտոնապես գնում էր նույն եպիսկոպոսի գերիշխանության տակ, որպեսզի նա մի կողմից մոտիկից հսկի նրանց վրա և հոգ տանի հայերի կաթոլիկությունը անխախտ պահելու, իսկ մյուս կողմից էլ հայազավան հայերին իրենց ձևով արարողություն կատարելը և կամ երկրում հաստատվելը թույլ չտալու համար։ Եվ այսպես, 1726 թվականին Գեղայի հայերին տրված հրովարտակի ԺԴ հոդվածում, բացի Արտեալի եպիսկոպոսից հայերին կախման մեջ դնելուց, խստությամբ նախատեսվում էր

[179] Հ. Գ. Գովրիկյան, «Դրանսիլուանիոյ հայոց մեր-ապոլիսը», էջ 98։

[180] Հ. Հ. Թորոսյան, «Վարք Մխիթարայ», Վենետիկ, 1901 թ., էջ 345, 356։

[181] Հ. Վ. Ըսպկարյան, «Եկեղեցական պատմութիւն», էջ 384։

նան, որ «Արևելեան հայքն ի չորրորդում հասարակ Քաղկեդոնի ժողովոյ դատապարտեցեալքն հերետիկոսացն, այսինքն Թէոդորոսի և այլոցն հեանողքն, ամենեին չի թողուն ներս մտնելու և դիւրանք բառնալու, զսուտ եթէ իրենցմանէ մեկիր կամ մեկայր միայն պարզկրնութեան պատճառաւն երկրին մէջ անցնելով և վասն այնորիկ քիչ ժամանակ այնտեղն ուշանալու պատահէր, այնքան ևս առաւել զարարողութիւն հաւատոյ, ոչ յայտնապէս և ոչ դաղտնի կամ ծածուկ իրենց թողուի»[182].

Եղիսաբէթուպոլսի հայերի բռնի կաթոլիկացումից երկու տարի հետո, Կարոլոս Զ կայսրը 1733 թվականին նույն հայաքաղաքի հայերին տված իր հրամանագրով է՛լ ավելի էր ուժեղացնում հայերի կախվածությունը լատին եպիսկոպոսից։ Հրամանագրի 4-րդ հոդվածում ասված էր. «Եվ վասնզի այս հայերը Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսնե կախում ունին ու պիտի ունենան՝ անոր համար եպիսկոպոսական իշխանության պարտականությունն ըլլա. որ հսկի, թե հռոմեական ուղղափառ հայ արարողությունն ըստ պատշաճի պահպանվի. և արևելյան հայ հերձվածողները հանվանե եվտիքեսի, Դիոսկորոսի և ուրիշներու դատապարտության արժանի վարդապետությունները այս ազգեն հեռացվին։ Բաց ասկի, այս եպիսկոպոսը հոգ տանի, որ նվազ ծանոթ չմիացյալ հայ աստվածային պաշտամունք մեր Տրանսիլվանիո իշխանության մեջ կատարվելու կամ վերոհիշյալ մոլորության հետևողները՝ երկրին մեջ մտնելու թող չտրվին և իրենց հոն բնակիլը չներվի...»[183] (ընդգծումներն մերն են—Ս. Ք.)։

Մի քանի տարի անց հայոց ազգային եպիսկոպոսության հարցը կրկին է արծարծվում։ Գեոլացի Մինաս վարդապետ Թորոսյան-Զվածեղյանը փորձում է դառնալ Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոս։ Մինասը կայսրի խոստովանահոր միջոցով ցանկանում էր հասնել իր նպատակին։ Սակայն 1736 թվականի սեպտեմբերի 23-ին Եղիսաբեթուպոլսի հայ մեծամեծներից 24 հոգի, ժողովրդապետ Մինաս վարդապետ Խնկանոսյանի գլխավորությամբ, հատուկ դրություն գրեցին գեոլացի Մինաս Թորոսյանի թեկնածության դեմ։ Մի տարի անց, երբ կրկին հանդես եկավ Մինաս Թորոսյանի թեկնածության հարցը 1737 թվականի հունիսի 18-ի դրությամբ, Եղիսաբեթուպոլսի մեծամեծները դարձյալ Խնկանոսյանի որդի խավորությամբ դիմելով կայսրի խոստովանահորը, գրում էին, որ ինչպես իրենց նախորդ նամակով, այս անգամ ևս հայտնում են, թե լինի թե թողնի Տեր Մինասն եպիսկոպոս լինել, քանի որ նա իրենց ամենեին պետք չէ[184]։

Մխիթար Աբբահոր ավագ աշակերտներից տրանսիլվանացի Հ. Թ. Հովհաննիսյանը (իմա՛ Մեղրաշցի) Վիեննայից 1737 թվականի հունիսի 15-ին գրած իր նամակում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Խնկանոսյանի մասին, որը մեծ կաշառքով փորձում էր տիրանալ Տրանսիլվանիայի հայոց առաջնորդական աթոռին, իսկ մյուս կողմից, Մինաս Թորոսյանն էլ սպասում էր նույն Վիեննայում կայսրի վերադարձին, որպեսզի նրանից ստանա եպիսկոպոսական թագը։ Ահա մի հատված հայոց առաջնորդության հարցը լուսաբանող այդ կարևոր փաստաթղթից. «Մինչ եկն (պաշտպանվելու Տէր Մինասն) ի Վիեննա, պարծէր և ասէր. թէ աղաչայ Պետրոսն 240 000 դալարայ դնէ, որպէսզի ինքն լինիցի (այսինքն Տէր Մինասն Խնկանոսեան) եպիսկոպոս ի վերայ Պաշֆալովին, զի ինքեանք ոչ կամին ընդունիլ զգերապատուելի Տէր Մինասն կեղուացին եպիսկոպոս»... ... իրակութիւնք գերապատուելի Տէր Մինասին արդէն իսկ կատարեցան, միայն սպասէ տիրելոյն, և գալստեան թագաւորին ի Լուքսէմպուրքէն, որպէսզի գնացեալ առաջի նորա՝ ընկալցի ի ձեռանէ նորա ի պարանոց իւր զիւրն եպիսկոպոսական, և զթագն հայրապետական, զոր տացէ Աստուած մեր...»[185]։

Այս անգամ, ինչպես տեսանք, Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոսի հարցը վիժվեց Խնկանոսյանի կողմից Վիեննայում կատարած իր բանակցությունների միջոցով։ Սակայն այս հարցի ձախողման պատճառը պետք է կարծել, որ միայն անձնական չէր, այլև արդյունք էր երկու դորեղ հայաքաղաքների՝ Գեոլայի և Եղիսաբեթուպոլսի միջև սկսած կատաղի մրցակցության։ Ի դեպ, պետք է նշել, որ գեոլացի Մինաս Թորոսյանը եպիսկոպոս դառնալու դեպքում, դարձյալ Գեոլան էր դառնալու հայ գաղութի ստուգնորդանիստ կենտրոնը, ուրեմն հնարավոր էր, որ դրանով Եղիսաբեթուպոլիսը կորցներ իր մինչ այդ ունեցած իշխող դիրքը Տրանսիլվանիայի մնացած հայաբնակ վայրերի

[182] Բուխարեստի պետական արխիվի վավերագիր, ընդօրինակություն Տ. Մելքոնյանի։

[183] Հ. Գ. Գավրիկյան, «Հայք յԵղիսաբեթուպոլիս», Ա, էջ 77—78։

[184] Նույն տեղում, էջ 223—229։

[185] Հ. Ղ. Ցալան, «Մայր դիվան...», էջ 69։

վրա, դրան իբր պատասխան, Եղիսաբեթուպոլիսն իր հերթին առաջ էր քաշում իր թեկնածուին և եպիսկոպոսական Աթոռը իր մոտ հաստատելու միջոցով ուզում էր ոչ միայն պահպանել իր իշխող դիրքը, այլև մասամբ ստվերի տակ թողնել օտարների կողմից արդեն իսկ հայոց մետրապոլիսը համարվող Գեղին։

Անցնում է միայն երեք տարի և այս ձախողումից հետո, 1740 թվականին, կրկին օրակարգի հարց է դառնում հայ եպիսկոպոսի ընտրության խնդիրը։ Դարձյալ Տրանսիլվանիայում գործող Մխիթարյան Հ. Թ. Հովհաննեսյանը 1740 թվականի մայիսի 1-ին Կլուժից Մխիթար աբբային իր դրած նամակում տեղեկացնում է, որ գեռ նոր պապի ընտրության մասին հայտնի չէ, և որ «Մինչև ցայժմ ոչ եդին զնոր մաճառ եպիսկոպոս ի վերայ Դրանսիլվանիոյ։ Նմանապէս հայքն ասէին, թէ յայսմիկ ամսոջ հաւաքեսցին ամենայն քահանայք հայոց, և ամենայն գատաւորք նոցա, և իշխանք ի Կեռլայ առ ի առնել զժողով վասն իրաց իւրեանց և վասն ընտրութեան հայոց եպիսկոպոսին»[186]։ Հավանաբար հայերի կողմից այդպիսի մի քայլի դիմելու ամենահարմար ժամանակը այդ է համարվել, քանի որ տվյալ շրջանում ոչ Հռոմի պապն էր ընտրված և ոչ էլ Տրանսիլվանիայի նոր եպիսկոպոսն էր բազմել Աթոռին. հետևաբար հայերը իրենց անկախ էին զգացել։ Դժբախտաբար մենք ոչինչ չգիտենք այդ ժողովի կայանալու և նրա որոշումների մասին. սակայն մի բան պարզ է, որ հայերը որևէ դրական արդյունքի չեն կարողացել հասնել, քանի որ սրանից հետո էլ անխափան շարունակվել է լատին եպիսկոպոսի իշխանությունը նրանց նկատմամբ։ Մենք ոչինչ չգիտենք 1740 թվականին Գեղայում գումարված ժողովի արդյունքների և եպիսկոպոսական թեկնածուի անձնավորության մասին, սակայն պետք է կարծել, որ նույն Մինաս Թորոսյանն է դարձյալ առաջադրվել գեղացիների կողմից այդ պաշտոնին, և կրկին վերջացած պետք է լինի, ինչպես ասացինք, անհաջողությամբ։ Մեր ասածի օգտին է խոսում հատկապես այն փաստը, որ հիշյալ գումարվելիք ժողովից միայն մեկ տարի անց՝ 1741 թվականին Մինաս Թորոսյանը դարձյալ հեռացվում է իր պաշտոնից և նույնիսկ արտաքսվում քաղաքից։ Հ. Թ. Հովհաննեսյանը Մխիթար աբբահոր Բաշբալովից (իմա՝ Եղիսաբեթուպոլիս) 1741 թվականի հոկտեմբերի 25-ին գրած նամակում այդ մասին ցավով տեղեկացնում էր. «...Զկեռլայի Տէր Մինաս աւագերէցն իջուցեալ են ի պաշտօնէ, և արտաքսեալ ի քաղաքէն, որ ի բսան վեց ամաց հետէ եղեալ էր աւագերէց անդ, և զայնքան բարերարութիւնս արարեալ էր քաղաքին։ Եւ այսոցիկ բնաւից պատճառն է լքահանայ մի Տէր Նիկոլ անուամբ...»[187]։ Ինչպես անցյալում, այնպես էլ այժմ Մինաս Թորոսյանի պաշտոնագրկման և արտաքսման մեջ առաջնային դեր պետք է որ ունեցած լիներ անկասկած Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը, որը ելնելով իր շահերից, միշտ էլ դեմ է եղել հայ ազգային եպիսկոպոսության վերականգնման գործին և իր ամբողջ կարելին արել է միշտ էլ վիժեցնելու հայերի ամեն տեսակի փորձերը։ Բնիկ տրանսիլվանացի հայ նշանավոր աշխարհագրագետ և վենետիկի Մխիթարյան Միաբանության Աբբահայր Հ. Ստեփան Գյուվեր Ագոնցը նշում էր լատին եպիսկոպոսի հսկա եկամուտների մասին, գրելով. «Տարեկան հասք եպիսկոպոսին անցանի զ30 հազարու, զոր ոմանք զ40 հազար ֆիորին հասուցանեն»[188]։

Սակայն այս բոլորով հանդերձ, հայերը չեն թուլացրել պայքարը։ Ի վերջո 1758 թվականին Մարիա Թերեզա կայսրուհին դարձյալ Մինաս Թորոսյանին (Զվածեղյան) նշանակում է Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոսության թեկնածու, սակայն այս անգամ էլ այն մերժվեց Եղիսաբեթուպոլսի խորհրդական Թեոդորոս Դանիելյան-Խնկանոսյանի կողմից, որը դարձյալ ցանկանում էր իր եղբոր՝ Մինաս Խնկանոսյանին տեսնել բազմած եպիսկոպոսական աթոռին։ Այդ անմիաբանության ժամանակ է, որ Ալբա Յուլիայից եպիսկոպոսի կողմից մի քանի կանոնիկոսներ եկան և որոշեցին հարցը քննել Գեղայի Ս. Սողոմոն հայոց տաճարում, սակայն հայ կանայք, ինչպես մի տեղ ասացինք, կարծելով, որ վերջիններս եկել են վերջ տալու նաև հայ ծեսին, քարկոծելու սպառնալիքով եկեղեցուց ներս չթողեցին նրանց։ Եվ այսպես դարձյալ ամեն ինչ վերջացավ ապարդյուն։ Պատմաբան Խ. Սոն-

---

186 Հ. Ղ. Տայան, «Մայր դիվան...», էջ 299—կԹ։

187 Նույն տեղում, էջ 98—ռն։

188 «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն երկրորդ, Եւրոպա», հատոր Դ, վենետիկ, 1862 թ., էջ 323։

Թե ինչքան պատկառելի էր տվյալ ժամանակաշրջանի համար այդ գումարը, կարելի է հետևցնել այն փաստից, որ Մարիա Թերեզա կայսրուհին պրուսիական պատերազմի հետևանքով Եղիսաբեթուպոլսի հայերից խնդրել էր պարտքով տալու միայն 25 000 ֆիորին, որը հավասար էր 5000 ոսկու (տե՛ս «Հայք Եղիսաբեթուպոլիս...», Ա, էջ 304—305)։

կոտյանի կարծիքով, եթե հիշյալ Թեոդորոսը չխանգարեր, Գեոլայի հայ եպիսկոպոսությունը կանոնն կլիներ երկար ժամանակ։ Չնայած Մինաս Թորոսյանի անմեղությունը հետո ի հայտ եկավ բոլորի առաջ, սակայն այլևս նա եպիսկոպոս չօծվեց, այլ մնաց իբրև առաքելական տեղապահ և մինչև իր մահը վայելեց Մարիա Թերեզայի կողմից հայ եպիսկոպոսական սեղանի համար տրված 12 000 ֆլորինի դրամագլխի տոկոսները[189]։

Այսպիսով Տրանսիլվանիայի հայերի կախվածությունը շարունակվեց զեռևս մնալ լատին եպիսկոպոսից։ Մարիա Թերեզա կայսրուհին, կրկնելով իր նախորդներին, 1758 թվականի նոյեմբերի 28-ին հայերին տված հրովարտակում գրեց, որ «Հայերը Դրանսիլվանիո հռոմեական ուղղափառ լատինածես եկեղեցական իշխանությանն կկախվին ու պիտի կախվին...»[190]։

Հայերի համար շատ դժվար էր հաշտվել իրենց ինքնուրույն եպիսկոպոսության իրավունքից զրկվելու և հավիտենապես լատին եպիսկոպոսի գերիշխանության տակ մնալու ծանր պարտավորության հետ, քանի որ, ինչպես նշվեց, Վրզարյանը իր ժամանակին վարել էր նույնիսկ Տրանսիլվանիայի ոչ հայ կաթոլիկների եպիսկոպոսության պաշտոնը։

Ուստի հայերը, առանց հուսահատվելու, համառորեն մաքառելով իրենց սպառնացող ձուլման վտանգի դեմ, պայքարում են իրենց երբեմնի ունեցած իրավունքի վերականգնման համար։ Մինաս Թորոսյանի մահից հետո, Գեոլայի հայերը, ինչպես երևում է 1765 թվականի փետրվարի 8-ի քաղաքային ժողովի արձանագրությունից, մեծամեծների բազմաթիվ ստորագրություններով դիմեցին Հռոմ, Տրանսիլվանիայի հայոց համար նոր եպիսկոպոս նշանակելու խնդրանքով։ Սակայն դարձյալ հայերի փորձերը անցան ապարդյուն։

Վերոհիշյալ 1765 թվականին հայերի կատարած դիմումից հետո փաստաթղթերի չգոյության հետևանքով, մեզ ոչինչ հայտնի չէ, թե հայերը 85 տարի շարունակ, այսինքն մինչև 1848 թվականի հեղափոխությունը ի՞նչպիսի փորձեր կատարեցին իրենց իրավունքները վերականգնելու համար։ Սակայն, անկասկած, Տրանսիլվանիայի հայերը նույն ժամանակաշրջանում ևս պետք է, որ շարունակած լինեն իրենց գերմարդկային ճիգերը գործադրել ազգային եպիսկոպոսության վերականգնման համար։ Անշուշտ հետևությունը նորահայտ վավերագրերի միջոցով մեզ պարզ կարող է դառնալ նաև այս շրջանին վերաբերող հայերի կատարած ապարդյուն փորձերի մասին։ Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը հետզհետե տարածելով իր ազդեցությունը հայերի վրա, սկսել էր խառնվել նրանց գրեթե բոլոր գործերին։ Այս առթիվ կարծում ենք, որ ավելորդ չի լինի այստեղ մեջ բերել Տրանսիլվանիայի հայերի ներքին գործերում լատին եպիսկոպոսի կողմից կատարված մի շարք միջամտումների վերաբերյալ մեկ քանի փաստեր։

Մի շարք տեղեկություններից երևում է, որ հայ եկեղեցիների բոլոր պաշտոնյաները, սկսած քահանաներից մինչև անդամ տիրացուները և ժամկոչները հայերի կողմից ընտրվելուց հետո պետք է, որ լատին եպիսկոպոսը հաստատեր[191]։ Եպիսկոպոսը իրավունք ուներ ընտրված երկու թեկնածու քահանաներից իր ցանկացածին հաստատել։ Այսպես, օրինակ, 1791 թվականի հոկտեմբերի 25-ին եպիսկոպոսը Եղիսաբեթուպոլսի հոգևոր հովիվ և վիճակի ավագերեց անվանեց երկրորդ տեղը ընտրված Անտոն Բագրուպանյանին, փոխանակ հաստատելու Մարկեզոս Ջիդիին, որին շատերն է, որ ուզում էին։ Սակայն դժգոհները ամենևին չուզեցին Բագրուպանյանին ճանաչել, ուստի հարկ եղավ, որ եպիսկոպոսը բռնության դիմի։ Միջամտեցին գավառապետը և գավառի գլխավոր գատավորը։ Այսպես երկար ընդդիմությունից հետո հասարակությունը ընդունեց ընտրված Բագրուպանյանին, որին քիչ անց եպիսկոպոսը պատվո կանոնիկոս անվանեց[192]։

Մենք տեսանք նաև լատին եպիսկոպոսի դերը 1731 թվականին աքսորի սպառնալիքով հայերին բռնի կաթոլիկացնելու առթիվ ժողով գումարելու և մի այլ առիթով էլ նոր տոմարը ընդունել տալու կապակցությամբ։

Մի այլ փաստ վկայում է այն մասին, որ Հայոց եկեղեցական բոլոր եկամուտներից սկսած մինչև ամենահետին եկեղեցական սպասն ու դրեստը հայտնի են եղել լատին եպիսկոպոսին։ 1740 թվականին լատին եպիսկոպոսի փոխանորդ Կոստալը Եղիսաբեթուպոլիս է գնում, որպեսզի վերին իշխանության ծանուցի Հայ Եկեղեցու վիճակի մասին։ Նրա կազմած ցուցակներում գրանցված են հոգևոր պաշտոնյաների եկամուտները, դանդաղ պաշտամունքների և ծիսական արարողությունների ժամանակ նրանց ստ-

[189] Հ. Գ. Գովրիկյան, «Դրանսիլվանիոյ հայոց մեծրապոլիսք», էջ 96—98։

[190] Հ. Գ. Գովրիկյան, «Հայք յնդիսաբեթուպոլիս», Ա, էջ 209։

[191] Նույն տեղում, Գ, էջ 402—404։

[192] Նույն տեղում, էջ 431—432։

նալիք եկամտի որոշյալ սակերը և այլն։ Ցուցակներից մեկում տեղ են գրավել նաև ռանկեցրած արծաթյա սպասները, ոսկեթել բանված եկեղեցական զգեստները և այլն։ Այս բոլորի թվումը ինչ խոսք որ ուշագրավ է և մեր տեղեկությունները կարող է հարստացնել ժամանակին օգտագործված սպասների և զգեստների մասին։ Սակայն այստեղ դժվար չէ նշմարել նաև այն, որ ցուցակում ոչինչ չի մոռացվել, և անց են կացվել նույնիսկ հին ուրարները և անգամ պատառոտված շուրջառները[193]։ Այս ևս խոսում է լատին եպիսկոպոսից հայերի ուժեղ կախվածության մասին։

Եղած փաստերից երևում է, որ հայերի մոտ հատկապես կաթոլիկական քարոզչությունը ուժեղացնելու գործում լատին եպիսկոպոսը զեկավար դեր է խաղացել։ 1768 թվականի ռուս-թուրքական պատերազմի պատճառով, երբ Մոլդովայից բազմաթիվ հայեր անցան Սերվիզ, Բայտայի եպիսկոպոսը Հովհաննես Գրեյունյանին հանձնարարել է, որ «Եղիսաբեթուպոլսո եկեղեցականաց ձեռնտվությամբն անոնց հոգևոր պիտույքները հոգա»[194]։ Նույնպես 1783 թվականի մայիսի 7-ի իր գրությամբ, Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը, դիմելով Գեռլա հայաքաղաքի հոգևոր հովիվին և հոգևորականությանը, նրանց ուշադրությունն է հրավիրում Սուչավայի հայերի վրա, որպեսզի միջոցներ ձեռնարկեն այդ հայերին ևս կաթոլիկացնելու համար[195]։ Անշուշտ այս հորդորների հետևանքով է, որ, ինչպես տեսանք, Սուչավա ուղարկվեցին կաթոլիկ հոգևորականներ, որոնց ազդանուններից երևում է, թե նրանք ծագումով պետք է որ Տրանսիլվանիայի հայերից լինեին։

Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը խառնվում և շարունակ միջամտում էր նաև հայկական կենտրոններում գործող դպրոցների գործերին։ Բազմավաստակ պատմաբան Ա. Ալպոյաճյանը ճիշտ կերպով նկատում էր, որ լատին եպիսկոպոսը Մխիթարյաններին դպրոցներ բացելու իրավունք տալու հետ միասին, նա «իր եկեղեցվույն թաքը կերկարեր Մխիթարյան դպրոցին վրա պայմանագրելով, որ «ձեռք բանալի դպրոցք և ուսումնարանք այն գիւղաքաղաքի կարգեալ Գահերիցուն, կամ ժողովրդապետի տեղույն ենթարկեսցին միշտ և ամենեին յամենայնի վերատեսչութեանն, այցարարութեանն և ուղղաւորութեանն»։ Մխիթարյանները, չբավականանալով եպիսկոպոսի արտոնագրով, դիմում են Մարիա Թերեզա կայսրուհուն՝ նրան ևս հաճատատել տալու համար իրենց վանատունը և հարկերից ազատ լինելու համար։ Ալպոյաճյանը, սակայն, նկատում է, որ ինչպես երևում է, «չէ հաջողած այս ծրագիրը։ վասնզի լատին կղերին ձգտումներուն համապատասխան չէր ան...»։ «Այս դպրոցները կկորսնցնեին իրենց հայեցի նկարագիրը, որքան կխորանար գաղութին մեջ կաթոլիկությունը և լատին կղերը ձեռք կառնե դաստիարակության գործը կամ անոր կմիջամտե իր ապազգայնացնող ոգիովը»[196]։

Ահա այս էր Տրանսիլվանիայի հայերի դրությունը ԺԸ դարի վերջում։ Հայերի մղած այս երկարատև ու համառ պայքարը իրենց ազգային ինքնուրույն եպիսկոպոսությունը վերականգնելու համար, հիմնականում արդյունք էր այն բանի, որ հայերը Տրանսիլվանիայում չճանաչվեցին իբրև հայազգիներ և ընդունված երեք մեծ ազգությունների նման ուրույն ազգություն կազմելու իրավունք չունեցան։ Ազգերին բռնի ձուլող կայսերական այդ խառնարանում, հակառակ հայերի դիմումներին, կայսրը ի վերջո 1781 թվականին մերժեց նրանց պահանջը, պատասխանելով, որ «...չուզէ օր ալ շատ Արտեալին մէջ նաձիոնալիզմուշ գտնի»[197], այսինքն, որ ինքը չի ցանկանում Տրանսիլվանիայում շատ ավելի ազգություններ գտնվեն։ Ահա թե ինչո՞ւ հայերին իրենց ազգությունը և ամբողջականությունը այս կամ այն կերպ պահպանելու համար մնացել էր միայն իրենց նախկին հայածես եպիսկոպոսության վերականգնումը։ Սակայն, ինչպես տեսանք, այս ուղղությամբ երկար տարիների նրանց մղած պայքարը ապարդյուն էր անցել, իսկ երկրում, հատկապես հայկական կենտրոններից դուրս ցրված հայերի մի ստվար մասը, դարձել էր լատինածես և դատապարտվել էր ձուլման։ Ահա թե ինչո՞ւ ազգային եպիսկոպոսության վերականգնման խնդիրը մշտապես մնացող հարց էր դարձել Տրանսիլվանիայի հայերի համար և ժամանակ առ ժամանակ նրանք ոգի ի բռին մաքառում էին իրենց իրավունքների վերականգնման համար։

(Շարունակելի)

---

193 Հ. Գ. Գավրիկյան, «Հայոց յեղիսաբեթուպոլիս», Բ, էջ 30 և այլն։

194 Նույն տեղում, Գ, էջ 430։

195 Chr. Lucaksi, նշված աշխատությունը, էջ 129։

196 Ա. Ալպոյանյան, «Պատմություն հայ դպրոցի, Ա, Կահիրե, 1946, էջ 593։ Հմմտ. Հ. Ղ. Տայան, «Մայր դիվան...», էջ 157—158, 183։

197 Հ. Գ. Գավրիկյան, «Հայոց յեղիսաբեթուպոլիս», Բ, էջ 285։

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Աստղագետների միջազգային ժողով Բյուրականում.— Վերջերս Բյուրականի աստղադիտարանում տեղի ունեցավ աստղագետների գիտական ժողով, որավիրված Աստղագետների միջազգային միության կողմից: Ժողովին մասնակցում էին 14 երկրների, այդ թվում ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի և այլ երկրների գիտնականներ:

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը հետևյալը հայտարարեց գիտական այդ կոնֆերանսի արդյունքների մասին.

«Վերջին տարիներս գալակտիկաներում հայտնաբերվեցին բոլորովին նոր երևույթներ, որոնց ուսումնասիրությունը հիմնովին փոխում է մեր պատկերացումը աստղային այդ վիթխարի համակարգությունների մասին: Ժամանակ առ ժամանակ գալակտիկաների կենտրոնական մասերում տեղի են ունենում հսկայական պայթյուններ, որոնք առաջ են բերում անսովոր մեծ քանակությամբ էներգիա, որի հետևանքով փոխվում են գալակտիկաների կառուցվածքը և որակային հատկությունները: Դեռ 10 տարի առաջ Բյուրականի աստղագետները հանգեցին այն եզրակացության, որ գալակտիկաների միջուկներում տեղի են ունենում պայթյունների բուռն գործողություններ: Հետագա տարիների ուսումնասիրությունները հաստատեցին այդ տեսակետը, որով անհրաժեշտ դարձավ նախնական հանրագումարի բերել այդ ուսումնասիրությունների արդյունքները: Աստղագետների միջազգային գիտաժողովը որավիրված էր քննելու այդ արդյունքները: Ժողովն անցավ փոխադարձ գիտական համագործակցության ոգով»:

Պրոֆ. Ֆ. Ցվիկը (ԱՄՆ) ժողովի արդյունքների մասին ասաց հետևյալը.

«Գոյություն ունեն դեռևս անհայտ տիեզերական այրյուրներ, որոնց լուսատվությունը ժամանակ առ ժամանակ հասնում է միլիարդավոր արևների: Այս միտքը տարիներ առաջ հայտնել է ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Հետագայում այդ միտքն իր հաստատումը գտավ աշխարհի, այդ թվում ԱՄՆ-ի գիտնականների հետազոտություններում: Բյուրականի ժողովն անցավ չափազանց կազմակերպված և արդյունավետ»:

Ֆրանսիացի գիտնական, դոկտ. Կուրտեսը ասաց.

«Ես անկեղծորեն ցանկանում եմ նշել ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ հայ աստղաֆիզիկոսների կատարած մեծարժեք աշխատանքները: Գիտական ժողովում երանց բերած տվյալները լույս սփռեցին աստղագիտության և ռադիո-աստղագիտության հրատապ հարցերի շատ կողմերի վրա»:

Բուլղարական մշակույթի տասնօրյակը Հայաստանում.— Մայիսի 24-ից մինչև հունիսի 3-ը Հայաստանում տեղի ունեցավ բուլղարական մշակույթի 10-օրյակը: Ինչպես հայտնի է, նման տասնօրյակ տեղի ունեցավ Բուլղարիայում անցյալ տարվա սեպտեմբերին՝ նվիրված հայկական մշակույթին:

Տասնօրյակի հանդիսավոր բացումը, ինչպես և փակումը տեղի ունեցավ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, մայրաքաղաքի հասարակության լայն խավերի մասնակցությամբ:

Տասն օր շարունակ Երևանի թատրոններում, գործարանային ակումբներում, ինչպես նաև Լենինականում, Կիրովականում, Դիլիջանում, Սևանում, Հրազդանում և այլ վայրերում ելույթներ էին ունենում բուլղարական արվեստի ներկայացուցիչները՝ երգողներ, պարողներ, նվագողներ, ցուցադրելով տաղանդավոր բուլղար ժողովրդի արվեստը: Սոֆիայի օպերային թատրոնի առանձին մենակատարներ մասնակցեցին այդ օրերին Երևանի օպերային թատրոնի առանձին ներկայացումներին, կատարելով գլխավոր դերեր: Հայաստանի նկարիչների տանը բացվել էր բուլղար նկարիչների գործերի ցուցահանդես:

Բուլղար արվեստագետները ամենուրեք արժանացան ջերմ ընդունելության և նրանց տված համերգներն անցան բացառիկ հաջողությամբ:

Ինչպես տասնօրյակի մասնակիցները, այնպես էլ բուլղարահայ տուրիստները այցելեցին Ս. Էջմիածին և ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից:

Բուլղար բանաստեղծի արձանը Երևանում.— Հունիսի 2-ին, բուլղարական մշակույթի տասնօրյակի օրերին, Երևանում տեղի ունեցավ բուլղար հայտնի բանաստեղծ Պեյո Յավորովի արձանի հանդիսավոր բացումը: Արձանը կանգնեցված է նույն բանաստեղծի անունը կրող հայկական միջնակարգ դպրոցի բակում: Արձանի հեղինակն է բուլղարահայ հայրենադարձ, արվեստի վաստակավոր գործիչ Գ. Ահարոնյանը:

Արձանի բացման հանդեսին բուլղար դերասաններ Ց. Կուզմանովան և Դ. Վազևը արտասանեցին Պ. Յավորովի «Հայերը» հայտնի բանաստեղծությունը:

Մայրենի լեզվի դասավանդումը բարելավելու հարցը.— Վաղուց ի վեր Երևանում լույս է տեսնում «Սովետական մանկավարժ» ամսագիրը, որը Հայաստանի լուսավորության մինիստրության ամսագիրն է: Վերջերս ամսագրի խմբագրությունը սկսել է հրատարակել մի պարբերական հանդես, որը կոչվում է «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում»: Լույս է տեսել հանդեսի առաջին համարը, որի խմբագրականում ասված է.

«Ի դեմ մեր հանդեսի Հայաստանի, ինչպես նաև եղբայրական հանրապետությունների հայկական դպրոցների հայոց լեզվի և գրականության ուսուցիչները և մայրենի լեզվի ուսուցումը բարելավելու հարցերով շահագրգռված մարդիկ կունենան իրենց հուսալի բարեկամն ու խորհրդատուն, իրենց մտքերի ու խոհերի հավաքական արտահայտիչը»:

Հանդեսի հրատարակման առթիվ ողջույնի խոսք են տպագրել Մարտիրոս Սարյանը, Ստեփան Զորյանը, Գուրգեն Մահարին, Պարույր Սևակը: Հանդեսն ունի փորձի փոխանակման, հիշարժան տարեթվերի, արտադասարանական աշխատանքների և սխրագործահայ կյանքի, գրախոսության և քննադատության բաժիններ, ուր զետեղված են հոդվածներ ու նյութեր մանկավարժներին հետաքրքրող խնդիրների շուրջը:

«Միտք» հրատարակչությունը.— Արդեն բավական ժամանակ է, ինչ Երևանում ստեղծված է «Միտք» հրատարակչությունը: Այն լույս է ընծայել մի շարք հետաքրքրական գրքեր, որոնց թվում Է. Հարությունյանի «Փիլիսոփայական միտքը Հայաստանում 19-րդ դարի առաջին կեսում», Լ. Ղարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը», Ա. Եսայանի «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը» և այլն:

Մոտ ապագայում լույս է ընծայվելու Ա. Սիմոնյանի «Երևան» հատորը, որը պարունակելու է հետաքրքրական նյութեր պատմությանը վերաբերող: Հրատարակվելու են նաև Հ. Գաբրիելյանի «Քննական ակնարկ Հայաստանի պատմա-փիլիսոփայական մտքի» և Հ. Աճառյանի «Իմ հիշողությունները»:

Հայաստանի երիտասարդ երաժշտագետները.— Վերջերս տեղի ունեցավ Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության համագումարը, որին հրավիրված էին մասնակցելու երաժշտագետներ Մոսկվայից, Կիևից, Թբիլիսիից, Էստոնիայից, Լիտվայից:

Վարչության հաջորդական նիստերին, որոնք տեղի էին ունենում Կոմպոզիտորների տան դահլիճում, երաժշտասեր հասարակության մասնակցությամբ, կատարվեցին և քննության առնվեցին երիտասարդ կոմպոզիտորների մի ամբողջ շարք նոր ստեղծագործություններ:

Բացառիկ հետաքրքրությամբ անցավ Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում տրված հաշվերգը՝ ՍԱՀՄ ուսդիոյի սիմֆոնիկ նվագախմբի մասնակցությամբ: Համերգի ծրագիրն ամբողջովին կազմված էր երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործություններից: Կատարվեցին Լենինգրադի կոնսերվատորիայի շրջանավարտ Ստեփան Շաքարյանի կոնցերտը՝ գրված նվագախմբի համար, Թբիլիսիի կոնսերվատորիայի սան Էրիկ Հարությունյանի փողային կոնցերտը, Գեղունի Չթչյանի սոնատների ցիկլը՝ գրված Չարենցի, Շիրազի, Սևակի բանաստեղծությունների տեքստերով և Յուրի Գևորգյանի 3 մասից բաղկացած սիմֆոնիան՝ գրված Ե. Չարենցի պոեմների բովանդակությամբ:

Համերգներից հետո քննության առնվեցին կատարված գործերը: Նշվեց, որ մի շարք գործեր ոչ միայն երիտասարդ հեղինակների, այլ ժամանակակից երաժշտության նվաճումներ են: Դրանց թվում պետք է համարել Էդգար Հովհաննիսյանի «Հավերժական կուռք» բալետը, Է. Խաղդոդաղորեանի սիմֆոնիան, Տիգրան Մանսուրյանի և Լմին Արիստակեսյանի ստեղծագործությունները:

Տաղանդավոր կոմպոզիտորի ծննդյան 80-ամյակը.— Երևանի երաժշտասեր հասարակությունը ջերմորեն նշեց սովետահայ տաղանդավոր կոմպոզիտոր, վաղամահիկ Աշոտ Սաթյանի ծննդյան 80-ամյակը: Սաթյանը ծնվել է 1908 թվականին Ջանգեզուրի Խնձորեսկ գյուղում և մահացել 1959 թվականին՝ 53 տարեկան հասակում:

Աշոտ Սաթյանը հեղինակն է մի ամբողջ շարք սիմֆոնիկ և համերգային ստեղծագործությունների, մասսայական երգերի, քայլերգերի, այդ թվում «Ես իմ անուշ Հայաստանի» երգի: Նրա ստեղծագործությունների ակունքները խորապես ժողովրդական են, ճշմարտացի, հմայիչ, հուզող: Նա խոշոր անհատականության տեր արվեստագետ էր, սեփական ոճի տեր երգահան: Նրա ստեղծագործությունները խոշոր ավանդ են հայ երաժշտության գանձարանում և հիանալի ժառանգություն գալիք սերունդներին:

Կոմպոզիտորի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում կայացավ հանդիսավոր երեկո. ներկա էին կառավարության անդամներ, արվեստագետներ և մեծ թվով բազմություն:

Հայաստանի նկարչական դպրոցները.— Ինչպես երաժշտությունը, այնպես էլ նկարչությունը մեծ տարածում ունի Հայաստանում: Բազմաթիվ երիտա-

սարդներ իրենց նվիրում են գեղեցիկ արվեստին, ընտրելով նկարչությունը և քանդակագործությունը:

Այժմ Հայաստանում, բացի Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտից, ուր գործում են գեղանկարչության և քանդակագործության ֆակուլտետներ, կան նկարչական 4 մասնագիտական ուսումնարաններ: Դրանցից 2-ը գտնվում են Երևանում, մեկը Լենինականում և մեկը Կիրովականում:

Ուսումնական տարվա ավարտման առթիվ Լենինականում կազմակերպվել էր նկարչական դպրոցների սաների նկարչական գործերի ցուցահանդես, ուր ներկայացված էին 170 նյութեր ու քանդակներ:

Պոլիտեխնիկական ինստիտուտի ընդարձակումը.— Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, պետական համալսարանից հետո, երկրորդ խոշոր ուսումնական հաստատությունն է Հայաստանում: Տարեցտարի ընդարձակվում և բարեկարգվում են այս հաստատության շենքերը, ավելանում ուսանողների թիվը, ստեղծվում ուսումնական նոր հարմարություններ

Ներկայումս կառուցվում է ինստիտուտի համար մի նոր շենք, որը լինելու է վեցհարկանի: Շենքում տեղավորվելու են ինստիտուտի բոլոր լաբորատորիաները, որոնց ունեցած հարմարությունները այժմ շատ սահմանափակ են: Նոր շենքում լաբորատորիաները կհագեցվեն նոր գործիքներով ու պիտույքներով և կունենան բոլոր հարմարությունները ուսումնական կարիքները հոգալու համար:

Երևանի կոնսերվատորիայի նոր շենքը.— Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճի դիմացի պարտեզի ետևում, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի կողքին, կառուցվում է Երևանի կոնսերվատորիայի նոր շենքը: Շենքի ճարտարապետական նախագծի հեղինակն է հանգուցյալ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի որդին՝ Գևորգ Թամանյանը:

Շենքը լինելու է քառահարկ, հայկական ճարտարապետության ոճով: Այն կունենա 80 դասասենյակ, առանձին գրադարան-ընթերցարան, ձայնադարան, 400 տեղանոց հանդիսասրահ համերգների համար: Նախատեսված են առանձին դահլիճ երգչախմբի և նվագախմբի փորձերի համար, երաժշտական գործիքների նորոգման արհեստանոց, կինո-ցուցադրումների փոքրիկ սրահ և օժանդակ այլ հարմարություններ:

Շենքի կառուցումը նախատեսվում է ավարտել 1967 թվականի վերջերին:

Երկաթուղայինների կուլտուրայի պալատը.—Կայարանամերձ հրապարակում ավարտվեց Երևանի երկաթուղային կայարանի աշխատողների կուլտուրայի պալատի կառուցումը: Շենքը կառուցված է նարնջագույն տուֆով, թե՛ արտաքուստ և թե՛ ներքուստ շատ գեղեցիկ է ու հարմարավետ: Ունի հանդիսասրահ 550 մարդու համար, ընդարձակ ճեմասրահ, խաղերի և պարապմունքների առանձին սենյակներ, ընթերցասրահ:

Հայաստանի երկաթուղային մեծ կայարաններն ունեն իրենց աշխատողների համար մեծ կամ փոքր ակումբներ: Նրանց մեջ ամենից մեծն ու գեղեցիկը Երևանի և Լենինականի կայարանների աշխատողների ակումբներն են, որոնք ամենայն իրավամբ կոչվում են կուլտուրայի պալատներ:

Նոր ավտոկայան.— Երևանը ավտոմոբիլային երթևեկությամբ կապված է ոչ միայն հանրապետության բոլոր շրջանային կենտրոնների, այլև Անդրկովկասի բոլոր հայաբնակ քաղաքների հետ: Ամառն ամիսներին ավտոբուսները մեկնում են Սոչի, մինչև Սոչի և Կիսլովոդսկ: Օրական մի քանի հազար ուղևորներ է ճանապարհում և ընդունում Երևանի ավտոկայանը: Ամառն ամիսներին ուղևորների թիվը ավելի քան կրկնապատկվում է:

Հին ավտոկայանը, որը տեղավորված էր Ծաղուկյան հրապարակի վրա, անզոր էր բավարարելու երթևեկության պահանջները: Կառուցվեց և վերջերս շահագործման հանձնվեց ավտոկայանի նոր շենք, որը գտնվում է Էջմիածնի խճուղու վրա, Կիլիկիա թաղամասում:

Նոր ավտոկայանը շատ գեղեցիկ է, ընդարձակ և հարմարավետ: Ուղևորների համար ստեղծված են ամեն հարմարություններ: Կայանը մեկ ժամում կարող է ընդունել կամ ճանապարհել 20 ավտոբուս: Ամառն ամիսներին նա կարող է օրական սպասարկել մինչև 10 000, իսկ ձմռան ամիսներին՝ մինչև 5 000 ուղևորների:

Քանաքեռի միջնակարգ դպրոցի 100-ամյակը.— Լրացավ Քանաքեռի Խ. Աբովյանի անվան № 84 միջնակարգ դպրոցի հիմնադրման 100-ամյակը:

Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը շատ էր երազում հայրենի գյուղում բացել դպրոց: Սակայն այդ երազը իրականացավ միայն նրա մահվանից հետո:

Ներկայումս դպրոցը տեղավորված է նորակառույց գեղեցիկ շենքում, ունի ուսումնական բոլոր հարմարությունները և շուրջ 1 200 երկսեռ աշակերտություն: Վերջին 30 տարում դպրոցից շրջանավարտ են եղել 850 հոգի:

Հարյուրամյակի կապակցությամբ դպրոցը և նրա ուսուցիչներից 3 հոգի պարգևատրվեցին Հայաստանի Գերագույն սովետի նախագահության պատվոգրերով: